150
163-4п
№ 493

150
163-4п.

1 2

3 4

2

2004

[illegible] [illegible]
[illegible] [illegible]
[illegible] [illegible]
[illegible] [illegible].
Ի [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible]:– Ի 13 Յու-
[illegible] 1865 ամի. Ի [illegible]
[illegible]:–
[illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] =
[illegible] –



2026
244-Ձ

Առաջին մասն փիլիսոփայութեան

որ է՝

# ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

համառօտեալ ՚ի բուն Տրամաբանութենէ Ա. Ճաբան վարդապետին Կովդնոյ ՚ի 1830. ամի

Աշխատասիրութեամբ Հօր Յովսեփայ գիտնական Վարդապետի Տէր Աւագեան, Արցախեցւոյ, որ է միաբան սրբոյ վանիցն Գանձասարու՝ եղելոյ ՚ի Խնաչէն գաւառակին Արցախայ.

Ի Հայրապետութեան Տն. և Տն. Յովհաննու Կարբեցւոյ Սրբազնասուրբ Կաթուղիկոսի ամ. Հայոց, և Ասպետի՝ Հրամանաւ Տն. Բաղտասարայ Ասպետափառ Մետրապօլտի և Բարձր Սրբազան Արհիեպիսկոպոսի Հասան Ջալալեանց։

Ի Տպարանի Միձակաւոր Առաջնորդին Ղարաբաղու Բարձր Սրբազան Մետրապօլիտին Բաղտասարայ.

1840. ՇՈՒՇԻ 22 [illegible]

ИМЕНИ А. МЯСНИКЯНА

Հրամայեցաք Տպագրել

Վիճակաւոր Առաջնորդ Ղարաբա-
ղու Արք Եպիսկոպոս և Աստեա Մետ-
րապօլիտ Բաղտասար Հասան Ջա-
լալեանց. ՚ի 15. փետրվարի 1840 ամի.
՚Ի Ներքդաքաղաքն Շուշի, որ
յԱրցախ.

ւոր և 'ի գրաւոր. զորոց վերադրեն ասացաք:

Երկրորդ՝ յեզր անպարունակ. որ միով նշանաւ զմի ինչ նշանակէ. որպէս սպիտակութիւն. և 'ի պարունակ. որ զբազումնշանս, կամ զբազում իրս նշանակէ պարունակելով: Ոմն ասի պարունակ ըստ ձայնին և ոչ ըստ իրին. որպէս մարկոս տուղղիոս կիկերոն. զի զմի մարդ նշանակէ: Ոմն պարունակ ըստ իրին և ոչ ըստ ձայնին. որ գոն՝ բանաստեղծ. զի զերկու ինչ ընդ միով ձայնիւ ըմբռնէ. զմարդ և զբանաստեղծական արուեստ: Եւ ոմն պարունակ ըստ ձայնին և ըստ իրին. որպէս վերգիլիոս բանաստեղծ. զի զերկու ինչ երկոքումք ձայնիւ բացատրէ: Եզրն 'ի կողմանէ իրին նշանակելոյ՝ բաժանի նախ յեզր դրական. որ զիրն նշանակէ, որպէս մարդ. և 'ի բացասական. որ ոչ զիրն, այլ՝ զչէութիւն իրին նշանակէ, որպէս, կուրութիւն, ոչինչ, ոչ մարդ, ոչ քար: Եւ այս եզերք դրականք՝ բացասական մասնկամբք տրամակայեալք ասին անորոշք: Ոմանք

յեղերաց են բացասականք ըստ ձայնին և դրականք ըստ իմացման, որպէս անմեղութիւն, անչափութիւն, անմահութիւն, անհնութիւն։

Ոմանք են դրականք ըստ ձայնին և բացասականք ըստ իմացման. որպէս, մահկանացու. ապականացու։ Ոմանք ըստ երկոցունց ևս բացասականք. որպէս. ամբարիշտ. անիրաւ։

Երկրորդ՝ բաժանի յեղը նախահայեաց և յեղը երկրորդահայեաց։ Նախահայեացն է, որ նշանակէ զիրն ըստ որպիսութեան. զոր ունի յինքեան կամ 'ի բնութեան իւրաց. որպէս կենդանի. մարդ. առիւծ։ Երկրորդահայեացն է, որ չկայ 'ի բնութեան իւրաց. այլ միոջ հնարեալ լինի 'ի բնական էակս. որպէս սեւ, տեսակ, ենթակայ, ըստորոգեալ։

Երրորդ բաժանի 'ի յատուկ և 'ի հասարակ։ Յատուկն է, որ զմիոջէ միայն ասի. կամ յանուանադրութենէ, հոմերոս, արիստոտել. կամ 'ի սովորութենէ, որպէս առաքեալն նշանակէ զսուրբն պօղոս և փիլիսո՛փայն զարիս-

տոտել: Կամ յառադրուէ, որպէս՝ այս մարդ, որդի կուսին: Հասարականն է, որ զբազումս նշանակէ. որ զոն, ժողովուրդ, մարդ, ձի, կենդանի:

Նորին հասարակ բաժանի 'ի հաւաքական. որ զբազումս հաւաքապէս նշանակէ. որպէս քաղաք, հօտ, շեղջ, ծով:

Կամ 'ի տրամաբաշխական. որպէս այն՝ որ նշանակէ զբազումս, զի զիւրաքանչիւրոցն սորոգի. որպէս մարդն նշանակէ զամ մարդ, զիւրաքանչիւրոցն ասի:

Նորին հասարակ տրամաբաշխականն. բաժանի 'ի փաղանուն, 'ի համանուն. և 'ի համեմատանուն:

Փաղանունն է, որ 'ի բազումս զբանն պարզապէս մի և նոյն նշանակէ. որպէս մարդն 'ի պետրոս և 'ի պօղոս զնոյն նշանակէ: Համանունն է, որ 'ի բազումս զբանս ամենևին զայլ և այլ նշանակէ. որպէս շունն ասի զաստեղէ զձկանէ և զընտանի շանէ: Համեմատանունն է, որ նշանակէ զբանս (մի

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] :- ի 13 [illegible]
[illegible] 1865 ամ. ի [illegible]
[illegible] :-
[illegible]
[illegible] =
[illegible] -



Առաջին մասն փիլիսոփայութեան
որ է՝

# ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

համառօտեալ ՚ի բուն Տրամաբանութէ̃
Աճաբեան վարդապետին Կովդնոյ
՚ի 1830. ամի

Աշխատասիրութե̃ Հօր Յովսեփայ
գիտնական Վարդապետի Տէր Առա-
գեան. Արցախեցւոյ, որ է միաբան
սրբոյ վանիցն Գանձասարու՝ եղելոյ
՚ի խաչէն գաւառակին Արցախայ.

՚ի Հայրապետութե̃ Տ͠ն և Տ͠ն Յով-
հաննու Կարբեցւոյ Արքագնասուրբ
Կաթուղիկոսի ա͠մ Հայոց, և Ասպետի՝
հրամանաւ Տ͠ն Բաղդասարայ Աս-
պետափառ Մետրապօլտի և Բարձր
Արքազան Արքեպիսկոպոսի Հասան
Ջալալեանց.

՚ի Տպարանի Միձակաւոր Առաջ-
նորդին Ղարաբաղու Բարձր Արքա-
զան Մետրապ[illegible]պատարայ.

1840. ՎՐԱՐԱ[illegible] ռամնե.

ИЧНАЯ БИБ
ИМЕНИ А. МЯСНИ

Ընդրադարձ եզերք են, որք զմիմեանս մակաբերեն, որպէս մարդ և բանական. զի եթէ մարդ է, բանական է. և եթէ բանական է, մարդ է։

Երրորդ՝ բաժանի յեզր գերազանցական և յեզր ստորադական. Գերազանցականն է, որոյ նշանակեալն փակի յամենայն տարբերութիւնս նշանակելոցն այլովք եզերօք, որպէս էակ, մի. իր, իմն, Ճշմարիտ. բարի։ Օրօրինակ, էակն բաժանի 'ի գոյացութիւն և 'ի պատահումն. գոյացութիւն է ըստ ինքեան կայացեալ. պատահումն է յայլում կայացեալ և այլն։

Ստորադական եզրն է, որ նշանակէ զսեռ և զտեսակ ինչ իրաց անխառն յայլոց սեռից և տեսակաց. որպ. մարդ. կենդանի. գոյն. սպիտակութիւն. ձև. եռանկիւն։

## Դրակ երրորդ։

### Յաղագս յատկութեանց եզերաց։

Եզերաց հինգ են յատկութիւնք. ենթադրութիւն. լայնումն, սեղմումն, օտարացուցումն և յորջորջումն։ Նախ ասասցուք զենթադրութենէ, որ է առաջին

և գլխաւոր յատկութիւն եզերն և ապա Ղայլոց։

## Յօդուած առաջին։

### Յաղագս ենթադրութեան

Ենթադրութիւն երեք ինչ խնդրէ, նախ թէ զինչ իցէ։ Երկրորդ՝ թէ քանիպատիկ իցէ։ Երրորդ՝ թէ զինչ կանոնք իցեն նորա։ Ասն առաջնոյն ասելի է թէ ենթադրութիւնն սահմանի, դրութիւն եզեր փոխանակ իրիք. 'ի վերայ որոյ ճշմարտի. զի ըստ արիստոտելի, որովհետև անմարթ է 'ի վիճաբանելն՝ զեզերս 'ի մէջ բերել, վարեմք զեզերս փոխանակ իրաց. որպէս որք առնեն դհաշիւս, զթուագիրս փոխանակ դրամոց։ Այս վարումն կոչի ենթադրութիւն։ Յետին մասըն, 'ի վերայ որոյ ճշմարտի. խորհրդով յաւելու, զի ծանիցես, եթէ առ ենթադրութիւն եզերն հարկ է, թէ նշանակելի ինչ համեմատեսցի նմա. ուստի եթէ ոչինչ նշանակելի գոցի

Համեմատ եղերին, բանն ասի լինիլ
զենթակայէ, որ ոչինչ ենթադրէ։
Որպէս ես եթէ ասացից, Պղատոն ելս
խօսի։ Զիացուլք մարտնչին։ Այս-
պիսի նախադասութիք են զենթակայէ.
որ ոչինչ ենթադրէ։ Զի յիրաց աս-
տի, որք բացատրին եղերօքս. պղա-
տոն և ձիացուլ, առաջինն ոչինչ է
վասն ժամանակի զօրմէ խօսիմ, և եր-
կրորդն գուցէ ոչ եղև երբէք։
Ենթադրութին բաժանի նախ՝ ’ի նիւ-
թական և ’ի տեսական։ Նիւթական
ենթադրութին է դնումն եղեր փոխա-
նակ իւր. ո՛րգոն, մարդն է ձայն. սի-
րեմն է բայ։ Տեսական ենթադրութին
է դնումն եղեր փոխանակ նշանակե-
ցելոյն իւրոյ. ո՛րգոն մարդն է տրա-
մաբան։
Երկրորդ՝ բաժանի յենթադրութիւն
պարզ, և յիրական։ Պարզ ենթադրու-
թիւնն է, որ լինի միայն անմիջապէս
յորժամ ասեմք մարդն էտեսակ. բա-
պխտակն է պատահումն. մարդն և տե-
սակն ենթադրեն պարզապէս։ Քան-
զի մարդն առեալ լինի փոխանակ

մարդկային բնութեան. և ոչ փոխանակ անհատից. և սպիտակն միայն վասն սպիտակութեան. և ոչ վասն ենթակային։ Աւստի ոչ արժէ հետևութիւնս, մարդն է տեսակ. իսկ պետրոս է մարդ. ուրեմն պետրոս է տեսակ. որ է սուտ։

Այլ՝ յորժամ ասիցեմք մարդն է կենսաւոր, ենթադրութիւն լինի իրական. զի մարդն անդէն առեալ լինի փոխանակ իւրոյ նշանակեցելոյն. եթէ միջականի և եթէ անմիջականի, զի ոչ սոսկ բնութիւն, այլ և ամենայն անհատք մարդոյ են կենսաւորք։

Երրորդ՝ բաժանի ենթադրութիւն ՚ի հաւաքական, ՚ի տրամաբաշխական. և ՚ի զատական։ Հաւաքական ենթադրութիւն է դնումն հասարակ եզեր փոխանակ նշանակելոցն հաւաքապէս առեալ, որպէս մոլորակք են եօթն. առաքեալք են ժբ։ Ենթադրութիւն տրամաբաշխական՝ է դնումն եզեր փոխանակ և ամ իւրաքանչիւր նշանակելոցն, որպէս մարդն է կենդանի. յորում մարդն ենթադրէ փոխանակ

ամենայնի և իւրաքանչիւրոցն։ Եւ սա բաժանի ՚ի լրացեալ և յանլրացեալ։ Լրացեալն է, որ իջանէ յիւրաքանչիւր անհատս։ Որպէս յայսմ, կենդադանին է զգայուն․ կենդանին ենթադրէ ոչ միայն փոխանակ ամենայն տեսակաց կենդանւոյն, այլ և փոխանակ իւրաքանչիւր նոցին անհատից։

Անլրացեալն է, յորժամ եզրն սեռական լինի փոխանակ իւրաքանչիւր տեսակաց․ և ոչ իւրաքանչիւր անհատից նոցա․ որպէս յորժամ ասի․ ամենայն կենդանի եղև ՚ի տապանն Նոյի։ ԱԾ զամենայն կենդանիս էած առ ադամ, դնել անուանս նոցա։ Աստի լրացեալ տրամաբաշխումն ունի ենթադրել զիւրաքանչիւրս սեռիցն․ իսկ անլրացեալն զսեռս իւրաքանչիւրոցն։ Ենթադրութիւնն զատական է, դնումն հասարակ եզեր փոխանակ ոմանց նշանակելոց միայն․ որպէս ոմն մարդ է ըսպիտակ։ Ենթադրութիւնն զատական բաժանի դարձեալ յանորոշ և յորոշեալ։ Անորոշն է առումն եզեր փոխանակ ոք և իցէ նշանակելոց իւրոց

անորոշակի. որպէս երիվարն է պի-տանի ի ճանապարհորդել դիւրաւ։ Այն աչք է հարկաւոր ի տեսանել. և ոմն նաւ է ի նաւարկել. զի ոչ ո-րոշակի այս կամ այն աչք. այս ինչ կամ այն ինչ նաւ են հարկաւորք։

Ենթադրութիւն զատական որոշեալ է առումն եղեր փոխանակ ոմանց ո-րոշ նշանակելոյ. որպէս յորժամ ա-սի, ոմանք ի մարդկանէ գտին զնոր աշխարհ. ոչ ո՛ և իցէ մարդիկ զա-տաբար առեալ՝ նշանակին. այլ որո-շեալ անձինք. կողոմբոս. և ամերիկոս վեսպուտիոս։

## Յօդուած երկրորդ։

Զինչ կանոնս ակնածէ յորոշել պէտքն ա-գրաւորին։

Ենթադրութիւն եղերն այլայլի երբե-մըն ըստ յարակցութեան փաղստորդական եղերաց. որք վասն այն կոչին նշանք. ոմանք են ընդհանուրք. որպէս ամ, ոչք. և ոմանք մասնաւորք. որպէս ո-մըն. ոմնոչ։ Այսոց [illegible] անգամ եղբն ամենեւին է աննշան։ Այսպէս այ-

7 / XI 1922

լուստ է որոշելի ենթադրութիւն։

Ապա հինգ կանոնք վ՟ն ենթադրութեց սահմանին. Նախ եզըն տրամակայեալ հանրական նշանաւ, ենթադրէ տրամաբաշխաբար կամ հաւաքապէս ըստ պահանջման միւսոյ եզեր, ընդ որում՝ յորի. որգոն՝ ամ՟ առաքեալք են ընտրեալք 'ի քրիստոսէ. ամենայն առաքեալք են երկոտասան.

Երկրորդ՝ եզըն տրամակայեալ մասնաւոր նշանաւ՝ ենթադրէ զատաբար. անորոշ կմ՟ որոշակի, ը՟ պահանջման եզերն՝ ը՟ որում յարի. որգոն՝ ոմանք մարդիկ են սեաւ. ոմն աչք է հարկաւոր առ տեսութիւն.

Երրորդ՝ ենթակայն նախադասութեն ոչինչ նշանաւ տրամակայեալ 'ի նիւթում բնականի կամ իբր բնականի, ենթադրէ ընդհանրապէս. իսկ 'ի նիւթում ներ ընդունականի՝ զատաբար։ Նախադասութիւն է 'ի նիւթում բնականի, յորժամ ստորոգեալն 'ի բնէ յարմարի ենթակային. որպէս այս, մարդն է բանական։ Իսկ է իբր 'ի նիւթում բնականի, յորժամ ստորո-

գեալն իրօք ներընդունական՝ ասա-
ցեալ լինի զենթակայէ այնպէս, որ-
պէս ասին ընական ստորոգեալք ա-
ռանց ներընդունականութե՟ ինչ նշանի.
որպէս այսոքիկ, Հրեշտակք են չար.
մարդիկ են գիտունք: Բայց նախադա-
սութիւնն է յատկապէս ՚ի ներընդու-
նական նիթում՝ յորժամ ստորոգեա-
լըն. կամ ՚ի շաղկապն է նշան ինչ
ներընդունականութե՟. որգոն ժամա-
նակ անցեալ կամ ապառնի: Ներկայ
կամ անցեալ կամ ապառնի ժամանակ
ունօղ բայք, որպիսի են սոքին. Հրեշ-
տակք մեղան. Հրեշտակք պահպանեն
զմարդիկ. եւն։ Օրդ՝ ՚ի սոսին ենթա-
կայն ենթադրէ զատաբար։
Բայց ՚ի նախադասութե՟, որոյ ստորո-
գեալն ստորոգի իբրև ՚ի բնէ պատ-
շաճեալ ենթակային. որոշի ենթա-
կայն առ ենթադրութե՟ ընդհանրական.
զի որ ինչ ՚ի բնէ պատշաճի տեսակին.
պատշաճի և ա՟մ անհատից նորա։
Ուստի ճշմարիտ է նախադասութիւնս,
Հրեշտակք են անմարմինք. զի հաւա-
սար է այսմ, ա՟մ Հրեշտ՟կ են անմարմինք։

Բայց այս է սուտ. հրեշտակք են չար·
իբր թէ ամենայն հրեշտակք են չար։
Եւ սմին հակառակ այս է ճշմարիտ,
հրեշտակք պահպանեն զմարդիկ, ոչ՝
ոմանք հրեշտակք։ Նախադասութիւնք
անորոշք յուսումնական նիւթս համա-
գէտ են ընդհանրականաց. իսկ 'ի
պատմականս՝ մասնաւորայ։ Չորրորդ
կանոն. 'ի ստորասական նախադասութեան
ստորոգեալն ենթադրէ միշտ զատա-
բար, գոնէ զօրութեամբ նախադասութեան.
որպէս յայսմ, մարդն է կենդանի։
Կենդանին ենթադրէ միայն փոխա-
նակ ուրումն։ Վասնզի առ 'ի ստու-
գութեամբ ասել զմարդոյ թէ է կեն-
դանի, ոչ է հարկ թէ լիցի ամե-
նայն կենդանի. այլ բաւական է թէ
իցէ ումն 'ի կենդանեաց։ Բայց 'ի բա-
ցասական նախադասութեան ստորոգեալն
միշտ ենթադրէ ընդհանրապէս. որ-
պէս յայսմ, մարդն ոչ է քար։ Այս կա-
նոն պիտանի է յոյժ 'ի հաւաքաբանու-
թիւնս. ուստի և զգուշութեամբ։
Հինգերրորդ կանոն ընդ հանրա-
գոյն. 'ի նախադասութեան ենթակայն են-

թադրէ ըստ պահանջման ստորոգե-
լոյն. ապա վասնզի եղերք թուականք
պահանջեն զենթադրութիւն հաւաքականս.
և եղերք բնականք զտրամաբաշխա-
կան. եղերք ներընդունականք ըզ-
զատական. եղերք հարկաւորք զանորոշ
'ի յարիլն է ենթակայ, որոշեն զնա առ
այնպիսի ենթադրութիւնս, ոչ յայսմ՝ մոլո-
րակք են եօթն. ենթադրէ ենթակայն
հաւաքաբար. և յայսմ, մոլորակք են յերկնա-
ին նիւթոյ, ենթադրէ տրամաբաշխաբար.
'Ի սմին՝ մոլորակք երբեմն խաւարեն.
ենթադրէ զոբար: Նոյն 'ի սմին՝ դիմա-
հար մասին պահանջի առ խաւարումն,
ենթադրէ անորոշ. զի այնպէս պա-
հանջեն ստորոգեալք:

## Յօդուած երրորդ:

Յաղագս այլոց յատկութեանց. որք են Լայնութիւն, Սեղմութիւն, Օտարացութիւն, և Յորջորջութիւն.

Լայնութիւն է տարածութիւն յընդարձա-
կագոյն նշանակութիւն. ոչ յորժամ ասի,
հեզք ժառանգեսցեն զերկիր. ձայնս
հեզք յուժգնութէ ստորոգելոյն ենթա-
դրէ միայն զապագայս. բայց առեալ

լինի փոխանակ ամենայն ժամանակի։
Սեղմումն հակառակ այսմ, և ամփոփումն եղեր յընդարձակ նշանակութ՟է յանձուկ, որպէս այս, իշխան դիւրահաւան է անդութ. ձայնս դիւրահաւան ամփոփէ զիշխանդ անուն առ ոմանս միայն։ Այնպէս կենդանին սեղմի առ մարդիկ՝ յասելն զեւայէ՝ մայր ա՟մ կենդանեաց. և այս. տեսցէ ա՟մ մարմին զփրկութ՟ի ա՟յ. հաւատամք ըղմարմնոց յարութ՟ե։
Օտարացուցումն է փոխադրութիւն եղեր յիւրմէ նշանակութ՟է ՚ի նշանակութ՟ի օտար. զք՝ ՙՅ՟ն ասի, արեգակն արդարութ՟ե. արդարութ՟ին ասի առ կենաց. և ահա այսպիսի եղերք յիւրեանց նշանակութ՟է կապին ընդ այլ նշանակութեանց։
Յորջորջումն ՚ի համարի է յոյժ։ Սահմանի՝ մերձեցուցումն միոյ եղեր առ այլ. ՙՔանզի ՚ի նախադասութ՟ե ստորոգեալն որպէս թէ մերձեցուցանի յենթակայն. որպէս յորժամ ասեմք, աստուած է արդար, արդարն մերձեցուցանի յեղըս աստուած։

Բաժանի 'ի նիւթական և 'ի տեսական. զի 'ի թանձրացեալ եզերս կրկին է նշանակելն, նիւթական և տեսական։ Տեսականն է ինքն տեսակն նշանակեալ եզերբ։

Իսկ նիւթականն է ենթակայն, որ ունի զայնպիսի տեսակ. որպէս ի ձայնս մարդ, մարդկութիւն է տեսական նշանակեալն, իսկ անձն որ ունի զմարդկութիւն, է նշանակեալ նիւթական։

Այնպէս և 'ի ձայնս սպիտակ, սպիտակութիւն է տեսական նշանակեալ. իսկ ենթակայն, որ ունի զսպիտակութիւն. է նիւթական։

Արդ՝ յորջորջումն է տեսական, յորժամ ստորոգեալն անկանի 'ի վերայ տեսականի ենթակային. որպէս յորժամ ասեմք, բժիշկն բժշկէ, զի ո՛չ բժշկէ՝ բայց եթէ տեսականապէս ըստ որում բժիշկ։ Իսկ է նիւթական. յորժամ ստորոգեալն անկանի 'ի վերայ նիւթականի ենթակային. որպէս մինչ ասեմք, բժիշկն երգէ, զի ո՛չ երգէ, ըստ որում բժիշկ, այլ ըստ որում երաժիշտ։

Երեք են գլխաւոր կանոնք յորջորջման
Առաջին՝ յորժամ ենթակայն նախա-
դասուն է եզր գոյական ընդ ածա-
կանի, եթէ ածականն իցէ յառաջ քան
զգոյն, յորջորջումն լինի նիւթական.
որպէս յորժամ ասեմք, մեծն աղեք-
սանդր եղև աշակերտ արիստոտելի.
աշակերտն ասի զաղեքսանդրէ, ոչ թէ
որում մեծ. այլ միայն, որպէս թէ
այս իցէ միտ բանին. աղեքսանդր, որ
այլուստ մեծ, եղև աշակերտ արիստո-
տելի:

Բայց թէ ասիցի աղեքսանդր եղև
մեծ աշակերտ արիստոտելի, յորջոր-
ջումն լինի տեսական. զի աշակերտն
ասի զաղեքսանդրէ, ըստ որում մեծ:
Որպէս թէ այս իցէ միտ բանին, ա-
ղեքսանդր եղև մեծ 'ի մէջ աշակեր-
տացն արիստոտելի:

Երկրորդ կանոն: 'Ի նախադասուն,
որոյ ենթակայն է եզր թանձրացեալ,
յորջորջումն լինի նիւթական. զի ըս-
տորոգեալն անկանի 'ի վերայ նիւթա-
կանին ենթակայի. գոնէ ըստ լոճի-
գական պահանջման. որպէս մինչ ա-

սեմք. մարդն լինի սպիտակ, միտ բա֊
նին է այս. ենթադրեալն՝ որ ունի
զմարդու՟ն, ընդունի և զսպիտակու՟ն։
Յաղագս այսր կանոնի. այս նախադա֊
սու՟ն է սուտ. մարդն եղև ա՟ծ. որ բե֊
րէ զայսպիսի իմացուած. ենթադրեալն
ունօղ զմարդկու՟ն ընկալաւ և զա՟ծու՟ն։
Նոյն այս նախադասու՟ն է ճշմարիտ.
ա՟ծ եղև մարդ. որ բերէ զայսպիսի ի֊
մացուած. ենթադրեալն ունօղ զա՟ծ֊
ութե՟ն, ընկալաւ և զմարդկու՟ն։
Երրորդ կանոն։ Թուական անուանք
բացարձակք մերձեցուցեալք ՚ի գո֊
յական. որպէս երկու, երեք, չորս եւն
յորջորջեն եթէ տեսակապէս. և ե֊
թէ նիւթապէս. վասնորոյ բազմա֊
պատկեն զտեսակն և զենթադրեալն։
Բայց մերձեցուցեալք յածական անո֊
ւանս, յորջորջեն միայն նիւթապէս. և
վասն այն՝ ոչ բազմապատկեն զտեսակն,
այլ զենթադրեալն։ Պատճառ կանոնիս
է զի գոյական անունն նշանակէ իբրև
գոյացու՟ն. որ յիւրմէ տեսակէ ունի
զգոլ և զմիու՟ն։ Աստի առ ՚ի բազ֊
մապատկու՟ն գոյական անուան, հարկ է

բազմանալ տեսակին։ Բայց անունն ածական նշանակէ զտեսակն իբրև եկամուտ ինչ ենթակային։ Աստի թէպէտ բացատրէ որոշակի զտեսակն և անորոշ զենթակայն, սակայն ենթադրէ յաւէտ փոխանակ ենթակային։ Սակս որոյ եթէ իցեն բազումք՝ որք ունիցին զնոյն տեսակ, անունն ածական, ընդ բազմանալ ենթակայիցն՝ բազմաւորակի ստորոգի։

Վասն այնորիկ ՚ի խստուե՛ բանի ճըշմարիտ է այս. յածականս են երեք ամենակարօղք, երեք յաւիտենականք։ Նոյն այս է սուտ. են երեք աստուածք։ Բայց քանզի արիանոսք ասէին, եթէ երեք են յաւիտենականք իբր դոյականաբար.՝ յայս միտ հերքեալ զնոսա սրբոյն աթանասի, եթէ ոչ են երեք յաւիտենականք, այլ մի միայն յաւիտենական։

## Դրակ չորրորդ։

Յաղագս հնգից եղերաց պորփիւրէ· որք են Սեռ. Տեսակ. Տարբերութիւն. Յատուկ և Պատահումն։ Սորա՝ կոչին սոքա Ներածութիւն պորփիւրի· եթէ ոչ համեմատէ երէ ծոյր ինչ տեղեկութեան սոցա, եթէ էառամէ տծէս ՚ի ծանօթութիւն պասն ստորոգութեանց արիստոտելի·

Սեռն է, որ պարունակէ զբազում տեսակս ընդ իւրև. որ՝ կենդանի։ Սահա կենդանին է սեռ, պարունակէ ՚ի ներքոյ իւր զմարդ, զձի, զոչխար, զգոմէշ, զջորի, և զայլ ամ կենդանիս։ Տեսակն է, որ պարունակէ ՚ի ներքոյ իւր զամ անհատս իւր, որ՝ մարդ. ահա մարդն է տեսակ, որ պարունակէ ՚ի ներքոյ իւր զմատթէոս, զմարկոս, զղուկաս, զյոհան, և զայլ ամ անհատս մարդոյ։ Տարբերութիւն է, որ տարբերէ զմի իր յայլմէ. որ՝ բանական, և խնձական։ Սահա բանականն և խընձականն են տարբերութիւնք. զի բանականն զմարդն յանբանից, և խխըն-

ջականն զձին յայլոց կենդանեաց որոշեն։ Յատուկն է, որ յատկացուցանէ զմի իր յայլմէ. ոպ՝ ծիծաղական, տիրասէր․ ահա ծիծաղականն և տիրասէրն են յատուկ, զի ծիծաղականն զմարդն յայլ կենդանեաց յատկացուցանէ, և տիրասէրն զշունն։ Պատահումն է, որ ընդունի զդիւրափոփոխումն, և ցուցանէ զայլ ինչ էութիւն պատահեալ, և եկամուտ իրին. ոպ՝ չար, բարի, փիլիսոփայ, եւն. վասն զի փիլիսոփայութիւն, չարութիւն, և այլք՝ պատահեալ են մարդոյ, և են եկամուտք, որք ոչ 'ի լինելն գոյացուցանեն. և ոչ 'ի չլինելն ապականեն. բայց տարբերութիւն, և յատուկն 'ի լինելն գոյացուցանեն, և 'ի չլինելն ապականեն. ոպ՝ անկարելի է մարդոյ առանց բանականութեան և ծիծաղականութեան լինիլ, որք են տարբերութիւն և յատուկ նորա։

Ոմանք 'ի պատահմանց յարմարին միայնոյ. բայց ոչ ամի, որպէս միայն մարդոյ պատշաճի լինիլ քրիստոնեայ. բժիշկ. փիլիսոփայ. այլ ոչ ամ մարդկան։ և ոմանք յարմարին ամի այլ ոչ

միայնոյ. որպէս լինելն երկոտանի պատ-շաճի ամ̃ մարդոյ. բայց ո՛չ միայնոյ: Իսկ ոմանք յարմարին ամ̃ի և միայնոյ, այլ ո՛չ միշտ. որպէս նստել և արթուն լինիլ յարմարի շնչաւորաց ամ̃ի, և միայնոյ, այլ ո՛չ միշտ:

Նաև գիտելի է աստ. զի սեռ և տեսակ պարտին լինիլ միշտ գոյական. որպէս կենդանին, մարդն են գոյականք. և ներհակ այսմ տարբերութ̃ին յատուկն և պատահումն պարտին լինիլ միշտ ածա-կան. որ̃՝ բանական մարդ. ծիծաղա-կան մարդ. բարի և չար մարդ: այս-պէս և գոյս պարտիս ճանաչել:

Արդ՝ կարևոր համարիմ դնել աստա-նօր զքանի մի 'ի սեռից, 'ի տեսակաց, 'ի տարբերութ̃եց, 'ի յատկաց և 'ի պա-տահմանց՝ առ 'ի դիւրաւ ճանաչումն նորավարժ համբակաց: Գոյնն է սեռ. և տեսակ գունոյն՝ սպիտակութ̃ին, սևութ̃ին, գորշութ̃ին, դեղնութ̃ին, կարմրութ̃ին, շիկութ̃ին, կապուտակութ̃ին, կանաչութ̃ին, ևն: Թռչու-չունն է սեռ, և տեսակ թռչնոյն է բազէ, ղօրղի, կաքաւ, արտոյտ, աղաւ-նի, լոր, ևն: Ամանն է սեռ, և տեսակ

ամանին՝ կարաս, սափոր, բղուղ, ափսէ, սկուտղ, բաժակ, ևն. Զգեստն է սեռ, և տեսակ զգեստու՝ շապիկ, կապայ, չուխայ, վարդիկ, բաճկոն, անդրաւորդիկ, շալվար, և այլք բազումք։ Տարբերութիւնք են սոքին անձնաւոր, անանձն, ոսկրաւոր, անոսկր, դրամակաւոր, անդրամակ, փետրաւոր, անփետուր, բանական, անբան, ևն։ Յատուկք են սոքին, ծիծաղականն մարդոյ, տիրասէր լինելն շան, ջերմ լինելն հրոյ, ննջական և արթուն լինելն կենդանեաց, և այլ ք բազումք։ Իսկ պատահումն են սոքին, կարմիր, ծիրանի, շէկ, դեղին, թուխ, սպիտակ, սեաւ, ճարտասան, փիլիսոփայ և այլ յոյժ բազումք։

## Պրակ հինգերորդ։

Յաղագս տասն ստորոգութեանց արիստոտէլեան որք են՝ Գոյացութիւն. Քանակութիւն. Առնչութիւն. Որակութիւն. Ներգործութիւն. Կրելութիւն. Ուր. Երբ. Կալ և Ունել։

Գոյացութիւն է էակ ըստ ինքեան ենթակայացեալ. որպէս ջուրն է գոյա-

ցուն ըստ ինքեան ենթակայացեալ. իսկ ցրտուն և խոնաւուն են պատահումն կայացեալ 'ի ջուրն. ապա ջուրն մնայ միայն ըստ ինքեան ենթակայացեալ: Որդ՝ հոգի, մարմին, կեցօղ, կենդանի, մարդ, ձի, ոչխար, հող, ջուր, օդ, հուր, ևն. են գոյացուն ըստ ինքեանց ենթակայացեալ:

Քանակութին է պատահումն տարածօղ իրին 'ի մասունս իւր. որպէս՝ գիծ, մակերևոյթ, և մարմին թղթոյ՝ տարածեն զմասունս թղթոյս. զի գիծն է երկայնուն. մակերևոյթն լայնուն, և մարմինն խորութն: Ուստի գիծ թղթոյ՝ երկարացուցանէ զթուղթս մակերևոյթն լայնացուցանէ, և մարմին խորացուցանէ:

Տեսակ քանակուն են՝ գիծ, մակերեւոյթ, մարմին, թիւ, ժամանակ. բան և շարժումն: Ոմանք 'ի սոցանէ շարունակք են. և ոմն տարորոշ և զատացեալ:

Շարունակք են, գիծն, մակերևոյթ, և մարմին, ժամանակ, բան, և շարժումն: գիծն, մակերևոյթն և մարմինն

շարունակեալք են. զի կապակցեալ են ընդ միմեանս, որպէս գիծ մակերևոյթ և մարմին. Թղթոյս են շարակցեալք ը̃ միմեանս։ Ժամանակն է շարունակ զի անցեալն և ապառնին շարունակին ներկայիւ։ Բանն է շարունակ. զի մասունք ա̃մ հնչմանց բարբառոյ և ձայնի շարունակին ընդ միմեանս. բան՝ կամ ասոտէն ոչ զշարամանութի̃ բառից. այլ զամենայն հնչմունս և զձայնս, որպիսիք են հնչմունք և ձայնք ջուրց գետոց, հողմոց որոտմանց և այլոց իրաց. կամ վանկից. որպէս մ̃տ թէ̃ ո̊ս գնա̃ ցեա̃լ է։ մասունք շարժմանց ևս են շարունակ, զ̃բ. ՚ի գնալն իմ ՚ի խցէ իմմէ մինչև յեկեղեցին, մասունք շարժման գնալոյս իմոյ շարունակին ընդ միմեանս. նոյնպէս կամ և զմասանց ամենայն շաժմանց։ Իսկ թիւն է տարորոշ և զատուցեալ. զ̃բ՝ մի. բ̃. գ̃. դ̃. ե̃. զ̃. և̃ա. են զատուցեալք և որոշեալք ՚ի միմեանց։

Արդ՝ յատուկ տեսակ քանակութե̃ են գիծն. մակերևոյթն, մարմինն, և թիւն զի սոքա ըստ ինքեանց տարածանին,

և տարածեն զմարմնեղէն գոյացուԹի։ Թուին ըստ ինքեան տարածի, և տարածէ զԹուելի իրս. որ՝ մի, երկու. երեք. չորս. հինգ. վեց. եօԹն. ուԹն. ինն. տասն. տասնմէկ. տասներկու. ևն. են ըստ ինքեան տարածումն Թուոյ. և տարածանեն զԹուելիս այսպէս, մին մարդ. երկու մարդ. երեք մարդ. չորս մարդ. ևն։

Իսկ ժամանակն, բանն, և շարժումն ոչ են յատուկ տեսակ քանակուԹեան, այլ անյատուկ տեսակ միայն ասին. զի ոչ տարածին ըստ ինքեանց, և ոչ տարածանեն զիրս. այլ ըստ այլոց տարածին. որ՝ ժամանակն ոչ տարածի ըստ ինքեան, այլ ըստ ժամանակաւորաց. և ոչ տարածէ ըզժամանակաւորս. որպէս տարածեն գիծն և մակերևոյԹն զմարմնեղէն գոյացուԹիւն։ Բանն ոչ տարածի ըստ ինքեան, այլ ըստ Թուոյ և ըստ ժամանակին. որ՝ հնչմունս՝ է ա կան. է երեք վանկ. և ըստ այսմ բանն վերաբերի 'ի Թիւ. իսկ մի 'ի վանկիցն ե-

րագագոյն արտաբերելի, և միւսն յամր. և ըստ այսմ վերաբերի 'ի ժամանակ։ Շարժումն ևս ոչ տարածի ըստ ինքեան, այլ ըստ այլոյ. որպէս ջերմացումն ջրոյ է շարժումն, որ ոչ տարածի ըստ ինքեան, այլ ըստ միջոյ. և ոչ տարածէ զջուրն. որպէս գիծն մակերևոյթն երկարացուցանեն, և լայնացուցանեն զիրս. սոյնպէս իմն և զշարժմանց գետոց, ծովուց, ծառոց, և այլոց բազմաց, որ ըստ միջոյ եղերաց. աստի անդ լինի շարժումն։ Որ կոչի եզր յորմէ, եզր առ որ։

Առնչութիւն է պատահումն, որոյ բոլոր գոյն է վերաբերումն առ այլս. որպէս հայրութիւն բոլոր գոյն է վերաբերութիւն առ որդին. և որդիութիւն բոլոր գոյն է վերաբերումն առ հայրն։ Առնչութիւն բաժանի 'ի գերազանցական, և 'ի ստորոգական. գերազանցական առնչութիւն է այն, որով տմ էակք հային առ միմեանս. վբ՝ հոգի, մարմին. մարմնաւոր, անմարմին. մահացու, անմահ. մեռեալ, կենդանի. արարիչ, արարած. խոնարհ, հպարտ. մեծ, փոքր. կարճ,

երկար. ատելի, սիրելի. խռովութիւն, հաշտութիւն. արդարութիւն, անիրաւութիւն. ջերմութիւն, ցրտութիւն. կամ թէ՝ մարդ, մարդութիւն. կենդանի, կենդանութիւն. եւն. ուստի չգտանի եակ ինչ, որ այսու կերպիւ ոչ հայիցի առ այլ: Նոյն ստորոգական առնչութիւն է այն, որ ենթայ մի ամբողջ ստորոգութիւն, որպ՝ հայրութիւն, որդիութիւն. փեսայութիւն, հարսնութիւն. ծնողութիւն, ծնելութիւն. տագրութիւն, եղբայրակնութիւն. վարդապետութիւն, աշակերտութիւն. աներութիւն, փեսայութիւն. եւն: Եւ սոքա ամենեքին ստորոգութենական են. զի պարտի մին 'ի տասանց ստորոգութեց ենթայ առնչութիւն. վասն զի գերազանցականն առ այլ և այլ սեռս ստորոգութեց վերաբերի. որպէս հոգի, մարմին առ գոյացութիւն. կարճութիւն, երկարութիւն առ քանակութիւն, արդարութիւն, անիրաւութիւն, ջերմութիւն, ցրտութիւն առ որակութիւն. և այլք առ այլս: Նոյն ստորոգութենական առնչութիւն է մասնաւոր, ընդ որով պարունակեալքն ոչ պարտին առ այլ սեռս ստորոգութեց վերաբերիլ այլ առ առնչութիւն միայն. ապա թէ ոչ՝ ոչ

Մնայ առնչութիւն. զի 'ի տասանց ստորոգութեանց միոյն է և առնչութիւն. որպէս ահա սորա՝ տալ, եղբայրակին. զուգանչ, անէր. քոյր, եղբայր. զօրք, զօրապետ. սանահայր, սանամայր, սանիկ. խնամիք. քեռի, քեռորդի. պապ, հանի, Թոռն. հօրեղբայրորդի. այր, կին. եպիսկոպոս, Թեմ. քահանայ. Ժողովուրդ. տէր, ծառայ. գաւառապետ, գաւառ. Թագաւոր, հպատակ. և այլք բազումք. որք միայն առ ստորոգութենական առընչութիւն վերաբերին, և ճանաչին վերաբերաբար:

Որակութիւն է պատահումն զանազանօղ իրին. կամ որակութիւն է այն, ըստ որոյ իրք ասին այսպիսի և այնպիսի, որպէս ջերմութիւն և ցրտութիւն պատահել քարից զանազան ցուցանեն զնոսա, զի ումն ասի ջերմ քար, և ումն ցուրտ քար, որք են զանազանք: Որակութիւնք են չորք զոյգ տեսակ. այսոքիկ՝ ունակութիւն, տրամադրութիւն, կարողութիւն, անկարութիւն. կիրք, և կրականն. ձև, և տեսակ: Ունակութիւն է, որ ցուցանէ զենթակայս իւր բարւոք և հաստատուն. որպէս առաքինութիւն ցու-

ցանէ զառաքինին լաւ և հաստատուն. ըստ այսմ են՝ հանճար, արութեան, շնորհք, յոյս, սէր, հաւատ, խնամք, ողորմութիւն. և այլք բազումք։ Եւ ներհակ այսմ Տրամադրութիւն է, որ ցուցանէ զեն-թակայս իւր վատ, և անհաստատ. որպէս մոլութիւն ցուցանէ զմոլին վատ և անհաստատ, կամ անկատար. ըստ այսմ են և սոքին, չարագործութիւն, ամբարտաւանութիւն, նախանձ, բամբասանք. որկրամոլութիւն. արբեցութիւն. պոռնկութիւն. եւն. Կարողութիւն է, որ ցուցանէ զենթակայս իւր սաստկապէս գործօղ իրին, որպէս տեսութիւն, որ 'ի պատանիս, ցուցանէ զնոսա սաստկութեամբ տեսանօղ զիրս. լսելութիւն, որ յերիտասարդս՝ ցուցանէ սաստկապէս լսօղ զձայնս։ Եւ ներհակ այսմ. Անկարութիւն է, որ ցուցանէ զենթակայս իւր թուլութեամբ գործօղ իրին. որպէս տեսութիւն, որք 'ի ծերս, ցուցանէ զծերն թուլութեամբ տեսանօղ զտեսանելի իրն. լսողութիւն, որ 'ի պառաւունս, ցուցանէ զնոսա թուլութեամբ լսօղ զձայն Նոյնն լինի կարողութիւն, և տկարութիւն. որպէս տեսանի 'ի տղայս է կարողութիւն.

և ՚ի ծերս անկարութ̃ե, ք̃ տկար կարողութ̃ե։ Ոգիք, և կրական որակութ̃ի նոքա են, որք այլայլութ̃ի մուծանեն յենթակայս իւրեանց. որպէս բարկութ̃ի և ուրախութ̃ի այլայլութ̃ի մուծանեն յենթակայս իւրեանց, ՚ի բարկացօղս և յուրախացօղս. զի յորժամ բարկանան բարկացօղք, և ուրախանան ուրախացօղք, այլայլութ̃ի լինի ՚ի սիրտս և ՚ի դէմս նոցա։ և ըստ այսմ են՝ ցանկութ̃ի. տրտմութ̃ի. քաղց. ծարաւ. ատելութ̃ի. ցաւ. հիւանդութ̃ի. սուգ. եւն։ Ձև և Տեսակ են այնք, որք կայանան ընդ մէջ գծի՝ մակերևութի՝ մարմնոյ՝ և գունոյ. ձևաւորեն և եղանակաւորեն. ք̃ կերպացուցանեն զմարմնեղէն գոյացութ̃ս. ք̃պ՝ քառանկիւնութ̃ի տախտակիս կայանայ ընդ մէջ երկայնութ̃ե. լայնութ̃ե, խորութ̃ե և գունոյն, ձևաւորէ և կերպացուցանէ զայս տախտակ՝ քառանկիւնի։ Ձևոյ տեսակք են այսոքիկ, երկայնութ̃ի, եռանկիւնութ̃ի, քառանկիւնութ̃ի. հնգանկիւնութ̃ի, վեցանկիւնութ̃ի. ձուաձևութ̃ի. սոպնաձևութ̃ի. եւն։ Տեսակք տեսակի են՝ դէմ, կերպ, տե-

սիլ. դէմն կենդանեաց պատկանի. իսկ անկենդանեաց կերպն պատշաճի ասիլ այսպէս է տեսիլն։ Որակութիւն բաժանի ՚ի բնականն, և յարհեստականն. բնական որակութիւն է այն, որ ՚ի բնէ ածասահման է որպէս տեսութիւն ՚ի յաչս լսելութիւն ՚ի յականջս. հոտառութիւն ՚ի քիմս, են բնական որակութիւնք, իսկ արհեստական որակութիւն է, որ լինի մարդկային հնարիւք. որպէս կաքաւումն. սաղմոսերգութիւն. տաղերգութիւն. կամ թուաբանութիւն. երաժշտութիւն. երկրաչափութիւն. և այլք բազումք։ Կարողութիւն բաժանի՝ յիմացականն՝ ՚ի կամեցողականն՝ և ՚ի զգայականն. որպէս իմացումն է կարողութիւն իմացական. կամեցողութիւն է կարողութիւն կամեցողական. զգայութիւն է կարողութիւն զգայական. ևն. Իսկ զբաժանումն տրամադրութեան, կրից և այլոց ՚ի մեծ ստորոգութեան լաւ կարես ճանաչել. միայն թէ՝ աստէն բազումս աշխատեսցիս, ՚ի մտի պահել զսակաւուք տուեալ կանոնս։

Ընդելութիւն է պատահումն, որով ենթակայն դնի՝ ներգործութեան պատճա-

ւող գլխն. օր՝ սպանանելն է առնելուն,
որով սպանօղն ներգործութբ սպանանէ
զըսպանեալն. որ ըսպանեցման գործ
տայ սպանեցելոյն. և օր այսմ են, կա-
պել, տաղել, մաշել, փշրել, խորտա-
կել. ևլն. և բաժանի յառնելուն մնա-
ցօղ, և յառնելուն անցանօղ. Մնացօղ
առնելուն է, որ մնայ ՚ի ներքս ՚ի ըն-
կզբան խուրում. որպէս մտածել, քննել,
իմանալ, խոկալ, զմտաւ ածել, ևլն.
մնան ՚ի ներքս ՚ի միտս. սոյնպէս և
Ճանաչել, տեսանել, երևակերպել, ևլն.
մնան ՚ի ներքս. զի Ճանաչելն մնայ ՚ի
Ճանաչողական զօրութ. տեսանելն մնա
՚ի տեսողական կարողութ աչայ. երե-
ւակերպելն մնայ յերևակերպական զօ-
րութ: Իսկ անցանօղ առնելութն է, որ
դնի արտաքս. որպէս տաշելն ոչ մնայ
՚ի ներքս ՚ի տաշօղն, այլ դնի արտա-
քոյ. ըստ այսմ են հարկանել, մորթել,
քերթել, սպանանել. և այլք բազումք:
Դարձեալ բաժանի յառնելուն բնա-
կան, և յառնելուն արհեստական. բնա-
կան առնելութն. որպէս գոյացուցա-
նել, բուսուցանել, ծաղկեցուցանել

յղփանալ, ծնանել. ևն։ Իսկ արուես-տական. որպէս շինել, Ճախարակել, խարտոցել, սղոցել. ևն։

Կրելութիւն է պատահումն. որով են-թակայն գնի ներգործութ ընդունող զգործ յարարողէն. օր՝ այրիլ. ահա այրիլն է կրելութին. զի այրեցեալն ներ-գործութ ընդունի զայրիլ իւր յիմեքէ այրեցողէ. ըստ այսմ են տաշիլ, հար-կանիլ, փշրիլ, կործանիլ, խորտակիլ, բուծանիլ, սպանիլ, և ամ կրաւորա-կան բայք։ Կրելութին ևս բաժանի ՚ի ներքին և յարտաքին. ներքին կրելութին է. որպէս իմանիլ, քննիլ, տեսանիլ, ևն. իսկ արտաքին կրելութին. որպէս հարկանիլ, կոխիլ, հատանիլ. ևն։

Ուրն է պատահումն իրի յայնմանէ, զի է ՚ի տեղւոջ. որպէս՝ լինիլ ՚ի տան ահա լինիլ ՚ի տան՝ է ուր, որ պա-տահի իրին յայնմանէ, զի է ՚ի տան. և բաժանմունք ուրի են վեց, որք հակադրին միմեանց, որգոն՝ ՚ի վեր ՚ի վայր, յառաջկոյս, յետկոյս, յաջ, և յահեակ, ՚ի սոսա պարունակին և սո-քին. աստ, անդ, անդանօր, աստանօր,

այսր, անդր, 'ի ծովու, 'ի ցամաքի, յեր-
կինս, 'ի յերկրի, 'ի տան, 'ի դրան, 'ի
ներքս, արտաքս, յայսկոյս, յայնկոյս, ևն։
Նորին է պատահումն իրի ծագեալ
յայնմանէ, զի է 'ի ժամանակի. որպէս
լինել յայսմ ամի. կամ յանցելում ամի։
Նորին ոչ է ժամանակ, այլ զժամանա-
կաւորն ցուցանէ լինել 'ի ժամանա-
կի. և տեսակ երբեք են այսոքիկ. երեկ.
այսօր. 'ի վաղիւ. ընդ առաւօտս. ընդ
երեկոյս. 'ի յունվարի, 'ի փետրվարի. 'ի
մարտի. 'ի զատկին. 'ի բարեկենդանին,
յաւուրս շաբաթու 'ի կիւրակի, ևն. կամ
աւուրբն յայնոսիկ. յաւուրս յայսոսիկ.
հանապազ. յամենայն աւուր, յամենայն տարի, ևն։
Կալնէ պատահումն ծագեալ 'ի պէսպէս
փոփոխմանէ իրին. որ՝ կանգնիլ. նստիլ.
յորսայսիլ, ևն. ահա սոքա են կալ, որք լի-
նին պէսպէս փոփոխմամբ. զի մի և նոյն
մարդն երբեմն նստի, երբեմն կանգնի,
երբեմն յորսայսի. կամ կալն է պատա-
հումն ծագեալ 'ի պէս պէս դրութէ
մասանց իւրին 'ի տեղւոջ, որպէս կալ
մասանց ծառոց են պէս պէս դրեալք.
որ արմատք նոցա դրեալ են 'ի հող,

և բունք կամ ձիւղք նոցա դրեալք 'ի վեր 'ի յօդս, և այն պէսպէս։ Այսպէս լինի և այլ ամ̃ կալ։ Զերկուս սահմանս տուաք կալոյ. բայց յետին սահմանն է ուղիղ և ընդհանուր քան զառաջինն։ Տեսակք կալոյ են սոքին, կառուցեալ գոլ. արձանացեալ գոլ, կմ̃ կառչիլ. արձանանալ. ծառանալ, ա̃ իբրև զծառ կանգուն կալ։

Մնալ. յամենալ. ընկողմանիլ. կախիլ. կամ կախեալ գոլ. եղեալ գոլ. անկեալ գոլ, ևն։ Այսոքիկ պարտին չէզոքականապէս նկատիլ, և անշարժապէս իմանիլ։ Եւ բաժանի կալն 'ի բնականն և յանբնականն. բնական կալ է, յորժամ իրք 'ի բնական կարգի իցեն եդեալ, որպէս բոյսք բազումք, որք զարմատն 'ի վայր ունին, և զձիւղս 'ի վեր. իսկ անբնական կալ է յորժամ իր ինչ ոչ իցէ եդեալ 'ի սովորական կարգի, որպէս բոյս իմն, որ զարմատն 'ի վեր ունի և զձիւղն 'ի վայր։ այսպէս իմն և զայլս։

Ունիլն է պատահումն ծագեալ 'ի շըրջակայութե̃ զգեստուց, կամ զինուց, և

կամ զարդուց, որ՝ զինուորին, զգեստաւորին, փշաւորին, բրդաւորին. փետրաւորին, թեւաւորին. զրահաւորին, հերաւորին, գօտեւորին. եւն: Տեսակք ունելոյ են՝ զգեստաւորին, զինուորին, եւ զարդարին: Տեսակք զգեստաւորելոյ են սոքին՝ շապկաւորին, վարտկաւորին, կապաւորին, մազաւորին, փետրաւորին: Եւ տեսակք զինուորելոյ են այսոքիկ՝ թրաւորին. զրահաւորին, նիզակաւորին, ձիրանաւորին: Իսկ տեսակք զարդարելոյ են՝ պսակաւորին, մանեկաւորին. կոճկաւորին: եւն:

### Յօդուած առաջին:

Ստորոգու՟ին նախ բաժանի 'ի ստորոգու՟ի ուղղական, եւ 'ի ստորոգութ՟ի հոլովական. ստորոգութ՟ի ուղղական, որպէս մարդն է կենդանի. ստորոգու՟ի հոլովական, որպէս մարդն է բաղկացեալ 'ի հոգւոյ եւ 'ի մարմնոյ:

Երկրորդ՝ բաժանի 'ի ստորոգութ՟ի ուղղակի եւ 'ի ստորոգու՟ի կողմնակի. ստորոգու՟ի ուղղակի, որպէս կենդանին է կեցօղ. ստորոգութիւն կողմնակի, որպէս շունն է հաջողական:

Երրորդ՝ բաժանի 'ի ստորոգութիւն ամբողջ, և 'ի ստորոգութիւն կիսամասնեայ. ստորոգութիւն ամբողջ, որպէս տարրն է մարմնին. ստորոգութին կիսամասնեայ, որպէս կեցօղն է մարմնին,

## Յօդուած երկրորդ։

Սեռն է բոլոր, և տեսակն է մասն սեռի։ Տեսակն է բոլոր, և անհատն է մասն տեսակի։ Իսկ անհատն է միայն մասն, և ոչ կարէ լինել տրամաբանական բոլոր. զի տրամաբանական բոլորին պարտէ լինիլ ընդհանուր. զի՝ կենդանին ցուցանէ զամենայն կենդանիս, իսկ մարդն նշանակէ զմի մասն 'ի կենդանեաց։ Մարդն ցուցանէ զամենայն մարդ. իսկ պետրոսն նշանակէ զմի մարդ միայն. և այսպէս դիւրին լինի ճանաչել զսեռս, և զիւրաքանչիւր տեսակս նոցա։

Ծանիր և զայս հարկաւորապէս. զի թէպէտ գոյացութիւնք և պատահմունք

միաւորեալք են ընդ միմեանս, բայց դիւրաւ որոշին 'ի միմեանց անուամբ, և էութեամբ իւրեանց. օր՝ հուրն խառնեալ կայ ընդ ջերմութեան և ընդ չորութեան. սակայն հուրն իւր անուամբն և իւր էութեամբն 'ի ջերմութենէ, և 'ի չորութենէ. զի հուր է, և ոչ ջերմութիւն: Այնպէս և պատահմունքն անուամբ և էութ̃բ իւրեանց որոշին. որպէս ջերմութ̃ին է ջերմութիւն, և ոչ թէ ջերմու̃ին է հուր:

Գոյականն սեռ և տեսակ. որպէս տառն է սեռ և տեսակք նորա այբ, բեն, գիմ. եւն. այբն սեռ և տեսակք նորա, գլխագիր. նօտր գիր, և բոլոր գիր. օր՝ Ա. ա. ա: Ըստ այսմ իմն և վասն բենին, գիմին և այլոց: Պատահական սեռ և տեսակ, որպէս ամիսն է սեռ, և տեսակք նորա յունվար. փետրվար. մարտ. ապրիլ. մայիս. յունիս. եւն:

## Պրակ վեցերորդ։

### Ներածէն յաղագս հնգից եղերաց Պորֆիւ-րեանց, որք են. Սեռ. Տեսակ. Տարբերութիւն. Յատուկ. և Պատահումն։

Սեռն է եզր ընդհանուր, որ ստորոգի զբազմաց տեսակաւ տարբերելոց՝ գոյականաբար և անլրապէս. որ՝ կենդանի. գոյն. իբր թէ սեռն այնպիսի ընդհանուր եզր է, որ զբազմաց ստորոգի. զի և այն բազումք տեսակաւ բաժանին ՚ի միմեանց. որպ̃ կ՛նդանին ստորոգի զմարդոյ, զձիոյ, զէշոյ, զոչխարէ, և զայլոց, որք տեսակաւ բաժանին ՚ի միմեանց։ Նաև անլրապէս. զի թէպէտ սեռն ստորոգի զտեսակաց, բայց ոչ լրացուցանէ զանհատս. զի տակաւին թողու զկնի իւր զայլ ընդհանուր, որ է տեսակն։

Տեսակն է եզր ընդհանուր, որ ստորոգի զբազմաց գոյականաբար և լրապէս. որ՝ մարդ. ձի. էշ. սպիտակուն. ևն։ Նորդ՝ տեսակն ասի լրապէս ստորոգիլ զբազմաց. իբր թէ տեսակն

զանհատից ստորոգելով լրացուցանէ. որպէս վերջացուցանէ զանհատս, և ոչ Թողու այնուհետև զինիւր զայլ ընդհանուր։

Տարբերութին է եզր ընդհանուր, որ ստորոգի զբազմաց ածականաբար՝ տարբերիչ էութե յայլմէ, որպէս բանական. խնջական. Եւ. այդ տարբերութին առ էական և բաղկացուցիչ մասունս իւրեն վերաբերի։

Յատուկն է եզր ընդհանուր, որ ըստորոգի զբազմաց ածականաբար՝ հարկաւ հետևեալ զհետ էութե. որգոն՝ ծիծաղական. զի ծիծաղականն հարկաւ հետևի մարդոյ, և է անքակ 'ի նմանէ։

Պատահումն է եզր ընդհանուր, որ ստորոգի զբազմաց ածականապէս և ներընդունակաբար. որգոն, չար, բարի, մոլի, առաքինի. Եւ. որպէս թէ՝ պատահումն ներընդունի զդիւրափոփոխումն, կամ՝ զընկամուտ լինչ էութե. ոպ յասելն չար մարդ. բարի մարդ. 'ի գալ չարութե առ մարդն, քանզի բարութին 'ի նմանէ, և 'ի գալ բարութե,

բանի չարութիւն. բայց մարդն միայ մարդ. զի այսպիսիքս, ոչ 'ի գալն գոյացուցանեն զիրն, և ոչ 'ի բանիլն եղծանեն. որպէս չարութիւն և բարութիւն ոչ 'ի լինիլն գոյացուցանեն զմարդն, և ոչ 'ի չլինելն եղծանեն զէութիւն մարդոյ: Բայց տարբերութիւն և յատուկն 'ի լինիլն գոյացուցանեն. և 'ի չլինելն ապականեն. զի անհնար է առանց բանականութեան և ծիծաղականութեան լինիլ մարդ.

## Յօդուած առաջին:

Հինգ եզերքս զանազանին 'ի միմեանց. զի Սեռն ստորոգելով զտեսակականաց անլրապէս՝ զանազանի 'ի տեսակէն: Տեսակն ստորոգելով զանհատից լրապէս՝ զանազանի 'ի սեռէն: Տարբերութիւն առ էական և բաղկացուցիչ մասն իւրին վերաբերելով՝ զանազանի 'ի յատկէն և 'ի պատահմանէն: Յատուկն հարկաւ հետևելով էութեան իւրն զանազանի 'ի տարբերութենէ և 'ի պատահմանէ: Պատահումն ներընդունե-

լով զդիւրափոփոխութի՝ զանազանի կայլոց։

Որդ՝ Տարբերութին բաղկացուցիչ լինի երկն. և Յատուկն հարկաւ լինի ընդ իրին. որպէս քանակաւն բաղկացուցանէ զէութի մարդոյ. և ծիծաղականն հարկէիւ լինի ը նմա. զի եթէ բարձցես զքանականութի և զծիծաղականութի մարդոյն կործանի էութի նորին։ Իսկ պատահումն ներընդունի. զի եկամուտ և փոփոխական ցուցանէ զինքն. իբր արտաքուստ մտեալ ՚ի գոյացութի. յոր յենու. որպէս սպիտակութի թղթոյս. և սեաւութի ագռաւու՝ ոչ ՚ի լինելն գոյացուցանեն, և ոչ ՚ի չլինելն ապականեն զի կարեմք բառնալ զսպիտակութի ՚ի թղթոյս, և զսեաւութին յագռաւէ, որ կարիցեն մնալ առանց վնասու էութե իւրեանց։

Սեռն բաժանի ՚ի սեռ վերին ՚ի սեռ ներքին և ՚ի սեռ միջին։ Տեսակն բաժանի ՚ի տեսակ վերին, ՚ի տեսակ ներքին, և ՚ի տեսակ միջին։ Տարբերութիւնն բաժանի ՚ի տարբերութի վերին, ՚ի տարբերութի ներքին, և ՚ի

տարբերութ՟ի միջին։ Սեռ վերին է գոյացութ՟ի. սեռ ներքին՝ կենդանին. սեռ միջին՝ կեցօղն։ Տեսակ վերին է ոգի և մարմին. տեսակ միջին՝ կենդանին. տեսակ ներքին՝ մարդ, ձի, էշ, եւն։ Տարբերութ՟իք վերինք են հոգևոր, և մարմնաւոր, տարբերու՟իք ներքին. բանական, հաջողական, եւն. տարբերութ՟իք միջին զգայական, և անզգայ։ Գիտելի է աստէն, զի մի և նոյն եզրն կարէ լինիլ սեռ և տեսակ. որպէս կենդանին նկատմամբ կեցողին՝ է տեսակ. իսկ նկատմամբ մարդոյն՝ է սեռ. ծառն նկատմամբ տնկոյն է տեսակ. իսկ նկատմամբ թթենւոյ, տանձենւոյ. և այլոյ՝ է սեռ։

Սեռ և տեսակ դարձեալ բաժանին՚ի գոյացական և ՚ի պատահական. գոյացական սեռ և տեսակ, ո՟պ կենդանի. մարդ. պատահական սեռ և տեսակ. որպէս գոյն, սպիտակութ՟ի, որք պարտին լինիլ միշտ գոյական. որգոն ձև, քառանկիւնութ՟ի. բոյս. կաղամբ։ Նւ ներհակ այսմ։ տարբերութ՟ին յատուկն, և պատահումն պարտին լինիլ միշտ ածա-

կամ. որգոն քանական մարդ. ծիծա-
ղական մարդ. բարի և չար մարդ։
՚Դ. գոյացութիւն սեռն և տեսակն պար-
տին միշտ ստորոգիլ զստորակայից իւր-
եանց ՚ի թանձրացելումն. որգոն մար-
դըն է կենդանի. պետրոսն է մարդ.
ուստի և ոչ լինի ասել՝ մարդն է կեն-
դանի. պետրոսն է մարդութի. քանզի
գոյացական վերացեալքն անվերացեալ
իմն են ՚ի կարգի գոյացութե, զի ոչ ըղ-
բոլորն, այլ զմասն ենթադրեն վասն
որոյ ոչ են ՚ի ստորոգութե։
Տարբերութին յատուկն և պատահումն
պարտին ստորոգիլ զստորակայից իւր-
եանց ՚ի թանձրացելումն. որգոն՝
մարդն է բանական. շունն է տիրա-
սէր. ձիւնն է սպիտակ։ Պատահումն
կրկնակի մտածի. զի մինն է վերացել
և միւսն թանձրացեալ. կամ որ նոյն
է, մինն է գոյական և միւսն ածական։
Վերացեալ. ոպ սպիտակութի. թանձ-
րացել. որպէս՝ սպիտակ։ Ն.րդ՝ հին-
գերորդ եզրն պորփիւրոսի է թանձ-
րացեալ պատահումն։ Իսկ վերացել
պատահումն լինի միայն սեռ, և տեսակ.

որք ստորոգելին զստորակայից իւրեանց 'ի վերացելումն. զորս բարուք ծանիցես յինն ստորոգութիւնս, որք են քանակութի, առնչութի, որակութի. Եւն. Նու քանզի սեռն և տեսակ զայն բացատրեն, որ է յէութեն իրին, և ոչ զայն որ է օտար յէութե. որպէս պատահականք վերայեալքն վերաբերեալ յենթակայից իւրեանց պարզապէս և անխառն նշանակեն զէութիւնս իւրեանց. որգոն սպիտակութի է գոյն. եռանկիւնութիւն է ձև. ահա սպիտակութիւն է յէութե գունոյ, և ոչ յէութե սպիտակին. եռանկիւնութիւն է յէութե ձևոյն, և ոչ յեռանկիւնւոյ. Նոյնպէս իմ՝ անհատք առ տեսակս իւրեանց. և իմ՝ տեսակ առ սեռս իւրեանց իբր առ իւրեանց բուն էութի վերածելին:

## Յօդուած երկրորդ.

### Յաղագս քաղանունաց, հոմանունաց, համե-տարանունաց, և յարանունաց.

Քաղանունք են, որք անուամբ և էութե հաղորդին միմեանց. որգոն կեն-

դանի մարդ. կիրակոս. ահա՛ կենդա-
նին, մարդն, և կիրակոսն հաղորդին
միմեանց ձայնիւ և սահմանաւ. զի կի-
րակոսն է մարդ կենդանի։ Նոյնպէս
սեռն, տեսակն, և անհատքն են փա-
ղանուանք. որպէս այս՝ ծառ. շլորենի.
գոյն, սպիտակութի̃. Եւ̃. զի սեռն զտե-
սակայ, և տեսակն զանհատից փաղա-
նուանաբար ստորոգին։

Հոմանունք են, որք անուամբ միայն
հաղորդին միմեանց, իսկ ըստ բանի
նշանակութե̃ն են այլ և այլ. զի այլ է
աչքն, և այլ մատանւոյ ակն. բայց եր-
կոքին ևս հասարակ անուամբ ասին
ակն. ըստ այսմ են՝ եկեղեցի, վահան,
հաւ, խոյ, և այլք սակաւք ՚ի մեր լե-
զուի։

Համեմատանունք են, որք ըստ հա-
մեմատութե̃ բաղդատին առ միմեանս, ըստ
համեմատութե̃ իմն սկիզբն ասի սիրտն,
աղբիւրն, և կէտն. զի որպէս ՚ի սրտէ
սկսանին կեանք, նոյնպէս յաղբերէ ըս-
կսանի վտակն, և ՚ի կէտէ սկսանի գիծն,
ըստ այսմ և Թագաւոր կոչի Թագա-
ւորն մարդկան. Թագաւորն Թռչնոց

նկատմամբ արծուոյ. Թագաւորն գա-
զանաց նկատմամբ առիւծու. և զի
սոքա ոչ թէ թագաւոր են, այլ զի ոմն
լինի մարդկան թագաւոր, նոյնպէս և
՚ի նոսա ըստ համեմատութեան։ Նոյնպէս
և գործ բազկի, մէջն, ասին առողջ.
զի նշան են առողջութեան. կերակուրն
ասի առողջ. զի պահէ զառողջութիւն,
և օգնէ այնմ։ Երկին, երկնաւոր. եր-
կիր, երկրաւոր. ծով, ծովային. ցա-
մաք, ցամաքային. մարդ, մարդկային.
ա̃ծ, ա̃ծային. և այլք բազումք են հա-
մեմատութիւնք. որ՝ ասող. երկին. եր-
կնաւոր։ Ասողն ասի երկնաւոր, զի ՚ի
յերկինս գոյանայ և անդ մնայ։ Ձու-
կն, ծով, ծովային։ Ձուկն ասի ծովա-
յին զի ՚ի ծովու գոյանայ, և անդ մնայ։
Ա̃ծ, շնորհք, ա̃ծային։ Շնորհքն ասի
ա̃ծային. զի յա̃յ պարգևեալ լինի առ
մարդիկ. այսպէս և աշխարհս ասի
ա̃ծային. զի է ա̃ծաստեղծ. սէրն ասի
ա̃ծային, կամ ա̃ծաբանական. զի հա-
յի յա̃ծ։ Սուրբ գիրք ասին ա̃ծային.
զի յա̃յ շնչեցան. ՚ի յա̃յ, կամ ա̃ծային
ազդմամբ են խօսեցեալք. քահանայն

ասի ա՟ծային. զի ա՟յ է պաշտօնեայ. օ-
րէնք ասին ա՟ծայինք, զի յա՟յ տուան.
բայց տիրապէս և գլխաւորաբար ա՟ծ-
ային կոչի բնութի՟ն, ա՟ծային, իսկ այլքն
ասին ա՟ծային երկրորդաբար և հա-
յելովն յա՟ծային բնութի՟ն տիրապէս և
գլխաւորաբար առողջ կոչի կենդա-
նին, որ ունի զառողջութի՟ն. իսկ այլ-
քն երկրորդաբար և հայեցողապէս.
Այ՟ս կամ նշանակ լինելով առողջութե՟ն՝
ասին առողջ. որպէս մէզն, և զարկ
բազկի. կամ պատճառ լինելով առող-
ջութե՟՝ ասին առողջ. որպէս դեղո-
րայք. և կամ առողջութի՟ն պահելով,
և այնմ օգնելով՝ ասին առողջ. որպէս
կերակուրք. ուստ՟ ասի համեմատանու-
նաբար նա և զլերանց, զգահոյից, նը-
կատմամբ ստորին մասանց նոցա. այլ
և զբանից, նկատմամբ համաչափ և
համանման վերջաւորութեան վան-
կից, եւ՟։

Յարանունն է, որ 'ի վերացեալ ի-
մեքէ ընդունի զանուն. որպէս սպի-
տակ. սեաւ ընդունին զանուանս ի-
րեանց 'ի սպիտակութե՟ 'ի սեաւութե՟,

որք են վերացեալք. և ըստ այսմ են՝ կարմիր, կարմրութի՟. դեղին, դեղնութի՟. մաքուր, մաքրութի՟. սուրբ, սրբութի՟. լի, լիութի՟. եւն. սոցա ածանցեալքն են յարանուանողք, և նախատիպքն յարանուանեալք և զանազանին 'ի միմեանց միայն ըստ ձայնի հոլովմանց. զի սպիտակն հոլովի, սպիտակ, սպիտակի, սպիտակաւ: Իսկ սպիտակութի՟ն հոլովի, սպիտակութե՟, սպիտակութե՟ն, սպիտակութե՟բ. այսպէս խիմ և զայլս, որպ՟ կարմիր, կարմրոյ, կարմրով. կարմրութի՟, կարմրութե՟ն, կարմրութե՟բ. եւն:

Նոյն բանք փաղանուանց, հոմանուանց՝ համեմատանուանց և յարանուանց, կոչին յառաջաստորոգութի՟ք, ք՟ քան զստորոգութի՟ս յառաջեալ գիտելիք.

## Յօդուած երրորդ.

Հակադրութի՟ն է չորեքկին. առնչական, Ներհակական, Պակասական, և Հակասական: Առնչական հակադրութի՟ն է 'ի մէջ երկուց ծայրից, որոց բոլոր

դոյն է վերաբերումն առ միմեանս. որպէս հայր և որդի։ Ներհական հակադրութիւն է 'ի մէջ երկուց ծայրից, որք ոչ կարեն կայանալ 'ի միում ենթակայի, այլ վարեն զմիմեանս 'ի նոյն ենթակայէ. որպէս ջերմութիւն և ցրտութիւն։ Պակասական հակադրութիւն է 'ի մէջ երկուց, որոց միւնն է պակասութիւն, և միւսն ունակութիւն. որպէս տեսողութիւն, կուրութիւն։ Հակասական հակադրութիւն է 'ի մէջ էի և չէի. որպէս՝ պետրոսն իմաստուն է, պետրոսն ոչ է իմաստուն։

Յառաջնութիւնք են հնգապատիկ։ 1. Յառաջնութիւն ժամանակի. ըստ որոյ մի յառաջ է քան զմիւսն տեւողութեամբ, որպէս հայրն ստեղծեալ է յառաջ քան զորդի։ 2. Յառաջնութիւն ըստ հետեւութեան ենթակայանալոյ. և է այն, որոց միւնն մակաբերի յայլմէ, և ոչ մակաբերէ զնա. որպէս կենդանին մակաբերի 'ի մարդոյ, և ոչ մակաբերէ զնա. զի ըստ հետեւութեան մարդն է կենդանի, բայց կենդանին ոչ է մարդ։ 3. Յառաջնութիւն ըստ կարգի. և է այն, որոց միւնն կարգաւ յառաջ է քան ըզ-

միւսն. որպէս տրամաբանութիւն կարգաւ յառաջ է քան զայլ գիտութիւն. և այլն։
4. Յառաջնութիւն նախապատուութեան. որով մինն քան զայլս պատուով լինի նախ. որպէս Թագաւորն քան զիշխանս. ևայլն։
5. Յառաջնութիւն ըստ բնութեան. և է յայնս, որոց թէպէտ երկոքին են 'ի նմին վայրկենի. բայց մինն կախի 'ի միւսմէ իբր 'ի պատճառէ գոլոյ իւրոյ. որպէս արեգակն ըստ բնութեան է նախ քան զլոյս իւր. հուրն քան զջերմութիւն իւր. և բաղում պատճառք քան զգործս իւրեանց։

Համանգամայնութիւն ևս է հնգապատիկ. Առաջինն է համանգամայնութիւն ժամանակի, և է 'ի մէջ այնոց. որք են համանգամայն 'ի նմին վայրկենի, որպէս 'ի մէջ լուսոյ և արեգական։ Երկրորդն է համանգամայնութիւն հետևութեան. և է 'ի մէջ այնոց, որք մակաբերեն զմիմեանս. որպէս այս՝ բանականն է ծիծաղական. ծիծաղականն է բանական։ Երրորդն է համանգամայնութիւն կարգի, որ է 'ի մէջ այնոց, որք լինին 'ի նմին կար-

գլ. որպէս 'ի մէջ տեսակաց, որք են ընդ նոյն սեռիւ. որպ՝ ձի, մարդ, ևն. որք դնին ընդ կենդանեաւ։

Չորրորդն է համանգամայնութիւն պատուոյ, որ է 'ի հաւասարապատւս. որպէս երկու քահանայք, որք պատուով հաւասար են միմեանց։

Հինգերորդն է համանգամայնութիւն բնութեան. և է 'ի մէջ այնոցիկ, որք թէպէտ միմեանց ոչ են պատճառք. սակայն զմիմեանս դնեն և վերծանեն. և ըստ այսմ՝ առնչականքն են համանգամայն բնութեամբ. զի 'ի դնել միոյն դնի միւսն. և 'ի բառնալ միոյ՝ բառնի միւսն. որպէս 'ի դնել հօր՝ դնի և որդին, և 'ի բառնալ հօր՝ բառնի և որդին։

## Յաղագս շարժման։

Շարժումն է անցումն 'ի միոյ որպիսութենէ յայլ։ Սեռք շարժմանց են վեց։ Ծնունդ. որ է անցումն յոչ գոլոյ 'ի գոլ գոյացական. որպ անցումն նիւթոյ սերման 'ի նիւթ ծլի։ Ապականութիւն. որ է անցումն 'ի գոլոյ յոչ գոլ. որպ անցումն տեսակի սերման յեղծումն և

յապականութիւն. զի ապականութիւն միոյ ծնունդ է միւսոյն։ Աճումն. որ է անցումն ՚ի փոքր քանակութենէ ՚ի մեծ քանակութիւն. որպէս, զարգանալ, սնանիլ. ևն։ Նուազումն. որ է անցումն ՚ի մեծ քանակութենէ ՚ի փոքր քանակութիւն. որպէս նիհարանալ, մաշիլ։ Այլայլութիւն. որ է անցումն յորակութենէ յորակութիւն. որպէս ցամաքիլ, չորանալ։ Բերումն. որ է անցումն ՚ի տեղւոջէ ՚ի տեղի. որպէս գնալ, հոսիլ, անկանիլ։

Եղանակք ունելոյ են հինգ։ Ըստ յենողութեան. որպէս մարդս ունի զգիտութիւն. Ըստ պարունակման. որպէս կարասն ունի զգինի։ Ըստ ստացման. որպէս մարդն, որ ունի զագարակ։ Ըստ առընչութեան. որպէս հայրն ունի զորդի. Ըստ մերձաւորութեան. որպէս մարդն ունի զհանդերձս։

Նաև արդ՝ հակադրութիւն. յառաջնութիւն. համանգամայնութիւն. շարժումն, և եղանակք ունելոյ ասին յետաստորոգութիւնք. իբր թէ յետ ստորոգութեանցն ասելիք. զի սոքա ոչ են պարզ ստորոգութիւնք։

## Յօդուած չորրորդ։

### Յաղագս սահմանի։

Սահմանն է բան բացայայտիչ բնութեան իրին սահմանելոյ։ Եւ բաժանի ՚ի սահման անուան, և ՚ի սահման իրի։ Սահման անուան է յորժամ զնշանակութիւն անուան կարիցեմք իմանալ կամ՝ որ լաւ ևս է ասել, սահման անուան է այն. որով իրք անուամբք իւրեանց բացասաբար որոշին. որպէս հայր, որդի, հող, ջուր, և այլն։
Իսկ սահման իրին է, յորժամ զսահման իրին կամիցիմք իմանալ. որպէս ասեմք մարդն է կենդանի բանական։ Սահման իրին բաժանի յէական և ՚ի ստորագրական։ Էականն է, որ բացատրէ զիրն այնպիսի սկզբմամբք, որ բաղկացուցանեն զբնութիւն նորին. և է կրկին բնական և համաբնաբանական. բնականն է, որ բացատրէ զսահմանելի իրն ՚ի ձեռն բնական մասանց նորա. օր՝ ՚ի ձեռն նիւթոյ և տեսակի. որգոն՝ մարդն է բաղկացեալ ՚ի մարմնոյ և ՚ի հոգւոյ բանականէ։

Համաբնաբանականն է, որ ՚ի ձեւն բոլորանշան մասանց բացայայտէ զիրըն, թէ ՚ի ձեւն սեռի եւ տարբերութեան որգոն՝ մարդն է կենդանի բանական ասին մասունք համաբնաբանականի. զի ոչ տարբերին իրօք, որպէս հոգի եւ մարմին, այլ միայն վերացուցմամբ մտաց զանազանին. եւ այն եղանակ զանազազանութեան՝ համաբնաբանութեան, եւ տրամաբանութեան է սեփհական.

Ստորագրական սահման է, որ լինի ՚ի յատուկ պատահմանց, կամ ՚ի պատճառաց. եւ կամ ՚ի հասարակ պատահմանց, եւ ոչ յէական բաղկացուցչաց, եւ են երրեակ, յատկական, պատահական, եւ պատճառական։ Յատկական սահմանն է, որ բացատրէ զիրն իւրովք յատկութեամբք, որգոն՝ մարդն է կենդանի քաղաքական եւ ուսումնական. Պատահական սահմանն է, որ բացատրէ պէսպէս պատահմամբ, որք ուրոյն պատշաճին այլոց միանգամայն եւ սահմանեցելոյն. որպէս Վիրգիլիոս սահմանէ ըզ-Բուբղիոս. հրէշ տգեղ եւ ահարկու, յաղթահասակ եւ զաչացու. յորոյ ՚ի ձեւս

է բուն նոճի, նովաւ գնայք իւր հաս-
տատի․ սովաւ հռետորք յաճախ վարին,
բայց փիլիսոփայք սակաւ։ Պատճա-
ռական սահմանն է, որ բացատրէ զիւրն
արտաքին պատճառօք․ որպէս այս երկու
պատճառաւս, վախճանականաւ․ և արար-
չականաւ․ որգոն՝ մարդն է կենդանի
յարարչէն իմն արարեալ վասն երա-
նութեան։ Տենդն է ջերմութիւն անբըն-
նական պատճառեալ ՚ի մաղձէ, և յայլ
մասունս ծաւալեալ ՚ի նուաճել զհիւ-
թըն վնասակար։

### Յօդուած հինգերրորդ։

### Յաղագս Բաժանման։

Բաժանումն է բան, որ բաշխէ ըզ-
բոլորն ՚ի մասունս իւր․ վասն զի եր-
րեակ է բոլորն, ներգործական, կա-
րողական, և պատահական․ ապա և եր-
րեակ է բաժանումն, որպէս՝ ներգործա-
կան․ կարողական, և պատահական։
Ներգործական բաժանումն է, որ բա-
ժանէ զբոլորն ՚ի մասունս, յորոց

ներգործութի՜ բաղկանայ, կամ զորս ներգործութի՜ ունի յինքեան, եթէ բնական իցեն մասունքն. որպէս յորժամ ասեմք. մարդոյ մի մասն մարմին է և միւսն հոգի. եթէ համաբնաբանական. որպէս յորժամ տեսակն բաժանի ՚ի սեռ և ՚ի տարբերութի̃. որգոն՝ մարդոյ մի մասն է կենդանի, և միւսն բանական. և եթէ ամբողջացուցիչ, յորոց այնպէս բաղկանայ բոլորն, որ առանց միոյ ՚ի նոցանէ անկատար լինի. որպէս յորժամ մարմինն բաժանի ՚ի գլուխ, ՚ի ձեռս, ՚ի կուրծս, և յորս ՚ի կարգի: Կարողական բաժանումն է, որ բաշխէ զբոլորն ՚ի մասունս, զորս ը̃ իւրև պարունակէ, որպ̃ կենդանին է բոլոր կարողական, որ պարունակէ ը̃ իւրև զմարդ, զառիւծ, զաղուէս, եւն: Այս բաժանումն է կրկին. փաղանուն, և համեմատանուն. փաղանունն է, յորժամ բոլոր ինչ կարողական միապէս պատշաճի իւրոց ստորակայից. որպէս կենդանին բաժանի ՚ի ջրայինն, ՚ի ցամաքայինն, և յերկակենցաղ: Համեմատանուն բաժանումն է, յորժամ բոլոր

ինչ կարողական ոչ միապէս պատշա-
ճի իւրոց ստորակայից, այլ միայն ըստ
համեմատութեան իմիք. որպէս յորժամ
գլուխն բաժանի 'ի գլուխ մարդոյ,
'ի գլուխ լերին, և 'ի գլուխ գրոց.
զի գլուխն ոչ միապէս ասի զգլխոյ մար-
դոյ, զգլխոյ լերին, և զգլխոց գրոց.
Պատահական բաժանումն է, որով
ենթակայն բաժանի 'ի պատահմունս
իւր. որպէս մարդն բաժանի 'ի սպի-
տակ, և 'ի սեաւ. կամ պատահումն բա-
ժանի յենթակայս իւր, ոպ սպիտակն
բաժանի 'ի ձեռն, 'ի կաթն, ևն. Եւ
կամ պատահումն բաժանի 'ի պատա-
հումն. որպէս սպիտակն բաժանի 'ի
դառն. և 'ի քաղցր. Կանոնք բաժա-
ման են չորս. նախ՝ զի բաժանելին
մեծ լիցի քան իւրաքանչիւր մասն. ուս-
տի սխալ է բաժանումնս, կենդանեաց
ոմն է բանական և ոմն զգայուն. զի
զգայունն հաւասար է կենդանւոյ.
քանզի ամ կենդանի է զգայուն. Այլ
ոչ ամ զգայուն է կենդանի. Երկ-
րորդ՝ զի բոլորն բաժանեալ՝ իցէ
հաւասար մասանց. ուստի յոռի է բա-

ժանումն, երկիրն բաժանի յեւրոպիա, յասիայ, և յափրիկէ. զի բաց ՚ի սոցանէ է և այլ մասն, որ ամերիկայ։ Երկրորդ՝ զի մասունք ըստ իրաց ինչ արտաքոյ իցեն միմեանց. ուստի սխալ է բաժանումնս երկիրն բաժանի ՚ի մուշ, ՚ի խարբերդ, ՚ի պայազիտ, և ՚ի դխատին. զի դխատին ոչ է ըստ ինքեան երկիր, այլ պարունակի ՚ի պայազիտ։ չորրորդ զի որչափ հնար է ՚ի սակաւ մասունս բովանդակել։

## Յօդուած վեցերորդ։

## Յաղագս Վերացացման։

Վերացուցումն է մտածութիւն որոշակի, որ զիւրաքանչիւր իրի իսկութիւն ուրոյն ուրոյն տայ իմանալ. և է երրեակ. առաջինն է վերացուցումն պատահման յենթակայէ, կամ ՚ի նիւթոյ. և այս լինի ՚ի թանձրացելն, զի թանձրացելն երկու ինչ ՚ի մէջ բերէ զպատահումն և զէնթակայն. որպէս արդարն ցուցանէ զարդարութիւն և զունօղն արդարութեան. զայսպիսի զանազանեալս միով հայեցիք մտաց միայն ոչ կարեմք

իմանալ. վասն այսորիկ զէնթակայն ուրոշեմք, և միայն զպատահումն նկատեմք: Այսուիկ վերացուցմամբ առհասարակ վարին գիտութիւնք. որպէս տրամաբանութիւն ընդհանրապէս դիտէ զտեսակն հաւաքաբանութեան. և բարոյականն զտեսակն առաքինութեան. և երկարաչափն զքանակութիւն. իսկ յաղագս ենթակայից, յորս լինին այսպիսի տեսակք, ոչինչ հոգան:

Երկրորդ վերացուցումն է ընդհանուր իսկութեան 'ի մասնաւորաց, որպէս բնաբանն ընդհանրապէս մտածէ զէակն շարժելի. և բարոյականն սեռօրէն մտածէ զառաքինութիւնս, և ապա առ նոցին տեսակս և տարբերութիւնս յառաջանայ:

Երրորդն է վերացումն ստորոգեցելոյն յըստորոգեցելոյ. զի զմիոյ ենթակայէ ստորոգեալքն 'ի միմեանց վերացուցանին. սա կոչի և հրաժարեցուցումն. որ է առարկական, և որ տեսական. առարկական վերացուցումն է, յորում ստորոգեալքն միայն 'ի կողմանէ ենթակային վերացուցանին 'ի միմեանց, որպէս 'ի մարդութեան ոչ է

նոյն կենդանութեան և բանականութեան. զի կենդանութիւնն ոչ փակէ ընդ իւր և ըզ-բանականութիւնն, Թէպէտ և իրօք ոչ զանազանին 'ի մարդն։ Տեսական հրաժարեցուցումն է, որով ստորոգելոց միոյն փակէ ընդ իւր և զայլս. որպէս 'ի յոյժ բարութեան աստուածայնին փակէ ընդ իւր և զանչափութիւն, զյաւիտենականութիւն, զան-փոփոխութիւն, զանսկզբնութիւն և զայլս, որք ստորոգին զԱստուծոյ համաքնաբանօրէն։

Արդ՝ ասի տեսականն. զի այսպիսի կատարելութիւնք ոչ 'ի կողմանէ Աստուծոյ ասին հրաժարեալք, որ է ենթակայ ոյնց, այլ 'ի կողմանէ Ճանաչողին ասին հրա-ժարելք։ Ասէ արիստոտէլ, Էականութիւնք յածին զմտօք, իսկ անհատք զզգայութիւնք. զի միտք զընդհանուրս Ճանաչէ և ըզ-գայութիւն զմասնաւորս։ Ոմանք և զայս, զի Թէպէտ տրամաբանական ընդհա-նուրքն են հնգետասան, այլ տասն ստո-րոգութիւնքն արիստոտէլի, և հինգ ձայնք պորփիւրի. բայց իրօք են հինգ. զի տասն ստորոգութիւնքն ոչ այլ ինչ են, ե-Թէ ոչ սեռ և տեսակ. վասն որոյ կո-

չին ուղղակի ստորոգութիւնք. քանզի տարբերութիւն, յատուկն և պատահումն թէպէտ են ընդհանուրք և զբազմաց ստորոգելին, բայց ո՛չ ուղղակի՝ այլ կողմնակի. ուստի միայն տասն ստորոգութիւնքն, որ են սեռ և տեսակ. կարեն լինիլ ուղղակի ստորոգութիւնք: Ի.մ ընդհանրից կրկին յատկութիւնս տան տրամաբանք, ստորոգելութեան և մշտնջենաւորութեան. ըստորոգելութիւն յայտ է, զի ամենայն վերինք զվայրնոց ստորոգին: Իսկ մշտնջենաւորութիւն կրկին է, դրական, և բացասական. արդ միայն ամենայն ասի դրականապէս մշտնջենաւոր. զի նա միայն հաստատեալ պարադրէ զամենայն ժամանակս. իսկ ընդհանուրք ասին մշտնջենաւորք. զի կերպիւ իւիք յամենայն ժամանակէ և ՚ի գոյութենէ վերացուցանին, որպէս յասելն՝ մարդն է կենդանի բանական, ոչ՛ինչ մասնաւոր ժամանակ և եղելութիւն մտածի ՚ի նոսա. վասն զի վերացուցանին յամենայն ժամանակէ և ՚ի գոյութենէ: Օ.մ և ընդոյն եղեն որ լինի սեռ և տեսակ ըստ այսմ ծանիր. զի տարածութիւն է տեսակ քանակութեան. միանգա-

միայն և սեռ նկատմամբ իւրոց ստո-րակայից, որպէս սոքա՝ գիծ, մակե-րևոյթ, մարմին, ժամանակ, տեղի, թիւ, և բան, որ է հնչումն. որք են տեսակք տարածութեան։

## Յօդուած եօթներորդ։

### Մէրոտէն յաղագս տարբերութէ՟։

Տարբերութիւն բաժանի ՚ի հասարակն և ՚ի յատկեղն։ Հասարակ տարբերութիւն կոչի այն որ զբազմաց տեսակաց ստո-րոգի. որպէս սոքա, երկոտանի. չորքոտանի. սմբակաւոր. կճղակաւոր. ոսկրաւոր. ա-նոսկր. փետրաւոր. թևաւոր. փառո-տանի. փառաթևանի. պտղաւոր. ան-պտուղ. ճիւղաւոր. աչքաւոր. ական-ջաւոր, պոչաւոր. եղջիւրաւոր. յորոց իւրաքանչիւրն ասի զբազմաց, կամ զոմանց կենդանեաց, և ոչ զմիոյ։ Այնպէս ջրեղէն. արծաթեղէն. լուսեղէն. ոս-կեղէն. կաւեղէն. հողեղէն. փայտե-ղէն. երկաթեղէն. ծանրաւոր. որք ասին զբազմաց անզգայից իրաց։ և գի-

տեղի է յայսմ վայրի, զի ոմանք 'ի տարբերութեց են բաղկացուցիչք, և ոմանք սոսկ պակասութիւք. որպէս 'ի փետրուորս փետուրքն են բաղկացուցիչ մասունք փետրաւորաց. իսկ անփետուրըն է սոսկ պակասութիւն յունելոյ զփետուր. վասն որոյ այսպիսի տարբերութիւք միայն պակասաբար տարբերեն. որ՝ անբան, անոսկոր, անպտուղ. ևն։

Իսկ յատկեղ տարբերութի կոչի այն, որ զմիոյ տեսակէ միայն ասի. որպէս ահանուականն է յատկեղ տարբերութի կատուի. մայականն ոչխարի. կռաւականն ագռաւու. կնչամայրին կնկոց. հաջողականն շան. բանականն մարդոյ. խխնջականն ձիոյ. ևն։

Ահա բարուոք ասելն է յատուկ Ճարտասանութե միայն. ուղիղ խօսելն, և անսխալ շարադրելն, է յատուկ քերականութե. խօսելն զընդհանուր եղերաց՝ կնախադասութէ, և զհաւաքաբանութէ, է յատուկ տրամաբանութե։ Ճառելն զտեղաշարժական էակաց միայն, է յատուկ բնաբանութե։ ասելն զբարուց միայն, է յատուկ բարոյակա-

նին. առանց սեռի և տեսակի նկատ-
ման՝ վերացելաբար քննելն զյատ-
կութիւն ոմն էակայ, է յատուկ համա-
բնաբանութեան, գիտելն զդիրս, զդասա-
ւորութիւնս և զշարժմունս աստեղաց, է յա-
տուկ աստեղաբաշխութեան. համեմատե-
լն, բարդելն, և բաժանելն զթիւս,
է յատուկ թուաբանութեան: Գիտելն ըզ-
մասունս երկրի, և յօրինելն զնմանութիւնս
ծովու, գետոյ, լերին, ևն. է յատուկ
երկրաչափութեան: երգելն զքաղցրա-
նուագ եղանակս, է յատուկ երաժշ-
տութեան: պէսպէս դեղորայիւք հանել
զցաւս հիւանդութեան 'ի մարդկանէ, է
յատուկ բժշկութեան: լուսաւորագոյն
գոլ քան զամենայն աստեղս, է յատկութիւն ա-
րեգական: արարեալ յալերս և 'ի
ջրոյ, է տարբերութիւն հացի. մի և նոյն
է ասել հացն է կերակուր ալիւրեղէն
և ջրեղէն, կամ ասել արարեալ յա-
լերս և 'ի ջրոյ. և այլ սոյնպիսի բա-
զումք: Ասիցես, փիլիսոփայք բազում
ուրեք 'ի սահմանս բանից զյատուկն
տարբերութիւն ասեն: Պատասխանեմ կամ
վասն բաժանելոյ միայն ասեն, և կամ

Ճարտասանօրէն խօսլի. զի Ճարտասանք զյատուկն և զտարբերութին 'ի տեղի միմեանց 'ի գործ ածեն.

Բայց (որպէս ինձ թուի) ստոյգ տարբերութի է հասարակն, այն ինքն է տեսակարար տարբերութին, որ ստորոգի զտեսակաց, և ոչ անդրադարձի ընդ միում 'ի նոցանէ, որգոն, ամ աղաւնի է փետրաւոր, բայց ոչ ամ փետրաւոր է աղաւնի. Զայսպիսի տարբերութի սահմանէ պորփիւր այսպէս, Տարբերութին է այն, որով կոտորի սեռն 'ի տեսակս, կմ բաժանի, որպէս ձուկն բաժանի 'ի թեփաւորն և յանթեփն, թռչունն բաժանի 'ի փետրաւորն և յանփետուրն, Իսկ յատկեալն (որպէս անունն իւր ցուցանէ) ոչ այլ ինչ է, եթէ ոչ յատուկ միայն, որ ստորոգի զմիոյ եզրէ միայն, և անդրադարձի ընդ նմա, որպէս կենդանին է ննջական, և ննջականն է կենդանի. Պախոտելի է և այս, զի միոյ եզեր կարեն լինիլ բազում յատուկ, քս՝ մարդն է ծիծաղական, ուսումնական և հանճարոյ ընդունական.

## Յօդուած ութերորդ։

### Սերոաէն յաղագս յատկէ։

Յատուկն է, որ ասի զմիոյ միայնոյ և հարկաւ զհետ երթայ էուե̃ նորին։ որպէս ննջականն ասի զմիոյ միայնոյ կենդանւոյ. և հարկաւ զհետ երթայ էուե̃ նորին։ Արդ՝ մին այն, զորմէ ստորոգի յատուկն է կամ սեռ որպէս կենդանին, կամ տեսակ, որպէս մարդ, շուն, կատու, եւն. ապա ոմանք ՚ի յատկաց ստորոգին զսեռէ, և ոմանք զտեսակէ. Նախ ասասցուք զառաջնոյն և ապա զերկրորդէն։ Իսկ ինքեան ենթակայացեալ, պատահման ենթակայ եղեալ, են յատուկ գոյացուե̃. գոլն յայլում կայացեալ, ըստ կայանի ենթակայ չեղեալ, են յատուկ վերացեալ պատահմանն։ Ներքնաշարժական գոլն է յատուկ ամ̃ կեցողի. զանազանօղ գոլն իւրում ենթակայի՝ է յատուկ որակուե̃. յուլի, կամ փոփոխականցուցանօղ իւրում ենթակայի՝ է յատուկ տրամադրուե̃. սաստկուե̃ գործողա-

կանն է յատուկ կարողութե։ ՚Ի վերայ գծի և մակերևութի կայացեալ՝ է յատուկ ձևոյ. գոլն տարածօղ իրին ՚ի մասունս. գոլն տարածական ՚ի կարգի առ ի՛քն. գոլն չափելի և անթափանցելի, են յատկունք քանակութե. գոլն վերբերական առ այլս, է յատուկ առնչութե։ Զափեալ միով, է յատուկ թուոյ. ծագեալ ՚ի պէսպէս տրամադրութե մասանց իրին, է յատուկ կայոյ. ծագեալ ՚ի շրջարկութե զգեստուց, կամ զինուց, է յատուկ ունելոյ. գոլն ներգործութե պատճառօղ զին է յատուկ առնելութե։ ՚Ներգործութե կրօղ զին յումեքէ ներգործողէ, է յատուկ կրելութե. գոլն ծագեալ ՚ի ժամանակէ, է յատուկ երբէին. յայտնօղ տրամաբանութե մտաց՝ է յատուկ բանի. Նշանակօղ իրակութե է յատուկ բայի. եւն։

Նմանիր և զայս Հարկաւորապէս. զի ոմանք ՚ի տարբերութեց և ՚ի յատկաց ըստ ինքեանց միայնակ տարբերեն և յատկացուցանեն զիրս, որպէս բանականն միայնակ տարբերէ զմարդն. տիբասիրականն միայնակ յատկացուցանէ

զշունն։ Իսկ ոմանք հանդերձ խնդրով խուրեանց. որպէս յայտ է 'ի վերագոյն գրելոյդ։ Ոմանք լինին ընդունելութիք յանդգեալք 'ի օղ, 'ի իչ, 'ի եալ. և ոմանք դիմաւոր բայք. զի ածական անունն, դիմաւոր բայն և օղ` իչ` եալ` ընդունելութիւքն իբր զնոյն դնին 'ի բանի. վասն զի նոյն է ասել շաղկապն է միաւորօղ. շաղկապն է միաւորական, կամ շաղկապն միաւորէ. այսպէս իմա և զայլսն։ Դիմաւոր բայն, օղ` իչ` եալ ընդունելութիւքն, որք եդեալք են 'ի տեղի տարբերութե և յատկի. անթիւք են 'ի փիլիսոփայական գրենս. և մանաւանդ 'ի հաւաքաբանութիս և և 'ի սահմանս իրաց. որգոն բաղկացեալն 'ի գեղազանգուած մարմնոյ, և յաննիւթական հոգւոյ, գերագոյն էութ` նախ է քան զանասունս. արդ` մարդն է բաղկացեալ 'ի գեղազանգուած մարմնոյ, և յաննիւթական հոգւոյ. ուրեմն մարդն գերագոյն էութ նախ է քան զանասունս։ Գոյացութիւն է եակ ըստ ինքեան ենթակայացեալ. նախադրութիւն է մասն բանի որ աւա-

դրի հոլովական մասանց. գրեմն է բայ ներգործական: Ահա ծանեար զածական անուան. զընդունելութիւն և զդիմաւոր բայն 'ի տեղի միմեանց զվարիլն. ապա ժամ է մեզ դառնալ 'ի կարգ բանի մերոյ:

Գոլն փաղանունաբար ստորոգական զիւրեանց ստորակայից, է յատուկ մեր ձաւոր սեռից և տեսակաց: գոլն ըստեղծեալ, է յատուկ տրամաբանական էակի. գոլն մշտականաց՝ է յատուկ ցըրդւոյ, գիոյ, և ոյլոյ:

Իսկ այն յատուկք, որք զմիոյ տեսակէ միայն ստորոգին, են այսոքիկ. գոլն յիւրում ծանրուէ վերայ կայացեալ, է յատուկ հողոյ: մաքրողականն մարմնական աղտից, է յատուկ ջրոյ: կատարողականն իւրոց ընթացից յաւուրս քսան և եօթն, և 'ի մեծագոյս պատճառօղն արծաթոյ է յատուկ լուսնի: Կատարօղն իւրոց ընթացից յամիսս ժբ, և 'ի մեծագոյս գոլն պատճառական ոսկւոյ է յատուկ արեգական: քարշողականն երկաթոյ առ ինքն, է յատուկ մագնիսի: ուղղականն իւրոց բարու-

նակայ առ ջուրն է յատուկ դդմենւոյ։ ուղղականն ինքեան առ հիւսիսայինն բևեռ, է յատուկ մագնիսի։ դնօղն զբոյն յառաստաղս տանց է յատուկ ծիծռանց։ Պիտելի է և այս. զի թէպէտ յատուկն միշտ թանձրացեալ եղեր նկատի. որպէս և մեք 'ի գրուածս մեր ջանացաք թանձր դնել. բայց միշտ թանձր դնելն անհամ առնէ զշարադրութիւն. վասն այսորիկ 'ի գրուածո փիլիսոփայից, ճծաբանից և այլ վարդապետաց, բազում ուղղականք աներևոյթ բայից, կան եղեալ 'ի տեղի յատկաց. որգոն՝ 'ի խրիլն ընդ ցեխ միանգամ, ոչ ևս անցանել ընդ նոյն տեղի, է յատուկ իշոյ. յածելն զձու բուռնալ զձին, է յատուկ մարի հաւու։ սիրել զտէր իւր է յատուկ շան։ շարժել միայն զվերին կլափն է յատուկ կոկորդիլոսի։

Սայլակի աներևոյթ յաթկուն ասի։

## Յօդուած իններորդ։

### Յաղագս պատահմանց։

Որդ՝ վասն պատահման ասացաւ թէ, պատահումն ներընդունի զդիւրափոփոխումն ինչ. ապա պարտիս մտօքըդ զոմն պատահմունս բառնալ յիրաց եթէ իրքն կարասցեն պահել զէութիւն իւրեանց անեղծանելի է պատահումն օր՝ ի բառնալ զառաքինութիւն ի պետրոսէ, պետրոսն պահէ զէութիւն մարդկութեան իւրոյ, և ոչ եղծանի։ Իսկ եթէ ոչ կարասցեն անեղծանելի պահել, է յատուկ իմն տարբերութիւն. օր՝ զերկոտանի ննջականն եթէ բարձցես, եղծանի էութիւն կենդանեաց։

Պատահումն բաժանի ի թանձրացեալն և ի վերացեալն։ Թանձրացեալն է, որ ստորոգի զենթակայէ իւրմէ. օր՝ բամբակն է սպիտակ։ Իսկ վերացեալն ստորոգիլ ոչ կարէ զենթակայէն, զի ոչ լինի ասել, բամբակն է սպիտակութիւն։ Թանձրացեալք են սոքին, փեսայ, հարսն, զոքանչ, աներ, վրդպո.

աշակերտ. դպիր. վարժապետ. դարբին. ոսկերիչ. բրուտ. խոհակեր. կօշկակար. տէր. ծառայ. սպասաւոր. բըդեշխ. թագաւոր. թագուհի. դշխոյ. քահանայ. եպիսկոպոս. աստուածաբան. փիլիսոփայ. ճարտասան. քերթող. աստեղաբաշխ. երկրաչափ. թուաբան. երաժիշտ. և այլք բազումք, որք ասին զենթակայէ իմեքէ 'ի թանձրացելումն. Իսկ վերացեալ պատահմունքն կարեն լինել վերոգրեցեալ քդ, մինչ ածանիցին 'ի ձեւն մասնկանս՝ ութիւն. որպէս՝ առաքինութիւն, մոլութիւն, փեսայութիւն, հարսնութիւն, վարդապետութիւն, աշակերտութիւն. Եւն. Այլ ծանիր, զի մի կարծեսցես, թէ վերացեալ պատահումն միշտ լինի ութիւն մասնկաւս ձեւացեալ, օն անդր. զի բազումք են 'ի վերացելոց պատահմանց առանց ածանցման, որք նշանակեն զէութիւն իւրեանց 'ի վերացելումն. որգոն հանճար. արհեստ. իմաստ. գոյն. լոյս. հոտ. ձայն. ախտ. նախանձ. ոխ. Եւն. Թէ ածանցմամբ լինի եզրն, և թէ առանց ածանցման, հարկաւոր միայն

է, զի ծանիցես, թէ այս ինչ եզր վերայեալ է, և այն ինչ եզր թանձրացեալ. այս ինչ եզր յենթակայէ վերանայ, և այն ինչ եզր զենթակայէ ստորոգի։ Գիտելի է և այս. զի ոմանք յեզերաց բաց 'ի յընդհանուր նշանակութէ խուրեանց, միոյ տեսակի միայն ես պատկանելով լինելին յատուկ. ոպ ջերմն, բաց 'ի յընդանուր նշանակութէ խուրմէ, Հրոյ իսկ պատշաճելով՝ կոչի յատուկ նմա, որոյ պէս և այլք գտանին։

'Ի վերջոյ ծանիր և զայս. զի վասն տարբերութե ասացաւ թէ, ոմանք 'ի տարբերութեց բաղկացուցիչ մասն իբրայ լեալ՝ ցուցանեն զինքեանս. և ոմանք սոսկ պակասաբար տարբերեն. ոպ մտաւորն ցուցանէ զմիտս լինիլ մասն մարդոյ. իսկ անմիտն պակասաւոր միայն տարբերէ։ Արդ կորէլ տարբերութի է, որ առ բաղկացուցիչ մասն իւրն վերաբերի. իսկ այլ տարբերութիքն, որք պակասաբար միայն տարբերեն. ոպ անբան, անհոգի, անմարմին, և այլք այսպիսիք կոչին սոսկ տարբերութիք, և ըստ իմիք կարեն առյատուկս եւս վերաբերիլ։

## Յօդուած տասներորդ.

### Յաղագս գեղեցկաց ճարտարութեանց և դպրականութեան ընդհանրապէս:

Հասարակ է սեռին փաղանունաբար և գոյականապէս նշանակել: Իսկ յատուկ նորա է ստորոգել զտեսակս: Նոյնպէս հասարակ տեսակին է փաղանունաբար նշանակել և գոյականապէս. այլ յատուկ նորա է զանհատից միայն ստորոգել: Հասարակ տարբերութեան է ածականաբար նշանակել. և յատուկ նորա է առ բաղկացուցիչ մասն իրին վերաբերիլ: Հասարակ յատկի է ածականաբար նշանակել. և յատուկ նորա է հարկիւ զհետ երթալ իրին: Հասարակ պատահման է ածականաբար նշանակել. և յատուկ նորա է ներընդունիլ զդիւրափոփոխութիւն և միանգամայն զընդհանրութիւն և զմասնաւորութիւն: Հասարակ գոյացութեան է էակն գոլ՝ այլում գոյացութեան աններհական գոլ զյաւէտն և զնուազն ոչ ընդունիլ. բայց յատուկ նորա է ըստ ինքեան

ենթակայանալ, և պատահմանց. կամ ներհակնց ենթակայ գոլ: Հասարակ քանակութե է պատահումն գոլ, այլում քանակութե աններհակն գոլ, զյաւէտն և զնուազն ոչ ընդունել. և յատուկ նորա է անմիջապէս բաղկացուցանել զմարմնեղէն գոյացութի, ընդ այլ քանակութի անթափանցելի գոլ, և էութետարածելի գոլ: Հասարակ առնչութե է պատահումն գոլ, այլում առնչութե աններհակն գոլ, զյաւէտն և զնուազն ոչ ընդունել, ևն. իսկ յատուկ առնչութե է առ միմեանս վերաբերել գոլ և առ այլ ստորոգուիս ոչ վերաբերել: Հասարակ որակութե է պատահումն գոլ, այլում որակութե ներհական գոլ, զյաւէտն և զնուազն ընդունել, (թէպէտ ոչ ամ որակութի ունի զներհակութի, կամ զյաւէտ և զնուազ.) ունել զնմանութի և զաննմանութի. և յատուկ որակութե է զանազան ցուցանել զիւրն ենթակայ: Հասարակ առնելութե է պատահումն գոլ, այլում առնելութե ներհական գոլ, զյաւէտն և զնուազն ընդունել. իսկ յատուկ առնելութե է՝ տալ

ենթակայի իւրում ներգործութ՟ պատ-
ճառել զինն։ Հասարակ կրելութ՟ե է
պատահումն գոլ, ունիլ զներհական,
ունիլ զյաւէտ և զնուազ. և յատուկ
նորա է ներգործութ՟ ցուցանել զեն-
թակայ իւր կրօղ զինն յայլմէ ներգոր-
ծողէ։ Հասարակ ուրի է պատահումն
գոլ, այլում ուրի աններհական գոլ
զյաւէտն և զնուազն ոչ ընդունիլ, հա-
կակայութ՟ կայանալ. և յատուկ ուրի
է 'ի տեղւոջէ և 'ի տեղակալէ ծա-
գիլ։ Հասարակ երբի է պատահումն
գոլ, այլում երբի աններհական գոլ,
զյաւէտն և զնուազն ոչ ընդունիլ, և
յատուկ երբի է ծագիլ 'ի ժամանա-
կէ և 'ի ժամանակաւորէ։ Հասարակ
կալոյ է պատահումն գոլ, կալ կալոյ
աններհական գոլ, զյաւէտն և զնուազն
ոչ ը՟ունիլ. և յ՟տկ ն՟ր է 'ի պէս՟պ փո-
փոխուէ՟ և 'ի դրուէ՟ մասանց իրին ծա-
գիլ 'ի տեղւոջ։ Հ՟րկ ունելոյ է պ՟տհու-
մն գոլ, ունիլ ունելոյ ներհական գոլ,
զյաւէտ և զնուազ ը՟ունիլ. և յատուկ
նորա է 'ի պ՟սպ՟ շրջարկուէ՟ զգեստուց,
զարդուց և զինուց ծագիլ։

## Յօդուած մետասաներորդ։

### Յաղագս հակաստորոգ և անհակաստորոգ եզերաց։

Հակաստորոգ եզրն է այն, որ ունելով զհաւասարութիւն ընդ այլում եզեր, անդրադարձի ընդ նմա. որպէս եզրս բանական ընդ պարունակութեան իւրում ունելով զհաւասարութիւն ընդ եզերս մարդ, անդրադարձի ընդ նմա. որգոն՝ մարդն է բանական, բանականն է մարդ. և ընդ այսմ են խխնջական, զունչական, նուական. և այլն։ Իսկ անհակաստորոգ եզրն է այն, որ ոչ անդրադարձի ընդ այլում եզեր. որպէս կենդանին ոչ անդրադարձի ընդ մարդոյն. զի կենդանին ընդհանուր է քան զմարդն, որգոն, ամենայն մարդ է կենդանի, բայց ոչ ամենայն կենդանի է մարդ. ամենայն ձնձղուկ թռչուն է, բայց ոչ ամենայն թռչուն ձնձղուկ է. և այլն. և զայլ որպիսութիւնս հակաստորոգ և անհակաստորոգ եզերաց տեսցես ի նախադասութեան։

## Յօդուած ժբ։

### Յաղագս դրական և պակասական եղերաց։

Դրական եղըն է այն, որ ունի ըղձլինելութիւն էութեան. որպէս քար. հող. ջուր. ևայլն։ Իսկ բացասական, կամ պակասական եղըն է այն, որ ոչ ունի զլինելութիւն էութեան, այլ սոսկ զպակասութիւն. որպէս՝ մութ. խաւար. գիշեր. մահ. անմահ. անբան. անխիղճ՝ մտաւք. անոսկր. անպտուղ. ևայլն. որք նշանակեն զպակասութիւն էութեան. որպէս մահն է պակասութիւն կենաց. անմահն՝ պակասութիւն մահու, կամ չլինելութիւն. և ոչ թէ մահն է էակութիւն ինչ. անբանն է պակասութիւն բանի. անպտուղն պակասութիւն պտղոյ. ևայլն։

## Յօդուած ժգ։

### Յաղագս իրական էակի, և էակի բանի։

Իրական էակն է այն, որ զկնի ըստեղծման իւր ընկալաւ զանուն որպէս լուսին. արեգակն. երկին. երկիր. ևայլն։

Իսկ կակ քանի է այն, որ յետոյ մտօք հնարեցաւ, և յաւելաւ յիւսկան էակս որպէս սեռ. տեսակ. ենթակայ. ստորոգեալ. եւն.

## Յօդուած ժդ.

### Մերոպէն յաղագս սեռի՝ տեսակի, անհատի՝ և պատահմանց։

Թէպէտ սեռն կարէ լինել տեսակ, և տեսակն սեռ, որպէս կենդանին լինի տեսակ կեցողին, և սեռ մարդոյ, և այլոց կենդանեաց, միայն վերին սեռն մնայ սեռ, և ոչ կարէ լինել տեսակ, և ներքին տեսակն մնայ տեսակ, և ոչ կարէ լինել սեռ, բայց հասարակօրէն սեռ և տեսակ զներքինսն ասեն։ Ծանիր և զայս. զի մի և նոյն անհատըն կարէ լինել տեսակ. բայց մի և նոյն ներքին տեսակն ոչ կարէ լինել սեռ. զի արեգակն է մի և նոյն անհատ. և ոչ գոյ այլ և այլ արեգակն. ապա մի և նոյն արեգակն է տեսակ և անհատ. և ներհակ այսմ տեսակն ոչ կարէ լինել սեռ. որպէս մարդն է տեսակ և ոչ կարէ լինել սեռ. Տեսակ

ասէին ոյնք որք աննման գտանին մի-
մեանց որպէս մարդ, ձի, ոչխար, գո-
մէշ, եզն, նապաստակ, խոզ. և այլ յայժ
բաղումք, որք ամենեքեան տեսակաւ
տարբեր և աննման են միմեանց.
զի այլ տեսակ է մարդն, այլ տեսակ
է ձին, և այլ տեսակ է ոչխարն. Եւ
Ուսանիր և զայս հարկաւորապէս. զի
տասն ստորոգութիւնքն ոմ են ըն մի-
մեամբք սեռ և տեսակ, որգոն՝ գո-
յացութիւն. կեցող. կենդանի Թռչուն.
քանակութիւն. տարածութիւն. Թիւ. որա-
կութիւն. ունակութիւն. գիտութիւն. Եւ
Ընդ միմեամբք սեռք և տեսակք առա-
ւել գտանին ի գոյացութեան և յորակութեան,
քան յայլս.

Ուսարկիցես, հինգերորդ ընդհա-
նուրն պորփիւրի զի՞արդ պատահումն
ասացաւ. Պատասխանեմ. որովհետև
գոյացութիւնք ոմանք կարեն առանց նոր ա-
նեղծանելի պահել զէութիւնս իւրեանց. որպէս
թէ եղեգն կարէ անեղծանելի պահել զէ-
ութիւն իւր առանց սպիտակութեան. զի թըռ-
թոյ ոչ միայն սպիտակութիւն, այլ նա
և այլ գոյնք կարեն հանդիպիլ պա-

տահաբար, վասն այն ասի պատահու-մըն։

Խնդրեսցես, ինն ստորոգելիքն Արի-ստոտելի վասն է՞ր կոչին պատահումն։ Պատասխանեմ։ որովհետեւ ինն ստո-րոգելիք ոչ են յէութենէ գոյացու-թեանս, այլ՝ են էակութիւնք այլա-տարազք, եւ պատահաբար յեցեալք՝ի գոյացութիւնս. վասն որոյ եւ կոչին պա-տահմունք։

Յօդուած ԺԵ.

Սերաբէն յաղագս ձայնի գաղափարի եւ իրի։

Ձայնն է հնչումն ենթակայ լսե-լեաց. գաղափարն նշան իրի. իսկ ձայ-նիւ իմանամք զգաղափարն, եւ գաղա-փարաւ զիրն. Օր. յասելըն քեզ իմ մարդ, ձայն մարդոյ հասանէ յականջս քո, եւ ըմբռնես զկերպն եւ նովաւ զիրն. ձայնն կապակցի ընդ կերպին՝ եւ նա կապակցի ընդ իրին. իրքն յառաջագոյն ոչ ունէին զանուն, եւ մինչ եդին նոցա անուանս, ձայնիւ եդին, եւ ձայնիւ նշանակեցին. վասն որոյ եւ ասի ձայնն է նշան գաղա-փարի, եւ գաղափարն է նշան իրի։

## Յօդուած ԺԶ։

Պատճառ յաղագս տարբերութեան ի յաջէ։

Գրելոյ զթուղթ է յատուկ գրչի։ Հանելոյ զհաց 'ի թոնրէ է յատուկ հացահանի կազմեալ 'ի կաթանէ, և 'ի խախացէ, է տարբերութ՟ն պանրոյ գոլ կազմեց՟ել 'ի խմորոյ և յիւղախառըն ալերբէ, է տարբերութիւն կարկանդակի եփելոյ զհացն 'ի թոնրի է յատուկ հացագործութեան։ կարելոյ զմուշիկս ոտից է յատուկ կօշկակարուե՟։ Ձևելոյ զպէսպէս կտորս շորից է յատուկ մկրատին։ ըմբռնելոյ զձուկն 'ի ծովէն է յատուկ ուռկանի կազմեց՟ել 'ի ձուոյ և յիւղոյ է յատուկ ձուազեղի կազմեցեալ 'ի բրնձոյ և յիւղոյ է տարբերութ՟ն փլաւի կազմեցեալ 'ի գէր մսոյ և 'ի ջրոյ միայն, է տարբերութիւն խաշուի։ կազմեցեալ 'ի թիւթիւնէ է տարբերու՟ն պչրնդեղի։ Մի և նոյն է ասել ձուազեղն է կերակուր ձուեղէն և եղեղէն, կմ՟ ասել կազմեցեալ 'ի ձուոյ և յիւղոյ։ աղն է ջրեղէն. կամ գոյացեալ 'ի ջրոյ. քարն է հողեղէն. կամ գոյացեալ 'ի հողոյ։

այսպէս իմն և ղայլմն նշանակմնն է յատուկ բառի ծագեալ 'ի բայէ, է յատուկ ընդունելութեն։ եղեալ փոխանակ անուան՝ է յատուկ դերանուան։ առադրեալ 'ի վերայ բայի, և բայէ զօրութի ունողաց, է յատուկ մակբայի։ առադրեալ 'ի վերայ հոլովական մասանց, է յատուկ նախադրութեն։ միաւորօղ զմասունս բանին, կամ զնոյն ինքն զբանն ընդ միմեանս է յատուկ շաղկապին։

## Յօդուած ժէ.

### Յաղագս գոյացականն սեռից և տեսակաց ընդ միմեանց եղելոց։

Գոյացութիւն, հոգի, հրեշտակ, գաբրիէլ, միքայէլ, ուրիէլ, ազարեա։ Մարմին, տարր, հող, ջուր, օդ, հուր։ Մարմին, գիր, ա, բ, գ։ Մարմին, ակն, մարգարիտ, զըմրուխտ, բուստ, անդամանդ, ևն։ Մարմին, հրահալելի, ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ, ևն։ Արուեստական, շինուած, տուն,

գոմ, սենեակ, եւն, Արուեստական շինուած․ գործի, ուրագ, կացին, մանգաղ, դանակ, ուռն, եւն: Մարմին, հանդերձ, շապիկ, վարտիք, չուխայ, կապայ, եւն: Կեցող, սունգ, կարմրասունկ, դեղնասունգ, փոշեսունգ, ծրմակասունգ, ծառասունգ: Կեցող, ծաղիկ, վարդ, մանուշակ, շուշան, նօնօփար, եւն: Կեցող․ պտուղ, տանձ, խնձոր, խաղող, թութ, թուզ, ալոճ; եւն: Կեցող, բոյս, տունկ, ծառ, զղերենի, ընկզենի, տանձենի, թթենի, եւն: Կենդանի, գորտն, կանաչ, ջրային, ոստան գորտն: Կենդանի, գազան, արջ, ինձ, առիւծ, գայլ, ճագար, եւն: Կենդանի․ զեռուն, մրջիւն, ճճի, լու, ոջիլ, մարախ, եւն: Կենդանի, ձուկն, թրաձուկն, օձաձուկն, տառեխ, եւն: Կենդանի․ օձ, արքայիկ, քարբ, իժ, խարամանի, եւն: Կենդանի, թռչուն, կաքաւ, աղաւնի, ագռաւ, բու, տատրակ, եւն: Կենդանի, էրէ, այծեամն, եղն, եղջերու, եւն:

## Յաղագս պարագայական ոճոյց և պէսակաց ընդ միմեանց եղելոց։

«Քանակութիւն. տարածութիւն. գիծ. մակերևոյթ. մարմին. տարածութիւն. թիւ. բ. ժ. ճ. ևն։
Որակութիւն. ունակութիւն. հանճար. (արհեստ) գիտութիւն։ Ունակութիւն, առաքինութիւն (հաստատ) յոյս (սէր) արիութիւն (բարեխառնութիւն) արդարութիւն. ևն։
Ունակութիւն. փիլիսոփայութիւն. տրամաբանութիւն. բնաբանութիւն. բարոյականութիւն. համաբնաբանութիւն։ Որակութիւն. տրամադրութիւն. կասկածանք. կարծիք. երկբայութիւն, վարանմունք։ Տրամադրութիւն. մոլութիւն. արբեցութիւն. շուայտութիւն. շնութիւն. ևն։ Որակութիւն. կարողութիւն. տեսողութիւն. լսողութիւն. պնդութիւն։ Որակութիւն. տկարութիւն. տկար տեսողութիւն. տկար լսողութիւն. կաղութիւն։ Որակութիւն. ձև. ոսպնաձևութիւն. ձուաձևութիւն. քառակուսութիւն. բոլորակութիւն. ևն։ Որակութիւն. տեսակ. դէմ. կերպ. տեսակ տան. տեսակ նաւի։ Որկութիւն. կիրք. համ. հոտ. շօշափական որակութիւն։ Կիրք. համ. դառնութիւն. քաղցրութիւն. տտպութիւն։

Այլք. հոտ. ժահահոտութիւն. անուշահո-
տութիւն։ Այլք, շօշափական որակութիւն. ջեր-
մութիւն, ցրտութիւն, ցաւ, շօշափական որա-
կութիւն. ցաւ. դալուկն. թանչ. ոտնութիւն.
տեռատեսութիւն։ Ընելութիւն. Ճանաչել.
համարել. գիտել. դատել. իմանալ։ Ը-
նել. զգալ. տեսանել. շօշափել. ճաշել.
լսել. կարծել. երեւակայել։ Կրելութիւն.
Ճանաչիլ. համարիլ. դատիլ. իմացեալ
լինել. եւն։ Կրեալ. զգայեալ լինել.
շօշափիլ. ճաշիլ. լուեալ լինել. եւն։
Երբ. ՚ի ժամանակի. յանցելումն. ՚ի
ներկայն։ ՚Ի ժամանակի. յանցելումն.
հերու. երէկ։ ՚Ի ժամանակի. ՚ի ներ-
կայն. յայսմ ամի. այսօր։ ՚Ի ժամանա-
կի. յապագայն. յապագայ ամի, վաղիւն։
Ունիլ. զգեստաւորիլ. շապկաւորիլ.
կապաւորիլ. վարտկաւորիլ. մաշաւորիլ.
փետրաւորիլ։ Ունիլ. զինուորիլ. թրա-
ւորիլ. զրահաւորիլ. վահանաւորիլ.
նիզակաւորիլ. ձիրանաւորիլ։ Ունիլ.
զարդարիլ. պսակաւորիլ. կօշկաւորիլ.
մանեկաւորիլ. եւն։

Աւարտ եղերաց։

## Գլուխ եօթներորդ։

### Յաղագս դասու ստորոգութեանց։

Գոյացութիւն է էակ ըստ ինքեան ենթակայացեալ. և այլ պատահմունք լինին ՚ի նմա կայացեալք։ Զոր օրինակ արեգակն է գոյացութիւն, որ չէ յայլում կայացեալ, այլ է ինքն ըստ ինքեան, իսկ լոյսն, բոլորակութիւն և այլն. են յարեգական կայացեալք։ Հուրն է գոյացութիւն. ջերմութիւն, չորութիւն, այրողութիւն և այլն, են ՚ի հուրն կայացեալք։ Ջուրն է գոյացութիւն. ցրտութիւն, խոնաւութիւն և այլն, են պատահմունք կայացեալ ՚ի ջուրն. այսպէս իմա և զայլս։

Աստանօր ոմանք յաղագս գոյացութեան խօսին այլ և այլ։

Առաջինն է, թէ գոյացութիւնն կացուցանի՝ ենթակայ լինելովն պատահմանց։ Երկրորդն, թէ ենթակայ լինելովն ըստ ինքեան։ Երրորդն, գոյացութիւն կացուցանի չլինելութեամբն յայլում։

## Յաջորդութիւն։

Գոյացութե կայուցիչ ոչ է բացասութին գոլոյ յայլում. և ոչ ենթակայելն պատահմանց, այլ ենթակայանալն յինքեան։ Օրօրինակ՝ արեգակն վն այնր լուսատու լինի այլոյ. զի յինքեան է լուսաւոր. նոյնպէս գոյացութին ենթակայ լինի պատահմանց. զի ըստ ինքեան է ենթակայացեալ։ Աւստի և ուղիղ սահմանի. էակ ըստ ինքեան ենթակայացեալ. որպէս և պատահումն է էակ յայլում կայացեալ։ որոյ իմացուած այս է. գոյացութին է էակ. որում պարտ է լինել ըստ ինքեան. և պատահումն է էակ, որում պարտ է լինել կայացեալ յայլում։

Յախյես, գոլն յինքեան՝ է սոսկ բացասութի գոլոյ յայլում։ ապա բացասութին բերի 'ի կացուցանել զգոյացութին։ Պատասխանեմ. ուրանալով զառաջարկութիդ. զի թէ գոլն յայլում է դրական ինչ. ևս առաւել գոլն ըստ ինքեան որ կատարելագոյն է քան զգոլն յայլում։

## Յօդուած առաջին։

### Թէ քանապատիկ են գոյականքն։

Գոյացութիւն բաժանի յառաջին և յերկրորդ։ Առաջին գոյացութիւնք են անհատք. որպէս պետրոս, այս ոչխար, այն ձի, այս հող, այն ջուր, եւն։ Երկրորդ գոյացութիւնք են սեռն և տեսակն. որպէս մարդ, կենդանի, հող, տարր։ Արդ՝ երկրորդ գոյացութիւնք ստորոգին զառաջնոցն. որգոն, պետրոս է մարդ կենդանի. կուտեալս է հող՝ տարր։

Ասացաք երկրորդ գոյացութիւնք ստորոգին զառաջնոցն իբրև զենթակայից իւրեանց։ Ենթակայն կրկին է, ըստ կայանի ենթակայ. ըստ ստորոգման ենթակայ։ Ըստ կայանի ենթակայ են գոյացութիւնք, յորում կայանան պատահմունք. որպէս թուղթս է ըստ կայանի ենթակայ սպիտակութեան։ Ըստ ստորոգման ենթակայ. որպէս անհատք լինին ստորոգման ենթակայ ընդհանուր գոյացութեանց. որպէս տեսանի 'ի վերոյգրեալսդ։ Կամ ընդհանուր պատահմունք ստորոգին զմասնաւորաց։ Զենթակա-

չէ և ոչ յենթակայում։ Յենթակայում. և ոչ զենթակայէ։ Յենթայում և զենթակայէ։ Ոչ զենթակայէ և ոչ յենթակայում։ Զենթակայէ և ոչ յենթակայում են ընդհանուր գոյացութիւնք. որպէս կենդանին և մարդն ստորոգին զպետրոսէ և ոչ կայանան ՚ի նմա։ Յենթակայում և ոչ զենթակայէ, է մասնաւոր պատահումն, որպէս ոմն առաքինութիւն է ՚ի մարդ. և չէ ընդհանուր, որ ստորոգեսցի զենթակայէ իմիքէ։ Յենթակայում և զենթակայէ է ընդհանուր պատահումն. որպէս առաքինութիւն կայանալով ՚ի մարդ՝ ստորոգի զհիւրընկալութենէ, զհամեստութենէ, զճգնութենէ ևն։ Ո՛չ զենթակայէ և ոչ յենթակայում. մասնաւոր գոյացութիւն է. որպէս պետրոս. որ ոչ ունի զկայանի ենթակայ, եթէ ինքն ՚ի նմա կայացեալ իցէ. և ոչ ունի զստորոգման ենթակայ, զորմէ ստորոգեսցի. այլ է ինքն ըստ ինքեան ենթակայացեալ։

Իսկ արդ՝ ըստ կայանի ենթակայն լինի և ըստորոգման ենթակայ. և ոչ

անդրադարձեալ. իբր թէ՝ ա՟մ ը՟ կայանի ենթակայ է ստորոգման ենթակայ՝ բայց ոչ ա՟մ ստորոգման ենթակայ՝ է ըստ կայանի ենթակայ: Վասն զի գոյացութի՟ւ լինի կրկին ենթակայ, ըստ կայանի ենթակայ լինի. յորում կայանայ պատահումն. որպէս հուրն է ենթակայ ջերմութե՟. ըստորոգման ենթակայ ևս է, զի ընդհանուր գոյացութի՟ն ստորոգի զանհատ գոյացութե՟: Իսկ պատահումն պատահման լինի միայն ստորոգման ենթակայ. (յ՟ր մասնաւոր պատահումն լինի ենթակայ ստորոգման ընդհանուր պատահման. որպէս սպիտակութի՟ն է գոյն. հիւրընկալութի՟ն է առաքինութի՟
Խնդրեցես, ընդէ՞ր անհատք ասին առաջին գոյացութի՟. իսկ սեռք և տեսակք երկրորդ գոյացութի՟: Պատասխանեմ, թէ անհատք են տիրապէս գոյացութի՟. վասն զի որովհետև գոյացութի՟ն զերկու ինչ ցուցանէ, զենթակայանալն յինքեան և զենթակայելն պատահմանց, երկոքին սոքա մաւանդ յարմարին անհատից. Վասնզի

անհատք նախ և ըստ ինքեան ենթակային պատահմանց․ զի ոչ եթէ մարդն ընդհանրապէս ախտանայ․ կամ ընթանայ․ կամ իմաստասիրէ․ այլ այս մարդ առանձին։

Առաջարկութի՟ւ

Ա՟ծ ոչ պարունակի ընդ ստորոգու՟թ գոյացուե՟։ Զի ա՟ծ է վեր քան զգոյացութի՟, քան գոյացութի՟։ Զի ա՟ծ ոչ սեռ է, և ոչ տեսակ, և ոչ անհատ։ Ցուցանի պատճառաւ․ Որ ոչ բաղկանայ 'ի սեռէ և 'ի տարբերութ՟է՝ ոչ դնի 'ի ստորոգուե՟։ Ա՟ծ ոչ բաղկանայ 'ի սեռէ և 'ի տարբերութ՟է, ուրեմն ոչ դնի 'ի ստորոգուե՟։ Գերամաքուր ներգործութ՟ին ոչ բաղկանայ 'ի սեռէ և 'ի տարբերութ՟է․ այլ ա՟ծ է գերամաքուր ներգործուե՟․ ապա ոչ բաղկանայ 'ի սեռէ և 'ի տարբերութենէ։

## Յօդուած երկրորդ։

### Յաղագս յատկութեանց գոյացութեան։

Վեց յատկութիւնս գոյացութեան յառաջ բերէ արիստոտէլ. զորս կամեցեալ մեկնել համառօտ, ծանիր. զի սոքա չեն յատկութիւնք բնականք. այլ միայն յատկութիւնք առատրութեան. քանզի ոչ են իրապէս զանազանեալ 'ի գոյացութենէ. այլ միայն երկրորդական ծանօթութիւնք ինչ. որք ընծային գոյացութեան.

Առաջին յատկութիւն է ոչ յարիլ յենթակայ. քանզի սովաւ տարբերի 'ի պատահմանէ. և այս յատկութիւն յարմարի եթէ առաջին և եթէ երկրորդ գոյացութեան։

Երկրորդ յատկութիւն է չունիլ ներհական անձկագոյն առեալ. վասնզի ներհականքն են, որ 'ի նոյն ենթակայէ մերժեն զմիմեանս. ուստի որպէս գոյացութիւն ոչ է յենթակայում, նոյնպէս և ոչ կարէ մերժել զայլ ինչ յենթակայէ։ Սակայն են ներհական որակութեանց գոյացութիւնք մարմնչին են միմեանս ըստ

ցրտութեան և ջերմութեան ըստ չորութեան և ըստ խոնաւութեան։

Երրորդ յատկութիւն է չընդունիլ զյաւէտ և զնուազ· զի ոմանք ՚ի գոյացութեանց թէպէտ արժանապատիւ են քան զայլս· որպէս հրեշտակք քան զմարդիկ· և մարդիկ քան զանասունս, սակայն նոյն գոյացութիւն ոչ է երբեմն յաւէտ և նուազ· որպէս նոյն ջերմութիւն երբեմն է սաստիկ և երբեմն մեղմ։

Չորրորդ յատկութիւն է լինել ենթակայ ներհակաց· զի որովհետև գոյացութիւն է ենթակայ պատահմանց, կարէ ընդունիլ զներհական պատահմունս· որպէս երկինք ընդունին զպէսպէս շարժմունս· և տարերք զայլ և այլ որակութիւնս։

Հինգերորդ յատկութիւն է ստորոգիլ փաղանունապէս զստորակայից։

Վեցերորդ յատկութիւն է լինելն ըստ ինքեան ենթակայացեալ· առ ՚ի տարբերութիւն ՚ի պատահմանց, որք են յայլում կայացեալ։

## Պրակ ութերորդ.

### Յաղագս քանակութեան.

Քանակութիւն է պատահումն տարա-
ծօղ իրին 'ի մասունս։ Քանակութիւն
է առաջին պատահումն, որ անմիջա-
պէս տրամակայէ զմարմնեղէն գոյա-
ցութեան. որոյ միջնորդութեամբ ընդունի գո-
յացութիւն և զայլ պատահմունս. որպէս
զձև, զգոյն, ևն։
Բուն քանակութեան կայանայ 'ի տարա-
ծութեան մասանց։ Ուստի էապէս սահ-
մանի։ Տարածօղ գոյացութեան 'ի մասունս։

### Առաջարկութեան.

Քանակութիւն իրաւապէս զանազանի
'ի գոյացութենէ. զերկայնութիւն՝ լայնութիւն և
խորութիւն են քանակութիւնք. և ոչ գոյացութիւն։
Քանակութիւն ընդհանրապէս բաժանի
'ի մնացող և 'ի յաջորդական։
Մնացող քանակութիւն է տարածութիւն 'ի
մասունս միանգամայն գոյօղս. որպէս
գիծ և մակերևոյթ են տարածեալք

՚ի մասունս․ միանգամայն գոյօղս ՚ի բոլորում։ Յաջորդական քանակութիւն է տարածութիւն ՚ի մասունս․ որ հոսին յաջորդութեամբ․ որպէս օրն տարածի ՚ի ժամս, որք ոչ են միանգամայն, այլ միմեանց յաջորդեն։ Քանակութիւն յաջորդական բաժանի ՚ի ժամանակ և ՚ի բան։

Ժամանակն է շարունակ յաջորդութիւն շարժման կամ մանաւանդ չափ այսր շարժման յաջորդութեան․

Իսկ բանն ոչ գնի փոխանակ նշանական ձայնի, այլ փոխանակ զինչ և իցէ հնչման կամ բարբառոյ՝ բաղկացելոյ բազում մասամբք միմեանց յաջորդելոց։ Որոց ոմանք են սուղ․ որպէս բառըս եփեսոս․ այս բարբառ յերից սուղ մասանց բաղկանայ․ և ոմանք երկար, որպէս օրէնսդէտ․ և այս բարբառ յերից երկարաւորաց բաղադրի։ Նոյն ժամանակն է տարածութիւն յաջորդական շարունակեալ։ Իսկ բանն յաջորդութիւն շարունակեալ, բայց բաղկացեալ ՚ի որոշեալ մասանց․ որպէս երաժշտա

կամ նուազք ոչ միով անընդհատ յերկարաձգեալ հնչմամբ յօդիւնիւ, այլ բազմօրինակ տրոհեալ մասամբք միմեանց յաջորդելովք։

Քանակութիւն մնացող բաժանի ՚ի շարունակ և ՚ի տարորոշ, կամ ՚ի քանանակութիւն զանգուածոյ և ՚ի քանակութիւն բազմութեան։

Քանակութիւնն զանգուածոյ՝ է տարածութիւն ՚ի մասունս միանգամայն գոյողս և ընդ միմեանս միացեալս. որպէս մասունք գծի են միանգամայն. և ը̄ միմեանս միաւորին։ Քանակութիւնն մնացող տարորոշ՝ է տարածութիւն ՚ի մասունս միանգամայն գոյօղս բայց ՚ի միմեանց զատուցեալս. և սա կոչի թիւ. ը̄ որով պարունակին պէսպէս տեսակք թուոց։ Քանակութիւն մնացող շարունակ՝ բաժանի ՚ի գիծ, ՚ի մակերևոյթ և ՚ի մարմին։

Գիծն է տարածութիւն մնացող շարունակ ընդ երկայն միայն։

Մակերևոյթն է տարածութիւն յերկայն և ՚ի լայն։

Մարմինն է տարածութիւն յերկայն ՚ի

լայն և 'ի խոր։ Մակերևոյթն բաժանի 'ի մակերևոյթ սոսկ և 'ի մակերևոյթ պարունակօղ. որ կոչի տեղի։ Ո՛ի մակերևութից ոմն է պարունակօղ և շուրջ պաշարօղ մարմնոյ իրիք. որպէս մակերևոյթ կարասի պարունակէ զգինի. մակերևոյթ ջրոյ զձուկն. եւ։ Տեղին է տեսակ քանակութե, այլ չէ զանազանեալ 'ի մակերևութէ. քանզի տեղին յաւելու 'ի մակերևոյթն միայն զլինելն պարունակօղ իրիք մարմնոյ։ Մասն զի սահմանի այսպէս. տեղին է մակերևոյթ շրջապատօղ և պարունակօղ մարմնոյ։ Շարժումն ոչ է յատուկ տեսակ քանակութե. այլ յետաստորոգութե։

Մասն զի տեսակն ստորոգութե պարտի լրացեալ լինել 'ի սեռի խորում (որպէս մարդն լրացեալ է 'ի գոլն կենդանի.) այլ է անլրացեալ 'ի սեռի խորում. զի է եղանակ ինչ, որ դիմէ առ եղեալ գոլն. որպէս ջերմացուցումն է եղանակ ջերմութե. որ այն ինքն ջերմութի թերապէս ստացեալ. և իբրև դիմօղ 'ի կատարեալ որպիսութ.

Ապա ո՛չ է տեսակ ստորոգութեան, այլ անկատար ինչ, որում վերածիլ պարտ է 'ի ստորոգութիւն իւրոյ եղերին. թ՟ առ այն, որ շարժի:

Ժամանակն ո՛չ է յատուկ տեսակ քանակութեան. քանզի տեւողութիւն ո՛չ կացուցանէ զտեսակ ստորոգութեան. այլ վերածի առ տեսակ իրին, որոյ է տեւողութիւն: Այլ ժամանակն ըստ սեռի իւրում է անյատուկ տեսակ տեւողութեան. զի սահմանի ժամանակն, տեւողութիւն այլայլելեաց. ապա ո՛չ կայուցանէ զյատուկ տեսակ ստորոգութեան: Վասն զի որինչ ո՛չ է ը՟ ինքեան տարածեալ, ո՛չ է յատուկ տեսակ քանակութեան: Իսկ արդ ժամանակն ո՛չ տարածի ըստ ինքեան, այլ բանիւ շարժման. ապա ո՛չ է յատկապէս տեսակ քանակութեան: Սակայն ո՛չ է պարտ մակաբերել, թէ շարժումն ըստ ինքեան տարածի. ապա է յատկապէս տեսակ քանակութեան: Քանզի և շարժումն ևս տարածի ը՟ այլոց. թ՟ միջոյն. որ 'ի մէջ եզերին յորմէ՝ առ եզրն առ որ: Ուստի եզերքն եթէ իցեն անմիջականք՝ շարժումն լինի վայրկենական,

և բաժանելի, ոչ ՚ի կենաց ՚ի մահ։ Ապա եթէ յեզերացն միջի լինիցի ընդարձակութիւն, շարժումն լինի տարածել յաջորդութեամբ. որպէս շարժումն ՚ի փոքր ջերմութենէ ՚ի սաստիկ ջերմութիւն։ Յայսմ տեղւոջէ յայլ հարկաւոր տեղի։ Ապա ոչ շարժումն և ոչ ժամանակն են ըստ ինքեան տարածեալ։ Բանն ևս ոչ է յատուկ տեսակ քանակութեան. զի ոչ յաւելու զմասնաւոր եղանակ տարածութեան. այլ ոչ է յատկապէս տեսակ քանակութեան զանազանեալ յայլոց։ Ամ տարածութիւն որ գտանի ՚ի ձայնի բաղկացելոյ ՚ի բազում վանկից՝ զմիմեանց զկնի հնչեցելոց, կամ է տարածութիւն բազմութեան, ըստ որում վանկքն են բազում։ որպէս յորժամ ասեմք քահանայ, են երեք վանկք. և ըստ այսմ վերածի բանն ՚ի թիւ։ Եւ կամ է տարածութիւն տևողութեան, ըստ որում մի ՚ի վանկից երագագոյն և միւսն յամրագոյն արտաբերի. և ըստ այսմ բանն վերածի ՚ի ժամանակ։ Ապա բանն ոչ ցուցանէ զմասնաւոր տարածութիւն։ Թիւն է յատուկ տեսակ քանակութեան. որ սահմանի բազ-

մուն չափեալ միով։ Օն յոլովակի կրկնեալ զմիուն, չափեմք զբազմուն. և որչափ ինչ իցէ, իմանամք, որպէս միուն երկոտասանիցս կրկնեալ՝ չափէ զբազմուն առաքելոյն։

Բազմուն կամ յոյն սակս ասի չափել միով, զի երկարութ ՚ի միուն, կամ հեռացմամբ ՚ի նմանէ, նուազուն կամ յաճախուն բազմութեն ձայնաչի. որպէս երկարուն կամ կարճուն գծի՝ մերձեցմամբ ՚ի կէտէն՝ կամ հեռացմամբ ՚ի կէտէն, որ սկզբնաւորիչն նորա՝ ձանաչի կարճուն և երկարութեն գծի։ Բայց գիտելի է. զի միուն կամ մին՝ կրկնակի ասի, գերազանցապէս և քանակաբար։ Գերազանցական միուն է նոյն ինքն էակուն իրին. ըստ որում է անբաժան յինքեան. և բաժանել յայլմէ ամէ։ Ասն այսորիկ միուն գերազանցական ոչ է զանազանեալ ին յէակէ։ Իսկ քանակական միութին է միաւորուն մասանց քանակութեն ընդ միմեանս և բաժանումն յայլոց։ Բայց այս միաւորուն կամ բաժանումն մասանց ոչ է ՚ի բուն սկզբանց քանա-

կութեան. այլ պատահի նմա. վասն զի ըստ լին-քեան ոչ զլանայ զբաժանումն: Նոյնպէս գոյն մի, կամ՝ 'ի միջի կրկին լինելոյն պատահական նմա: Ուստի միութիւն քանակական է պատահումն որոշ 'ի քանակացեալ իրէն: Յայսմանէ և բազմութիւն է կրկին. գերազանցական և քանակական: Գերազանցականն է, որ բաղկանայ 'ի գերազանց միութեց: Իսկ քանակականն ոչ բաղկանայ 'ի գերազանցականաց: Գերազանցական բազմութիւն ոչ վերաբերի 'ի սեռ քանակութեան. այլ գնայ 'ի վերայ ամենայն սեռի որպէս ասեմք բազում հրեշտակս, բազում տեսակս գոյացութեանց, որակութեանց, առնչութեանց ևն. մանաւանդ թէ ոչ է յատկապէս թիւ. զի հարկէ թուոյն բաղկանալ 'ի միութեանց յորս իցէ նոյն իմացումն: Ուստի երկու գիծք և երկու մակերևոյթք ոչ կացուցանեն զմի թիւ քառեակ. այլ երկուս երկեակս: Որդ՝ միայն քանակութեան յատկութիւն է բաժանիլ 'ի մասունս, յորս է նոյն էութիւն. որպէս մի գիծն յերկուս գիծս է բաժանելի. բայց ոչ մի հրեշտակն

յերկուս հրեշտակս. մի և նոյն մարդ-տեսակն յերկուս մարդ տեսակս։

Թիւն քանակական կրկնակի նկատի. մի՝ իբրև Թանձրացեալ յիրս, և սա ասի, Թիւ Թուեալ։ Եւ երկրորդ՝ իբրև վերացեալ յիրաց. որպէս յորժամ վերացուցանեմք զպէսպէս բան Թուոց. զորս Թուական անուամբք բացատրեմք. որովք և զբաղմունս իրաց Թուեմք. և սա ասի, Թիւ Թուօղ։

Թիւն է էակ մի ըստ ինքեան. զի այն ինչ է մի ըստ ինքեան. որ ունի զտեսակ ՚ի միոջէ. այլ Թիւն ունի զտեսակ ՚ի միոջէ. ապա է ըստ ինքեան։ Առարկայ գիտութեան է մի ըստ ինքեան. Թիւն է առարկայ Թուաբանութեան. ապա ուրեմն է մի ըստ ինքեան։ Առարկայ գիտութեան պարտի սահմանիլ մի միայն սահմանաւ. զի սահման առարկային է առաջին սկիզբն գիտութեան. ապա պարտի ունիլ զմիակ միութիւն։ Առար-կիցես. բաղկացեալն ՚ի յոգունց էակայ լրացելոց՝ ոչ է մի ըստ ըստ ինքեան. այլ Թիւն բաղկանայ ՚ի յոգունց էակայ լրացելոց. ապա ոչ է մի ըստ ինքեան. Թիւն

բաղկանայ ՚ի բաղում շարունակ քանակութենէ. ապա բաղկանայ ՚ի բաղում էակաց լրացելոց։ Պատասխանեմ; Թիւն բաղկանայ ՚ի բաղում շարունակ քանակութեանց, ըստ որում են միութիւնք և ոչ ըստ որում են քանակութիւնք. Արդ ՚ի շարունակ քանակութեան երկու ինչ է նկատելի. տարածութիւն և միութիւն. տարածութիւն է լրացեալ ինչ. բայց միութիւն է անլրացեալ ինչ. որպէս սկիզբն և մասն թուոյ։ Դարձեալ նոյն իր բաղդատեալ առ այլ և այլս, կարէ ունել զկմայութիւն լրացելոց և անլրացելոյ. որպէս ձև քարի յինքեան է լրացեալ ինչ. բայց բաղդատեալ առ տունն, որոյ է մասն, է անլրացեալ ինչ. Ըստ սմին օրինակի և յերրեակ թիւ գծից. իւրաքանչիւր գիծ ըստ ինքեան նկատեալ՝ է լրացեալ ինչ ՚ի սեռի շարունակ քանակութեան. բայց բաղդատեալ առ թիւն երրեակ, է անլրացեալ ինչ և մասն երրեակ թուոյ։

Յաղագս յատկութեան քանակութեան։

Առաջին իրական յատկութիւն է տարածելն մասանց ՚ի կարգի առ ինքն. որպէս

բաժանիլն 'ի պէսպէս մասունս. որոց մինն է արտաքոյ միւսոյն. որպէս գիծն բաժանի 'ի բազում գիծս. որոց մասունքն արտաքոյ են միմեանց: Երկրորդ տարածիլն 'ի կարգի առ տեղին. զի գիծ մակերևոյթ և մարմին գրաւեն զսեփական տեղիս իւրեանց:

Երրորդ՝ անթափանցելութիւն, որով գոյացութիւն տարածեալ այնպէս զիւր տեղի ինքեան սեփականէ, մինչ զի ոչ թողու՝ այլում մարմնոյ լինել անդ. ուր ինքն է. որպէս ես այնպէս եմ սեփականեալ զտեղի իմ 'ի միջի օդոյս. որ ոչ թողում այլոյ ումեք լինել ընդ իս յայնմ տեղւոջ. ուր ես եմ:

Չորրորդ բաժանելութիւն 'ի մասունս. որպէս գիծն 'ի գիծ բաժանի, մակերևոյթն 'ի մակե'', թիւն 'ի թիւս:

Հինգերորդ չափելութիւն. որպէս զքանակութիւն կտաւոյն չափեմք կանգնաւ. և զճանապարհի երկայնութիւն քայլիւ:

Բայց 'ի սոցանէ և այլ երիս յատկութիւս առ առնուն, կամ յատկութիւս տրամաբանականս յուշ բերէ Արիստոտէլ:

Առաջինն է չունել զներհական. յառ-

կապէս առեալ։ Զի յատկապէս ներ-
հակեալքն վանեն զմիմեանս. և մար-
տնչին ընդ իրեարս. որպէս ջերմութիւն
և ցրտութիւն վանեն զմիմեանս։ Արդ մի
քանակութիւն ոչ մարտնչի ընդ այլում քա-
նակութեան. ոպ տամ գիծք են նոյնատեսակ
ուստի ոչ ներհականան միմեանց։
Երկրորդ յատկութիւն է ոչ ունիլ զյա-
ւէտ և զնուազ։ Զի թէպէտ քանա-
կութիւն կարէ աճիլ և նուազիլ, և յայն
սակս լինիլ մեծ կամ փոքր. սակայն
վասն այնր ոչ լինի առաւել քանա-
կութիւն. զի և փոքր քանակութիւն է կա-
տարեալ իբրև մեծն։
Երրորդ յատկութիւն, որ 'ի քանակութեան
ասին իրք հաւասար կամ անհաւասարք։

## Գլուխ իններորդ։

### Յաղագս առընչութեան։

Առընչութիւն է պատահումն՝ որոյ բո-
լոր գոյն է՝ վերաբերութիւն առ այլս։
Այլ այս սահման է ստորոգութենա-
կան առընչութեան։ Իսկ ընդհանրապէս

սահմանի, հայեցումն կամ՝ կարգ մի-
ոյ իրիք առ այլ։ Որդ՝ մի ինչ կրկ-
նակի կարէ կարգիլ առ այլ, ա՟ իրին
և ա՟ բանին։ Աստի և առնչութիւն է
կրկին, իրի, և բանի։ Դրական առըն-
չութիւն է կարգ, որ գտանի յիրս, որ-
պէս գործն կարգի առ պատճառ. մա-
սըն առ բոլոր. կարողութիւն առ ներ-
գործութի. գործողութիւն առ առարկայն։
Իսկ առնչութիւն բանի է կարգ հըն-
րեալ մտօք 'ի մէջ իրական էակաց ո-
մանց, որպէս կարգ ստորոգելոյ առ
ենթակայն և սեռի առ տեսակն։ Առըն-
չութիւնն իրական բաժանի յանըս-
տեղծ և 'ի ստեղծական։ Առընչու-
թիւն անստեղծ է կարգ կամ՝ հայե-
ցումն միոյ անձին ա՟ծայնոյ յայլ։ Այս է
չորեքկին հայրութի, որդիութի. փչումն
ներգործական և փչումն կրաւորական.
զորոց ճառեն ա՟ծաբանք։
Առնչութիւն ստեղծական բաժանի յա-
ռընչութի ըստ գոլոյ և յառնչութի ըստ
ցուցոյ։ Առնչութիւն ըստ գոլոյ է սոսկ
կարգ և սոսկ հայեցումն յեզր. որպէս
հայրութի և որդիութի և հաւասարութի.

ո՛չ այլ ինչ յայտ առնեն, բայց եթէ զհայեցուածս միոյ իրիք առ այլ: Առընչութիւն ը̄ ցուցոյ չէ սոսկ առընչական. զի է իրողութեան բացարձակ, բայց ցուցանէ զյարաբերութիւն ինչ առ այլ. որպէս մասնն թէպէտ է բացարձակ ինչ, սակայն փակէ զյարաբերութիւն առ բոլորն. նոյնպէս գլուխն առ աւարկայն. շարժողն առ շարժելն. եւն.

Այլազգ բաժանի առընչութիւն ՚ի գերազանցական և յանդերազանց: Գերազանցական առընչութիւն է կարգփակեալ յէութենէ իրին. յիւրմէ էութենէ կարգեալ առ այլ. որպէս հոգին հայի առ մարմին. գլուխն առ իւր առարկայն. եւն.

Ասի գերազանցական. վասն զի գերազանցէ քան զամենայն սեռս իրաց. զի գրեթէ չիք ինչ, որ չիցէ կարգեալ յիւրմէ բնութենէ առ այլ. Անդերազանց առընչութիւն է, որ ո՛չ փակի յէութենէ իրին. այլ հանդիպի նմա. ո՛րպէս հայրութիւն նկատմամբ մարդոյ: Այս բաժանումն երեւի լինել առաջնոյն համեմատ. զի

տմ գերազանցական առընչութի է ը
ցուցոյ. զի ոչ է սոսկ հայեցուածն, այլ
բացարձակ էակութիւն փակօղ յինքեան
զհայեցուածն. առանց որոյ չէ հնար ի-
մանալ: Ուստի մեկնել զայս ամ, յայտ
է թէ առընչութիւնք գերազանցականք.
և առընչութիւնք ըստ ցուցոյ ոչ պատկա-
նին առ առընչութեան ստորոգութի. զի
են էակութիւնք բացարձակք առ այլ ստո-
րոգութիւնս վերաբերեալք. որպէս հոգի
և մարմին են գոյացութի. ջերմութի և
ցրտութի են որակութի. Բայց ստորոգու-
թենական առընչութիւնս ուղիղ սահմանի:
Պատահումն իրական. որոյ բոլոր գոյն
է լինիլ առ ինչ. որ կայանայ 'ի սոսկ
հայեցման: Նաև պատահումն. զի 'ի
զատ կայցեն ամենայն առընչութիւնք. զի
յոծ չիք պատահումն: Եւ ասի, իրա-
կան. զի արտաքսեսցին առընչութիւնք
բանի. վասն զի միայն իրական էակն
գտնի 'ի ստորոգութեան: Իսկ յասելն. որոյ
բոլոր գոյն է լինիլ առ ինչ, արտաք-
սին գերազանցական և ըստ ցուցոյ
առընչութիւնք. որոց բոլոր գոյն է ոչ լի-
նիլ առ այլ. այլ է էակութի ինչ բա-

ցարձակ. յորում փակի կարգ առ այլ՝ ըստ որում է այլոյ։ Խնդրիցես նախ՝ թէ ո՞յք իցեն թէուէք պահանջեալք առ ստորոգութենական առընչութիւնս։ Պատասխանեմ, ըստ Թօմայի՝ մանաւանդ դնին չորք։ Առաջինն է ունիլ զէնթակայ իրական։ Զի պատահումն իրական պահանջի ունիլ զէնթակայ իրական։

Երկրորդն է ունիլ զհիմն իրական. զի հիմն է իբրև պատճառ առընչութեան։ Երրորդն ունիլ զեզր իրական. զի առընչութիւն կարգի առ իւր եզր. վասն որպէս զի կարգն իրական ծագեսցի իրապէս, պիտոյ է եզերն և հիմանն դնիլ իրապէս։

Չորրորդն է իրապէս զանազանիլն ծայրից. այսինքն հիմանն և եզերն. զի ոչ լինի առընչութիւն նոյնոյ առ ինքն։ Խնդրիցես երկրորդ՝ թէ զի՞նչ իցէ ենթակայ, զի՞նչ հիմն և զինչ եզր առընչութեան։ Պատասխանեմ, ենթակայ առընչութեան է այն, յորում է առընչութիւնն։ Եւ հիմն է այն. որ է պատճառ հայելոյ կամ առընչանալոյ։ Իսկ եզր

է այն, յոր հայի։ Որպէս յառընչութիւն հայրութեան. մարդն որ ծնաւ զորդի, է ենթակայ. որդին ծնեալ՝ է եզր, յոր հայի հայրն. իսկ ծննդականութիւն է հիմն. զի պատճառ հայելոյ հօրն յորդին՝ է այն՝ զի ծնաւ զնա։ Բայց առընչութիւն է 'ի մէջ ենթակայի եւ եզեր. վ՟կ ենթակայն եւ եզրն ասին, ծայրք առընչութեան։ Արդ տեսակ ստորոգութենական առընչութեան են սոքա. հայրութիւն. որդիութիւն։ ծնողութիւն. ծնելութիւն։ հարսնութիւն. փեսայութիւն։ աշակերտութիւն. վարդապետութիւն։ տէրութիւն. ծառայութիւն։ Առընչութիւն ստորոգութենական իրապէս զանազանի 'ի հիմանէն եւ 'ի բացարձակաց՝ եղելոց յիրում. եւ է էակութիւն մակեղուտ. որոյ գործ է կացուցանել զիրն կարգեալ առ այլ։ Որպիսի են այլ պատահմունք, նոյնպէս է եւ ըստորոգութենական առընչութիւնս։ Որպէս սպիտակութիւն է պատահումն թըղթոյ, բամբակի եւն, նոյնպէս հայրութիւն յաւեալ լինի նոր ինչ լինիլ 'ի մարդ՝ որ է գոլ պատահական։ Առընչութիւն ունի զգոլ ամենեւին տկար եւ յետնեալ

քան զմն պատահմունս։ Զի ՚ի ըս-
տեղծուածս ստորոգութենական ա-
ռընչութիւն բաղդատի առ բացարձակն
որպէս պատահումն առ գոյացութիւն։
Ահա այս ամ ցուցանէ զզանազանսն
ստորոգութենական առընչութե ՚ի հի-
մանէն միանգամայն և ՚ի բցրձակաց։
Յետ ճառելոյ զգլնչութ առընչութե.
արժան է արդ զպէսպէս բաժանմունս
նորա յառաջ բերել։ Եւ քանզի ա-
ռընչութիս պատճառի ՚ի հիմանէ. ըս
պէսպէս սեռից հիմանց, նշանակին պէս-
պէս սեռք առընչութեց։
Արդ երեք են սեռք հիմանց առըն-
չութեց։ Միութի, և Թիւ, կմ համա-
ձայնութի և անհամաձայնութի։ Առնելութի
և կրելութի։ Չափ, և չափելի։ Աւստի
և երեք են սեռք առընչութեց. որոց
առաջինն հիմնի ՚ի համաձայնութե և
յանհամաձայնութե։ Երկրորդն յառնե-
լութե, և ՚ի կրելութե։ Երրորդն ՚ի
չափն և ՚ի չափելին։
Ամ ինչ որ հայի առ այլ. կամ հայի
յայն ըս գոլոյ իբրև ՚ի չափ իւրոյ կա-
տարելութե. կամ հայի յայն ըս գործելոյ.

իբրև 'ի պատճառ կամ 'ի գործ. կամ ըստ միութեան համաձայնութեան և յանհամաձայնութեան, Եթէ հայի յայն ըստ գոլոյ իբրև 'ի չափ իւրոյ կատարելութեան, լինի հիմն չափու և չափելոյ, Որպէս գիտութիւն հայի յառարկայն իւր իբրև 'ի չափ իւրոյ կատարելութեան. և գաղափարեալն հայի առ գաղափարն և ըստեղծուածք հային յմծ և առ հասարակ ամ տեսակացեալ հայի 'ի տեսակացուցիչ իւր: Եթէ հայի իբրև 'ի պատճառ կմ 'ի գործ, լինի հիմն առնելութեան և կրելութեան: Իսկ եթէ հայի յայն իբրև 'ի միութիւն, լինի հիմն համաձայնութեան. որպէս որմն սպիտակ հայի յայլ որմ սպիտակ իբրև 'ի համաձայն. իսկ հայելով 'ի սևաւ, լինի հիմն անհամաձայնութեան:

Նորդ ամ համաձայնութիւն մտածի ըստ երից ստորոգութեանց. ըստ գոյացութեան, ըստ քանակութեան, և ըստ որակութեան: Համաձայնութիւն ըստ գոյացութեան՝ ասի նոյնութիւն. համաձայնութիւն ըստ քանակութեան, ասի հաւասարութիւն. համաձայնութիւն ըստ որակութեան՝ ասի նմանութիւն: Ապ պետրոս և

պօղոս համաձայնելով 'ի մարդկեղէն բնութե. ասի նոյնութի: Եւ որմն սպիտակ վասն զի համաձայնի յորակութե ընդ այլում սպիտակի. և ունի զառընչութի նմանութե ընմա: Իսկ երկու քանակք յորժամ համաձայնին 'ի նմին չափու, ունին յերբեմս զառընչութի հաւրութե: Դարձեալ բաժանի առընչութին 'ի փոխադարձ և յանփոխադարձ: Այն է թէ 'ի մէջ որոց՝ ունին զկարգ, երբեմն յերկուց կողմանց անդրադարձի կարգն. որպէս 'ի մէջ հայրութե և որդիութե. և 'ի մէջ երկուց սպիտակութեց. որպէս հայրութին որդիութբն է. և որդիութին հայրութբ է:

Եւ երբեմն ոչ անդրադարձի կարգն. այլ դնի 'ի կողմանէ միոյ ծայրի միայն. որպէս ստեղծուածն կարգի առ ած. այլ ած ոչ կարգի իրապէս առ ըստեղծուածն: Նոյնպէս գիտութին կարգի առ առարկայն. սակայն առարկայն ոչ կարգի առ գիտութին:

Արդ փոխադարձ առընչութիք իբր 'ի բաղումն են հիմնալքն 'ի համաձայնութե և յանհամաձայնութե, յառ-

նելութեան և 'ի կրելութեան։ Զի հա-
սարակօրէն 'ի սոսա գտանի երկուս-
տեք բան առընչանալոյ։ Ո՛չ գոր-
ծըն միայն կարգի առ պատճառ իւր,
այլ և պատճառն եթէ ստեղծեալ ի-
ցէ՝ կարգի առ գործ իւր։ Իսկ ա-
ռընչութիւնք երրորդ սեռի, որք հիմ-
նին 'ի չափն և 'ի չափելին, ոչ են
փոխադարձ. զի թէպէտ չափելին կար-
գի առ իւր չափն. սակայն չափն ոչ
միշտ կարգի առ չափեալն. որպէս թէ-
պէտ գիտութիւն կարգի առ գիտելին,
բայց գիտելիքն ոչ կարգին առ գի-
տութիւն։ Տեսողական կարողութիւնն
կարգի առ գոյնն. այլ՝ գոյնն ոչ կար-
գի առ տեսողական կարողութիւնն։
Զգայական կարողութիւն կարգի առ
զգալի իւր. բայց զգալի իրք ոչ կար-
գին առ զգայական կարողութիւն։
Առընչութիւն փոխադարձ բաժանի յա-
ռընչութիւն հանգիտութեան և յանհան-
գիտութեան. Առընչութիւն հանգիտութեան է,
յորժամ յերկոսին ծայրսն գտանի հա-
յեցումն նոյնասեռ և համանուն. որ-
պէս 'ի մէջ երկուց սպիտակաց ա-

ռընչութեան յերկուսին ծայրան է նոյնասեռ և համանուն. իսկ նմանութիւնն Յակ առընչութեան անհանգիտութեան է, յորժամ հայեցուածն յերկուսին ծայրան եղեալ, ոչ է նոյնատեսակ և ոչ համանուն. որպէս առընչութիւն հօր առ որդի՝ է առընչութիւն անհանգիտութեան. զի է այլատեսակ և այլանուն. վասն զի մինն ասի՝ հայրութիւն. և միւսն որդիութիւն.

## Յօդուած առաջին։

Առընչութիւն փոխադարձ եզերի առ իւր առընչակիցն. որպէս հայր եզերի առ որդին, ոչ ըստ որում մարդ. այլ ըստ որում որդի. ուստի թէպէտ էակութիւն որդւոյ եզերէ զհայեցուածն հօր. սակայն ոչ եզերէ զայն ըստ որում էակութիւն բացարձակ. այլ տեսականապէս ըստ որում տրամակայեալ որդիութեամբ. և ըստ որում առընչական ինչ. Որպէս ասէ ագուինայեն, յասելն՝ թէ գոլ առընչականին է լինել առ այլ, բառիւս այլ՝ իմանամք զառընչակիցն. որ ոչ է յառաջագոյն. այլ համանգամայն ըն-

նուէ։ Հայրն եզերի առ որդին ընդ տեսական բանիւ որդւոյ. այլ տեսական բան որդւոյ է առընչական ինչ և զնոյն ասելի է յաղագս այլոց փոխադարձ առընչութեանց։ Զի այնպէս բաղդատի հայրն առ որդի. ո՛չ ծնօղն առ ծնեալ։ Այլ ծնօղն հայր ՚ի ծնելն է տեսական բանիւ ծնելոյ։ Ապա հայր և հայր յորդին ընդ տեսական բանիւ որդւոյ։ Ասիցես, տեսակացուցիչն յառաջանայ քան զտեսակացուցեալն. այլ եզրն է տեսակացուցիչ առընչութե. ապա եզրն և տեսականապէս առեալ յառաջանայ քան զառընչութի։ Պատասխանեմ, տեսակացուցիչն յառաջանայ քան զտեսակացեալն յայլ իրս, և ո՛չ ՚ի փոխադարձ առընչականս։ Զի փոխադարձ առընչականայ՝ վասն փոխոխակի զմիմեանս տեսակացուցանելոյն չէ պարտ քան զկրեալս յառաջել. այլ լինիլ համանգամայն։

### Յօդուած երկրորդ։

Առընչութին անփոխադարձ ո՛չ եզերի առ իմն ՚ի ներքուստ և ենթակայա-

պէս առնչական. այլ եղեւր առ իմն արտաքուստ և եզերողաբար առընչական: Արկանելի կարէ ասել իմն առընչական. Նախ՝ ենթակայապէս և 'ի ներքուստ: Երկրորդ՝ եզերողաբար և արտաքուստ. Առնչականն 'ի ներքուստ և ենթակայապէս է այն, որ ունի յինքեան զառընչութի. Իսկ առընչականն եզերողապէս է այն, որ ունի զառընչութիւն եղեալ յայլում: Արդ ասեմք, թէ յանփոխադարձ առընչութիս՝ եզրն է առնչական ինչ արտաքուստ և եզերողաբար, այլ ոչ 'ի ներքուստ և ենթակայապէս: Ոչ է 'ի ներքուստ առընչութիւն այն ինչ. որ չունի զառընչութի. այլ եզրն անփոխադարձ առընչութե չունի զառնչութի. ապա չունի զառընչութի 'ի ներքուստ և ենթակայաբ. Քանզի սովաւ տարբերի առընչութիւն անփոխադարձ 'ի փոխադարձէն. զի յեզեր նորա ոչ գոյ անդրադարձ հակեցուցմն: Օւարկիցես, որ ինչ հակադրի առընչապէս, է առընչական ինչ. այլ եզրն եւս և անփոխադարձ առընչութե հակադրի նմա առընչապէս. ա-

պա է առընչական ինչ։ Պատասխանեմ, որ ինչ հակադրի առընչապէս, է առընչական ինչ. այն եզր՝ որ իցէ միշտ 'ի ներքուստ և ենթակայապէս, և ոչ այն՝ որ իցէ արտաքուստ և եզերողաբար։

## Յօդուած երրորդ։

Տեսակարար միութի՟ առընչութե՟ առեալ լինի 'ի հիմանէն միանգամայն և յեզրէն. իսկ տեսակարար պէսպէսութի՟ն առեալ լինի 'ի պէսպէսութե՟ կամ հիմանն կամ եզերն. զի ը՟ պէսպիսոնալ միում 'ի սոցանէ պէսպիսանայ առնչութի՟ն։ Յայնմանէ ը՟ունի իրն զմիութի՟ տեսակարար. յորմէ ը՟ունի զգոլ. այլ առընչութի՟ն ը՟ունի զգոլ իւր 'ի հիմանէն և յեզրէն. ապա ընդունի զմիութի՟ն տեսակարար յերկոցունց։

Վասն զի էակն և մին անդրադարձին. որ իւրաքանչիւր ինչ է մի իւրով էակութ՟. ուստի յայնմանէ ունի զլինիլն մի. յորմէ ունի զգոլ։ Առընչութի՟ն էապէս է հայեցումն ծագեալ 'ի հիմանէ

առ եզր. ապա յերկոցունց զգօլ է՟ունի իւր. 'ի հիմանէն իբրև յայնմանէ, որով է. իսկ յեզրէն իբրև յայնմանէ՝ առ որ է։ Միու՟թն տեսանկարսր առեալ լինի 'ի միութէ հիմանն և եզերն. իսկ պէսպիսութն 'ի պէսպիսութե միոյ իրիք 'ի սոցանէ։ Արդ՝ առընչութն տեսակացուցանի 'ի հիմանէ և յեզրէ, է՟ որում համաչափ են միմեանց, կամ 'ի համեմատութե հիման է՟ եզերն. իսկ արդ՝ չափակցութն կամ համեմատութն այլայլի է՟ այլայլիւ միոյն 'ի ծայրից։ Ապա է՟ այլայլիւ հիման կամ եզերն, այլայլի առընչութն։ Օրօրինակ, առընչութն անմանութե. զոր ունի ձիւնն առ ագռաւն. և առընչութն նմանութե զոր ունի առ կարապն. թէպէտ հիմնին 'ի նոյն. այ՟ 'ի սպիտակութե, սակայն են այլ և այլ տեսակաւ՝ վասն այլ և այլութե եզերաց։ Եւ նոյնպէս առընչութիւն հօր առ որդի և առընչութի նմանութե նորա առ նոյն, են այլ և այլ՝ վասն այլևայլութե հիմանց. զի հայրութիւն հիմնի 'ի վերայ ծնողութե. իսկ

նմանութիւն ՚ի վերայ համաձայնութե՛ ՚ի ձևն։ Սուարկիյես նախ՝ միոյն ոչ կարէ լինել՝ բայց եթէ մի միայն տեսակացուցիչ։ Այլ՝ առընչութիւն է մի միայն և պարզ։ Ապա ոչ կարէ ունիլ բայց եթէ զմի միայն տեսակացուցիչ՝ Պատասխանեմ, թէ հիմն և եզրն ունին զբան միոյ տեսակացուցչի. զի յատկապէս տեսակացուցանեն զառընչութիւն, ըստ որում ընդ միմեանս համեմատին և չափակցին. որով են իբրև մի։ Սուարկիյես երկրորդ՝ մի միայն տեսակաւ առընչութիւն հայի յերկուս եզերս զանազանեալս տեսակաւ։ Ապա ոչ ընդունի զմիութի՛ւն իւր յեզրէն։ Առընչութիւն որդւոյ եզերի առ հայրն և առ մայրն։ Այլ առընչութիւնք հօր և մօր երևին զանազանիլ տեսակաւ։ Ապա առընչութի՛ւն որդւոյ հայի յեզերս զանազանեալս տեսակաւ։ Պատասխանեմ, մի միայն առընչութիւն հայի յերկուս եզերս անհաւասարս, և ՚ի հաւասարեալս ոչ։ Քանզի հայր և մայր որպէս են մի բոլորական սկիզբն արտադրիչ որդւոյ նոյնպէս կացուցանեն զմի բոլորական

եզր որդւոյն։ Թուական միութիւն առընչութե առեալ լինի ՚ի Թուական միութէ ենթակայէն. ուստի ՚ի միում ենթակայի ոչ կարէ լինել կրկին առընչութի Թուով միայն զանազան. որպէս ՚ի միում հօր կրկին հայրութի։

Օ. ի մեմ պատահումն ընդունի զԹուական միութի իւր յենթակայէն։ Նայլ առընչութին է պատահումն։ Նպա ընդունի զԹուական միութի իւր յենթակայէն։ Նարկեցես, ոմն հայր կարէ ունել բազում հայրութիս Թուով միայն զանազանեալս։ Նպա Թուական միութի առընչութեց ոչ առեալ լինի ՚ի Թուական միութէ ենթակայէն։ Որ են բազում եղբարք, անդ են բազում առընչութիւնք։ Նայլ նոյն հայր կարէ ունել բազում եղբարս առընչութե. զի բազում որդիս։ Նպա կարէ ունել և բազում հայրութիս։ Պատասխանեմ, այնոքիկ բազում որդիք տեսականապէս միայն զանազանին. իսկ նիւթապէս են, անզանազանք նկատմամբ հայրութե։ Քանզի առընչութին հայրութե հայի յորդին միայն ըստ բանի որդւոյ։ Նաւ

բազմաց հաղորդելն այնորիկ բանի որ-դւոյ՝ նիւթապէս միայն դնի։ Ո՛ ի ո՞չ ամ՟ մեղք միով արձակմամբ լինին թո-ղեալ, նոյնպէս ամ՟ որդիք միով առըն-չու՟թ լինին հայեցեալ։

## Յօդուած չորրորդ։

### Յաղագս յատկութեանց առընչութեան։

Հինգ յատկու՟թիս առընչու՟թեց թուէ արիստոտէլ։ Առաջինն է՝ ոչ ունել զներհակս. քանզի մի առընչու՟թի ոչ վանէ զմիւսն, և առընչու՟թիք ամենեքին զանազանք տեղի տան միմեանց ՚ի մի-ում ենթակայի. որպ՟ս մի և նոյն մարդն կարէ լինել հայր հայելով յորդի իւր. կարէ լինել և վարդապետ՝ հայելով յաշակերտ իւր։ Աստի ոչ ունին առ միմեանս զներհակու՟թի. այլ միայն զա-ռընչական հակադրու՟թի. որով ոչ եղ-ծանեն զմիմեանս իբրև զներհակսն, այլ հային առ միմեանս։

Երկրորդ յատկու՟թին է ոչ ընդունել զյաւէտ և զնուազ յինքեան։ Վասն

գի առընչութիւն ոչ ածէ և նուազի ըստ ինքեան. քանզի ոչ լինի առ այն շարժումն. այլ միայն ըստ իւրոյ հիման. որպէս յորժամ որմն նուազ սպիտակ՝ և ես սպիտակացուցանի. լինի նմանագոյն այլում առաւել սպիտակի՝ ըստ սպիտակութեան, որ ածի։

Երրորդ յատկութիւն է անդրադարձիլ ընդ միմեանս. որպէս որդին է հօր որդի. և հայրն է որդւոյն հայր. տէրն է ծառային տէր. և ծառայն է տեառն ծառայ։

Չորրորդ յատկութիւն է լինիլ համանգամայն բնութեամբ. ըստ գոլ՚ի միասին։ Որ ի առընչացեալքն այնպէս են ընդ միմեանս շաղկապեալ. որ անհնար լինիլ միոյն առանց միւսոյ։ Որպէս առանց ծառայի անհնար է լինիլ տէրն և առանց տեառն՝ ծառայի։

Հինգերորդ յատկութիւն է լինիլ համանգամայն ճանաչմամբ։ Քանզի անհնարին է ճանաչել զմին առանց միւսոյ. որպէս զծառայն առանց տեառն և զտէրն առանց ծառայի։ Սակայն վերջին երեք յատկութիւնքս են փոխադարձ առընչութեան։

## Գլուխ տասներորդ:

### Յաղագս որակութեան:

Որակութիւն է պատահումն եղանակաւորիչ գոյացութեան յինքեան: Կամ, որակութիւն է պատահումն եղանակաւորիչ իրին յինքեան: Որակութիւն հաստարակօրէն ցուցանէ զորպիսութիւն իրաց: Եւ կամ զինչ կերպ գոյն, զինչ եղանակ լինելոյն իրաց յայտ առնէ: Ուսիցես, քանակութիւն եւս եղանակաւորէ զգոյացութիւն: Պատասխանեմ, քանակութիւն ոչ եղանակաւորէ յատկապէս. այլ միայն տարածէ զնա. տալով նմա մասունս ընդունակս պէսպէս եղանակաւորման. բայց որակութիւն եկեալ 'ի վերայ տրամադրէ զմասունս զայնոսիկ այսպիսի կամ այնպիսի լինել եղանակաւ. ձեւացուցեալ զնոսա եռանկիւնի կամ քառակուսի: Ուստի եղանակաւորելն զգոյացութիւն եւ զմասունս նորա՝ տիրաբար պատշաճի միայն որակութեան:

## Յօդուած առաջին

### Թէ քանիպատիկ են որակութիւնք։

Չորք գլուխ տեսակաց որակութեան նշանակին։ Առաջինն է ունակութիւն և տրամադրութիւն։ Երկրորդն կարողութիւն և անկարութիւն։ Երրորդն կիրք և կրական որակութիւն։ Չորրորդն տեսակ և ձև։

## Յօդուած երկրորդ։

### Յաղագս ունակութեան և տրամադրութեան

Այս առաջին տեսակ սահմանի ընդհանրապէս։ Որակութիւն որոշիչ ենթակայի 'ի լինել բարւոք կամ յոռի, յինքեան կամ 'ի գործս իւր։ Վասնզի բազում անգամ ենթակայ ինչ է անտարբեր՝ 'ի լինել բարւոք կամ յոռի, եթէ 'ի գոլն, և եթէ 'ի գործելն։ Որպէս մարմինն է անտարբեր՝ 'ի լինել հիւանդ կամ առողջ. և հոգին 'ի լինել սուրբ շնորհօք, կամ աղտե-

զի մեղօք։ Միտքն 'ի լինել գիտուն կամ անգէտ։ Կամք 'ի լինել Թիւր կմ՟ ուղիղ։ Ձեռն 'ի լինել վարժ 'ի նկարս, կամ անվարժ։ Եւ յայն սակս այսպիսի ենԹակայք պէտս ունին որակութ՟ որոշողի՝ 'ի լինել բարւոք կամ յոռի։ Որպէս առաքինութիւն որոշէ զկամս 'ի լինել բարի. իսկ մոլութ՟ն 'ի լինել չար։ Եւ գիտութ՟ն տրամադրէ զմիտս 'ի լինել ուղիղ առ ճշմարտութ՟. իսկ մոլութ՟ն 'ի լինել Թիւր։ Եւ առողջութ՟ն տրամադրէ զմարմին 'ի լինել ողջ. իսկ խօԹութ՟ն 'ի լինել հիւանդ. ևն։ Որակութ՟ն՝ որ որոշէ 'ի լինել բարւոք կամ յոռի. կմ՟ անխախտ յարի յենԹակայն, կամ հարևանցի զգածէ զենԹակայն և 'ի խախուտ սկզբունս հաստատի։ ԵԹէ առաջինն, կոչի ունակութ՟. եԹէ երկրորդն, կոչի տրամադրութ՟։ Ահա տեսանեմք. զի առողջութ՟ և հիւանդութ՟ ունին զդիւրափոփոխ սկզբունս. իսկ զզուգախառնութ՟ հիւԹոց. որ դիւրաւ ամբոխի։ Նոյնպ՟ և 'ի հոգևորս. կասկած. տարակուսութ՟. կարծիք. և այլ այնպիսիք 'ի

թեթեւ եւ 'ի դիւրաշարժ սկզբունս հաստատին։ Նոյն ամենայն որակութիւնք են տրամադրութիւնք։

Նոյն զնոյն է ասել զվարժութենէ ձեռին 'ի նկարութեան 'ի գրութեան եւ 'ի հարկանութեան քնարի. եւն. որք վասն հիմնելոյն 'ի դիւրալուծելի մարմին. դիւրաւ կորընչին։ Բայց հաւատք. գիտութիւն. առաքինութիւն, շնորհք եւ այլ այսպիսի յես հաստատուն սկզբունս հաստատին. որպէս հաւատքն 'ի վկայութեան իւր եւ գիտութիւնն 'ի սկզբունս հարկաւ ճշմարիտս. եւ առաքինութիւնն 'ի հաստատ բարին. եւ շնորհքն յածային հոսումն։ Ուստի որակութիւնքս յիւրեանց կողմանէ են յոյժ հաստատուն. եւ վասն այսորիկ կոչին ունակութիւնք։ Բայց ունակութիւնն երբեմն զգենու զորպիսութիւն տրամադրութեան. եւ տրամադրութիւնն զորպիսութիւն եւ զեղանակ քանակութեան։ Որպէս սէր, հաւատ, յոյս եւ շնորհ հայելով 'ի սկզբունս, յորս հաստատին. իսկ 'ի բարութիւն, 'ի խնամակալութիւն եւ 'ի հաւատարմութիւն իւր. եւ 'ի հոգին սուրբ. յորմէ զեղանին շնորհք են հաստատունք։ Սակայն վասն յող-

դողդ և դիւրադարձ լինելոյ անձնիշխանութեան մարդկան՝ բազմիցս խապաւշիջանին 'ի մէջ: Եւ ներհակ այսմ, սկզբունք մոլորութեան. կարծիք. տարակուսութիւնք, են ըստ ինքեան դիւրաշարժ և փոփոխելի, այլ յերկար գործածութենէ և 'ի կամակորութենէ այնպէս հաստատին երբեմն. մինչ զի՝ ուր ուրեմն հնար է խախտել զնոսա. որպէս երևի 'ի խստասիրտ մեղաւորս և 'ի հերձուածողս:

## Յօդուած երրորդ.

### Յաղագս կարողութեան և անկարութեան:

Ընդհանրապէս սահմանի. Որակութիւն տրամադրող գոյացութեան 'ի գործել կամ 'ի կալ հակառակ: Զի յատուկ է կարողութեան պարզապէս զզօրութիւն առնելոյ, կամ հակառակ կալոյ: Իսկ գործողական ունակութիւնք եկեալ 'ի վերայ ոչ տան պարզապէս զզօրութիւն առնելոյ՝ այլ որոշեն զյառաջագոյն եղեալ կարողութիւն 'ի լինել բարւոք կամ յոռի.

որպէս արդարութի՟ն ո՛չ տայ կամիլ ըղ-
կարելն. այլ զկարողութի՟ն կամելոյ. զոր
ենթադրէ. ուղղորդէ առ բարեօք ստա-
րի. զի մի՛ տարապայման բերցի առն՟ն։
Նոյնպէս հաւատքն ո՛չ տայ մտաց ըղ-
կարողութի՟ն ճանաչելոյ՝ այլ՝ միայն զի-
մացական կարողութի՟ն համբառնայ 'ի
ճանաչել զգերբնականս։ Եւ արդ՝ ո-
րակութի՟ն տրամադրող 'ի գործել կմ՟
'ի կալ հակառակ, կամ է ուժգին,
որպէս տեսողական կարողութի՟ն 'ի
պատանիս. կարծրութի՟ն յանդամանդ.
ասի կարողութի՟ն։ Եւ կամ թոյլ. որ-
պէս տեսողական կարողութի՟ն 'ի ծերս՝
դիւրաբեկութի՟ն յապակին. կարողութի՟ն
'ի մոմն ասի անկարութի՟ն. ա՟յ տկար
կարողութի՟ն։ Յորմէ յայտ է թէ այս
բաժանումն ո՛չ է յատկապէս 'ի զա-
նազան տեսակս, այլ՝ 'ի զանազան կա-
ցութիւնս. որպէս թէ ոք բաժանէր 'ի
մանուկ և յայր կատարեալ։ Ո ի ք՟՝
մանուկն լինի այր կատարեալ՝ և ան-
կարութի՟ն կարէ հաստատիլ և լինիլ
կարողութի՟ն. և կարողութի՟ն լինի տկա-
րութի՟ն. որպէս քայլողական զօրութի՟ն

'ի մանկան է տկարութիւն. իսկ 'ի զար-գանալ նորա՝ լինի կարողութիւն։ Ընդեր-հակ այսմ, կարողութիւն տեսանելոյ է զօրաւոր 'ի պատանիս, բայց 'ի նուա-զիլ կորովութեան նոցա, թուլանայ 'ի նոսա և լինի անկարութիւն։

### Յօդուած չորրորդ.

### Յաղագս կրից և կրական որակութեան։

Սահման կրից և կրական որակութեան։ Որակութիւն՝ պատճառօղ զայլայլութիւն զգա-լի. կամ պատճառեալ 'ի զգալի այ-լայլութենէ։ Զի յատուկ է կրից կամ մուծանել զզգալի այլայլութիւն. կամ հե-տևիլ այնմ. և կամ ազդել զզգայութիւն և փոփոխել. որպէս ջերմութիւն և ցըր-տութիւն փոփոխեն զշօշափականս և մու-ծանեն յնոս զայնպիսի այլայլութիւն, որ դիւրըմբռնելի է զգայութեան։ Այսպիսի են հնչմունք, հոտ, համ, գոյն, լոյս, չորութիւն, թացութիւն, ևն։ Արդ այսպիսի որակութիւնք եթէ վաղվաղակի անցանեն որպէս դեղնութիւն՝ որ յերկիւղէ. և

շառագնութիւն, որ յամօթոյ՝ ասին կիրք․ Բայց եթէ կան և մնան ընդ երկար․ որպէս դեղնութիւն․ որ 'ի մելամաղձ խառնուածոյ․ և շառագնութիւն՝ որ յարիւնայնոյ․ և ջերմութիւն, որ 'ի մաղձայնոյ ասին կրական որակութիւն։ Այլ աստ պարտ է գիտել․ զի երբեմն որակութիւն ինչ երևի վերաբերիլ առ երկուս տեսակս որակութեան․ վասն հաղորդութիւն ինչ ունելոյ ընդ իսկութեան կացուցչի երկոցունց տեսակաց․ որպէս ջերմութիւն ներգործական զօրութիւն հրոյ․ որով երևի վերաբերիլ առ կարողութիւն․ սակայն պատճառէ և զայլայլութիւն․ որով երևի վերաբերիլ առ կիրքն, Բայց յայնժամ պարտ է քննել, ո՞րն իցէ առաջին և էականագոյն յայդմ որակութեան և ըստ այնմ նշանակել նմա զտեսակ․ որպէս 'ի ջերմութեան էականագոյն երևի լինիլն որակութիւն այլայլօղ․ և վասն այնր էապէս վերաբերի առ կիրքն․ Թէպէտ է և սկիզբն առնելոյ 'ի հուրն․ որով երևի զգենուլ զբնութիւն կարողութեան։ Եւ հակառակ այսմ՝ կարողութիւն

սննդական թէպէտ պատճառէ զայլայլութիւն ՚ի կերակուրս. որով երևի վերաբերիլ առ կիրքն. սակայն սկզբնաբար կարգի ՚ի գործել. վասն այն ճապէս վերաբերի առ կարողութիւն։

### Յօդուած հինգերորդ։

### Յաղագս տեսակի և ձևոյ։

Սահմանի. Որակութիւն ծագեալ ՚ի պէսպէս տրամադրութենէ մասանց քանակութեան։ Զի մասունք քանակութեան ըստ ինքեանց են անտարբերք ՚ի տրամադրել պէսպէս եղանակաւ. որպէս բըրգաձև կամ քառակուսի։ Նոյն որակութիւն, որով այսպիսի կամ այնպիսի եղանակաւ տրամադրին և երևին, ասի. տեսակ կամ ձև։ Սահմանի ևս տեսակն կամ ձևն եզր քանակութեան։ Յարհեստականս այնպիսի տրամադրութիւն կամ եզրն մասանց քանակութեան ասի տեսակ. որպէս տեսակ տան. տեսակ նաւի, ևն։ Իսկ ՚ի բնականս ասի ձև. որպէս ձև մարդոյ, ձև ձիոյ, ձև

եղին։ Թէպէտ բազում անգամ յեր-
կաքանչիւր միտս անխտիր 'ի գործ ա-
ծին.

## Յօդուած վեցերորդ.

### Յաղագս յատկութեանց որակութեան, եւ յաղագս նորին շարժարկութեան.

Զերիս յատկութիւնս թուէ արիստոտէլ. Առաջինն է ունիլ զներհական, զի յատուկ է որակութեան՝ մարտնչիլ ընդ միմեանս. և վանել զիրեարս յենթակայէ. որպէս ջերմութիւն և ցրտութիւն. մոլութիւն և առաքինութիւն։ Սակայն ո՛չ ամենայն որակութիւնք ունին զներհական. որպէս յայտ է 'ի ձևս և 'ի լոյսն և 'ի նմանս։

Երկրորդ յատկութիւն է ընդունիլ ըզյաւէտ և զնուազ. վասն զի որակութիւնք սաստկանան և թուլանան. որպէս դոյզն ջերմութիւն սաստկանայ. և սաստիկ ջերմութիւն նուազի։ Սակայն ո՛չ ամենայն որակութիւնք են այսր փոփոխութեան ընդունակ. զի ձևք և բնական կարողութիւնք ո՛չ սաստկանան. որպէս ազդեցութիւնք ա-

տեղաց ոչ սաստկման և ոչ թուլման։
Երրորդ յատկութիւն է հիմնել զնմա-
նութի և զաննմանութի. զի համաձայնել-
քըն յուրակունս ասին նմանք. իսկ ան-
համաձայնեալքն ասին աննմանք։ Յա-
ղագս այսր շարակարգունս գիտելի է.
զի որակութիւն է գերագոյն սեռ, որ
բաժանի 'ի չորս տեսակս։ Առաջին
տեսակն բաժանի յունակութի և 'ի
տրամադրութի։ Ունակութեց ոմն է հե-
ղեալ յոյ. և ոմն ստացեալ 'ի մէնջ։
Ունակութիւն հեղեալ յոյ պարունակէ
ընդ իւրև զշնորհս, զհաւատս, զյոյս,
զսէր, զպարգևս հոգւոյն սրբոյ. զլոյս
փառաց, զլոյս մարգարէական, և զայլ
գերբնական առաքինութիս։ Ունակութեց
ստացականաց ոմն է իմացական և ոմն
բարոյական, որ 'ի բաղձանս։ Ունա-
կութիւն իմացական բաժանի 'ի հանճար,
յիմաստութի, 'ի գիտութի, 'ի խոհեմութի
և յարհեստ։ Ունակութիւն բարոյական
բաժանի 'ի բարի և 'ի չար։ Բարին
'ի պէսպէս առաքինութիս որպէս յար-
դարութի, 'ի բարեխառնութիս, յարիութի
ևն. Չարն բաժանի 'ի պէսպէս մո-

լութիւն, ՚ի զրկողութեան. յարբեցութեան. եւն։ Սակայն եթէ արժան իցէ թուել ըզմոլութիւնս ՚ի մէջ ունակութեանց. զի յատկապէս երեւին լինել տրամադրութիւնք միայն, վասն յանկայուն սկզբունս հաստատելոյ. այս ՚ի կիրս եւ ՚ի պատիր բարիս։ Իսկ տրամադրութիւն բաժանի ՚ի մարմնաւոր եւ ՚ի հոգեւոր։ Մարմնաւորն ՚ի գործողական եւ յանգործականն։ Փակէ ընդ իւրեւ գործողականն զպէսպէս գործս. որպէս զկաքաւումն, զնկարումն, զգրութիւն. եւն։ Անգործականն փակէ ընդ իւրեւ զգեղեցկութիւն, զտգեղութիւն, զառողջութիւն, զհիւանդութիւն եւն։ Տրամադրութիւն հոգեւոր զկարծիս. զմարդկային հաւատս. զկասկածանս, եւ զայլ որակութիւնս դիւրաշարժս։

Երկրորդ տեսակն. այս կարողութիւն եւ անկարութիւն՝ բաժանի ՚ի կարողութիւն ներգործելոյ եւ ՚ի կարողութիւն հակառակ կալոյ։ Կարողութիւն ներգործելոյ բաժանի ՚ի մնացող, որոյ գործն մնայ ՚ի ներքս ՚ի սկզբան, յորմէ արտադրի. եւ յանցանող. որոյ գործն անցանէ առ արտաքս։ Կարողութիւն մնացող բաժա-

նի 'ի տնկական, 'ի ճանաչողական, և
'ի բաղձողական։ Տնկականն բաժանի
'ի ծննդական. 'ի սննդական և յաճո-
ղական։ Ճանաչողականն բաժանի 'ի
միտս և 'ի զգայութիւն։ Բաղձողականն
'ի կամս և 'ի զգայական բաղձանս։ Կա-
րողութիւն հակառակ կալոյ պարունա-
կէ ընդ իւր և զկարծրն և զկակուղն.
զպնդակաղմն և զբեկանուտն և այլն։
Երրորդ տեսակն. որ կիրք և կրական
որակութիւն բաժանի 'ի հինգ զգալի
որակութիւնս. որ 'ի գոյն, 'ի հոտ, 'ի
հնչիւն, 'ի համ և 'ի շօշափելի որա-
կութիւնս. որպիսի են ցրտութիւն և ջեր-
մութիւն. Եւն։ Ո ի ըստ հնգեցունց սե-
ռից որակութեանց՝ երևի լինել այլայ-
լութիւն, կամ ընական 'ի մարմինս, կամ
դիտողական 'ի զգայութիւնս մեր։
Դիտողական կարողութիւն է երևա-
կերպականն. որ երևեցուցանէ 'ի ըզ-
գայութեն մերում զկերպ իւրաքան-
չիւր իրի մարմնաւորի։ Եւ այս որա-
կութիւնք դարձեալ բաժանին 'ի պէս-
պէսս. որպէս 'ի պէսպէս գոյնս. 'ի հա-
մըս և յայլս։ Չորրորդ տեսակն, որ է

տեսակ և ձև. բաժանի ՚ի մակարդակ. ըստ հարթաձև, և ՚ի հաստահիմն: Ձեն մակարդակ բաժանի յանկիւնաւոր և ՚ի բոլորակ: Կատարեալ բոլորակն է միատեսակ. իսկ անկատարքն բազմատեսակ. որգոն՝ ձուաձև. ոսպնաձև. եւն: Ձեն անկիւնաւոր բաժնի յեռանկիւն, ՚ի քառանկիւն, ՚ի հնգանկիւն. և այլն: Եռանկիւնն բաժանի կամ ըստ կողմանց, կամ ըստ անկեանց: Ըստ կողմանց բաժնի ՚ի հաւասարակողմն, որոյ երեք կողմունք են հաւասար. յերկկողմնազոյգ. որոյ միայն երկու կողմունք են հաւասար և յանհաւասար կողմն, որոյ երեք կողմունքն ևս են անհաւասար: Ըստ անկեանցն ՚ի սրանկիւն. որոյ երեք անկիւքն են սրածայրք: ՚Ի շեշտանկիւն. որոյ մի անկեանցն է շեշտ. և ՚ի բթանկիւն. որոյ մի անկեանցն է բութ: Քառանկիւն ձևն բաժանի ՚ի չորեքկուսի. որոյ կողմանք են հաւասար. և անկիւնքն ուղիղ: ՚Ի տարանկիւն, որոյ կողմանք են հաւասար. այլ անկիւնքն անհաւասար: և յանզուգակողմն. որ ոչ հաւասարակողմն է և ոչ

հաւաստարանկին։ Չեն հաստահիմն բաժնի յանանկին. ը̃ որով պարունակի գնտակաձեւն, ձուաձեւն, ոսպնաձեւն, սիւնաձեւն եւ̃։ Իսկ յանկինաւոր, ընդ որով պարունակին խորանաձեւն, բուրգաձեւն. եւ այլք. զորոց ձեւսն երկրաչափք։

Պրակ մետասաներորդ.

Յաղագս առնելութեան։

Առնելութիւն է պատահումն, որով ենթակայն դնի ներգործութ̃ պատճառող զգործ։ Իսկ բաժանի 'ի մնացող եւ յանցանող. մնացող առնելութիւն է, որ մնայ 'ի ներքս 'ի սկզբան իւրում. որպէս իմանալ, ճանաչել, զգալ. իսկ անցանող առնելութիւն է՝ որ դնի արտաքոյ. որպէս սպանանել, ապականել, վերաւորել։ Դարձեալ բաժանի յառնելութի̃ սոսկ, և յառնելութի̃ ոչ սոսկ։ Սոսկ առնելութիւն է՝ որով ենթակայն ոչինչ գործ արտադրէ. ո̃պ տալ առնուլ, բերել, տանիլ։ Ոչ սոսկ առնելութիւն է՝ որով ենթակայն արտադրէ զգործ. որպէս շինել, ճարտարապետել, նկ̃ել, գրել և այլն։

### Յաղագս յատկութեանց առնելութեան։

Առաջին յատկութիւն է ունիլ զներհական. զի ցրտացուցանել եւ ջերմացուցանել՝ ներհականան միմեանց։ Երկրորդն է ընդունիլ զյաւէտ եւ ըզնուազ. զի ջերմացուցանել լինի յաւէտ եւ նուազ՝ բայց ոչ ամ առնելոյն ունի յաւէտ եւ նուազ. որպէս ազդել արեգական եւ ամ աստեղաց ոչ սաստկանան եւ ոչ նուազին։

### Գլուխ երկոտասաներորդ.
### Յաղագս կրելութեան։

Կրելութիւն է պատահումն, որով կրողն ներգործութիւ ընդունի զգործ յարարողէն։ Սա բաժանի ըստ առնելութեան ՚ի մնացող եւ յանցանող։ Մնացող՝ որպէս իմանալ, ճանաչել. տեսանել, եւ այլն։ իսկ անցանող՝ սպանանել, ապականել, վիրաւորել, տաշել, մաշել. եւ այլն։ իսկ յատկութիւնք կրելութե են նման յատկութեանց առնելութե։

## Պրակ երեքտասաներորդ.

### Յաղագս ուրէ։

Ուրն է պատահումն իրի յայնմանէ, զի է 'ի տեղւոջ. որպէս լինիլ յերկինս, լինիլ յերկիր, լինիլ 'ի ծովու. լինիլ 'ի ցամաքի։ Եւ բաժանմունք ուրի են վեց. որպէս լինիլ 'ի վեր, լինիլ 'ի վայր. լինիլ յառաջկոյս, լինիլ յետկոյս, լինիլ յաջմէ. լինիլ յահեկէ։ Ուրն բաժանի 'ի ուր ա̅ծային և 'ի ուր ստեղծական։ Ուր ա̅ծային է ա̅մ ուրեք լինիլն ա̅յ։ Իսկ ուր ստեղծական, որպէս լինիլն ձկան 'ի գետ։ Ստեղծական ուրն բաժանի 'ի ուր սահմանական և 'ի ուր խորհրդական։ Սահմանական ուրն է այն, որով իրն այնպէս է 'ի միում տեղւոջ, որ ոչ է յայլում տեղւոջ. որպէս մեք այնպէս եմք 'ի տան, որ չեմք 'ի դրանն։ Խորհրդական ուրն է այն. զի մինչ գոյացութիւն հացին փոխարկի 'ի մարմին ք̅ի, մնան պատահմունք հացին. և այն պատահմունք շրջապատեալ զմարմինն ք̅ի լինին տեղի նորա. որպէս

ուսուցանէ մեզ հաւատն։

Ուրն սահմանական բաժանի 'ի հոգևոր, որով հոգեղէն ինչ գոյացութի լինի ներկայ տեղւոյ՝ բոլորն 'ի բոլորում, և բոլորն յիւրաքանչիւր մասունըս նորա. որպէս ոմն բոլոր հրեշտակ կարէ տարածիլ 'ի բոլոր տեղի ինչ. և ամփոփիլ՝ լինիլ 'ի միում մասին այնր բոլոր տեղւոյ, կամ որպէս բանական հոգին, բոլորն է 'ի բոլոր մարմնի և բոլորն յիւրաքանչիւր մասն մարմնոյն։ Եւ 'ի քանակական կամ պարագրական. որով մարմնեղէն գոյացութի է 'ի տեղւոջ. բոլորն 'ի բոլորում. և մասն 'ի մասին նորա. և սա միայն է ստորոգութենական։ Ուստի ստորոգութիւն՝ սահմանի, պարագրութի մարմնոյ 'ի պարագրութէ տեղւոյ։ Կամ սահմանի ուրն պատահումն որով իրն է 'ի տեղւոջ. կամ ուրն է պատահումն որով որոշի 'ի լինիլ յայս ինչ տեղւոջ և ոչ յայն տեղի։ Ուրի մարմինն է անտարբեր ըստ ինքեան 'ի լինիլ ուր և իցէ։ Ապա առ 'ի լինիլ յայս ինչ և ոչ յայն ինչ տեղւոջ, պիտոյ է մարմնոյն

որոշումն ինչ եկեալ 'ի վերայ։ Եւ զայն պատահական որոշումն իմանամք անուամբս՝ ուր։ Յայսմանէ յայտ է թէ՝ ուրն աստուածային ոչ է 'ի ստորոգութեան. զի ոչ է պատահումն. կամ պարագրութիւն մարմնոյ. և ոչ իսկ յատկապէս ուր. այլ ամենուրեքութիւն։ Նոյն և ուրն խորհրդական ոչ է յայսմ ստորոգութեան. զի է ամենևին այլաբուն 'ի բնականէն։ Եւ ոչ իսկ ուրն հոգևոր. զի հոգևոր իրք ոչ են 'ի տեղիս՝ փաղանունապէս. այլ կարի լինին այլազան եղանակաւ քան զմարմնեղէնս։ բայց զայս ամ աստուածաբանից է քննել.

## Գլուխ չորեքտասաներորդ.

## Յաղագս կայից.

Կայն է տրամադրութիւն մասանց իրին 'ի տեղւոջ։ Որ ի նոյն իր 'ի նմին տեղւոջ պէսպէս փոփոխութեամբ մասանց ընդունի, որպէս մարդն 'ի նստիլ 'ի կանգնիլ՝ յընկողմանիլ. եւն։ Արդ այսպիսի տրամադրութիւն մասանց 'ի տեղւոջ, ասի կայ։ Եւ բաժանի 'ի կայ

բնական և 'ի կալ անբնական։ Բնական կալն է այն, որով իրք են եդեալ 'ի սովորական կարգի. որպէս տանձենի, շլորենի, ղղեբենի, ընկզենի, և այլ բոյսք եթէ լիցեն 'ի սովորական կարգի եդեալ. զի ունիցին զոստս 'ի վեր և զարմատս 'ի վայր 'ի գետնի։ Իսկ անբնական կալն է, որով իրք չիցեն եդեալ 'ի բնական կարգի, այլ արտաքոյ իցեն այնր. որպէս բոյս ինչ, որ ունի զոստս 'ի վայր և զարմատս 'ի վեր. գդակին միջի կողմն 'ի վեր եդեալ. և վերին կողմն 'ի վայր. սանին դատարկ կողմն 'ի վեր եդեալ. հանդերձ շրջուն զգեցեալ. մարդն 'ի վերայ գլխոյ կանգնեալ. կամ 'ի վերայ քամակին ննջեալ ոտքն 'ի բարձր տեղւոջ. ևն։

Պրակ հնգետասաներորդ։

## Յաղագս ԵՐԲԻ։

Երբն է պատասխանումն իրի՝ յայնմանէ զի է 'ի ժամանակի։ Իսկ ժամանակն

է տեւողուն շարժման առաջնոյ Շարժունի. որ 'ի միջոցի քսան եւ չորս ժամուց կատարէ զիւր շրջանն։

Ապա որպէս վասն լինելոյ իրին 'ի տեղւոջ՝ ծագի ստորոգութին՝ Ուր. նոյնպէս վասն լինելոյ տեւողուե նորա կախեալ 'ի ժամանակէ՝ ծագի ստորոգութին՝ Երբ։

Ոմանք դնեն յայսմ ստորոգուե զերբն հեշտակաց. զի ունին հրեշտակք իւրեանց ժամանակ, որով չափին գործողութիք նոցա։

Այլ հասարակօրէն դնի արտաքոյ այսր ստորոգութեան, զի՝ ժամանակ հրեշտակաց ոչ միաբանի փաղանունապէս ը մերում ժամանակի. ուստի եւ ոչ երբն հրեշտակաց ընդ երբս մարմնական իրաց։

Եւ երկրորդ՝ զի 'ի հրեշտակս ոչ գըտանի մի ժամանակ հասարակաց. յորմէ հարկիւ կախեալ կայցեն գործողութիք հրեշտակաց. որպէս տեւողութիւնք ապականացու իրաց կախեալ կան 'ի տեւողութէ շարժման առաջնոյ Շարժունի։

Տեսակք այսորիկ ստորոգումն են այ-նոքիկ, որովք պատասխանեմք Հարցմանս. Ե՞րբ. այսինքն երէկ, վաղիւ, 'ի Հերուն Հետէ. 'ի յանցեալ ամի. առ զատկաւ, առ բարեկենդանաւ. 'ի յունվարի. 'ի փետրվարի. և այլ ժամանակական մակբայք։

## Պրակ վեշտասաներորդ։

### Յաղագս ունելոյ։

Ունելն է պատահումն ծագեալ յիրըս 'ի շրջարկութէ զգեստուց, զինուց և զարդուց։ Ստորոգումս ունելոյ ոչ է Հանդերձն կամ մարմինն, այլ միջակայն ինչ ծագեալ 'ի մարմնի 'ի շրջարկութէ զգեստուց, որովք զարդարի՝ և զինուց, որովք զինի մարդն՝ Տեսակք ունելոյ են զէնք և Հանդերձք. որովք և ասին, զինաւորեալ գոլ՝ զարդարեալ գոլ։

Զէնք բաժանին 'ի վնասաբարս. և 'ի պաշտպանականս։

Անասաքարք. որպէս Թունաւորեալ գոլ. փշաւորեալ գոլ: Պաշտպանականք. որպէս Թրաւորեալ գոլ. վահանաւորեալ գոլ: Հանդերձք բաժանին 'ի հանդերձս մարդկան. և 'ի հանդերձս անասնոց: Հանդերձք մարդկան. որպէս շապկաւորեալ գոլ. կապաւորեալ գոլ. չուխաւորեալ գոլ:
Հանդերձք անասնոց. որպէս բրդաւորեալ գոլ. փետրաւորեալ գոլ:

## Յօդուած առաջին:

Դնեմք աստանօր զչորս կանոնս բըտորոգութե, որով յատկացին ուղիղ ստորոգութիք յանուղիղ ստորոգութեց:
Նախ՝ որինչ դնի 'ի ստորոգութե՝ պարտի լինել էակ լրացեալ. զի անլրացեալ էակք, ոտք, ձեռք, և այլն, ընդ բոլորին դնին 'ի ստորոգութե. զի մարդն հանդերձ ոտիւք և ձեռօք է կենդանի:
Երկրորդ՝ որինչ դնի 'ի ստորոգութե. պարտի լինել էակ իրական. զի էակ բանին ոչ դնի 'ի ստորոգութե. զի

յասելն կենդանին է սեռ, ասեմ․ մարդն է կենդանի․ ուրեմն մարդն է սեռ․ որ է սուտ․ զի այս էակ բանի այլայլէ զուղիղ ստորոգութիւն։

Երրորդ՝ որինչ դնի 'ի ստորոգութեան, պարտի լինիլ էակ հունաւոր․ զի անհուն էակն ամ ոչ դնի 'ի ստորոգութեն․

Չորրորդ՝ որինչ դնի 'ի ստորոգութեան, պարտի լինիլ էակ անպարունակ․ զի էակքս՝ սպիտակ․ սեաւ ևն, են պարունակ էակ․ զի սպիտակն պարունակէ զսպիտակութիւն և զէնթակայն սպիտակութեան։ Բայց եթէ առեալ լինի 'ի տեղի վերայելոյ․ որպէս արիստոտէլ զորակութիւն՝ որակ ասէր և ըզքանակութիւն՝ քանակ, զառընչութիւն առինչ՝ կարեն դնիլ 'ի ստորոգութեան։

## Յօդուած երկրորդ։

Որինչ ստորոգի 'ի վերայ ստորակայից իւրոց, կամ փաղանունաբար ստորոգի․ որպէս կենդանին 'ի վերայ մարդոյ, ձիոյ, ջորւոյ, ոչխարի ևն, փաղանունաբար ստորոգի։

Գոյնն 'ի վերայ սպիտակութեան, սեաւութեան, կարմրութեան եւ փաղանունաբար ստորոգի: Կամ յարանունաբար ստորոգին, որպէս սպիտակն յարանունաբար ստորոգի 'ի վերայ բամպակի· ձեան: սեաւն 'ի վերայ ագռաւու եւ եթովպացւոյ յարանունաբար ստորոգի: Կամ համանունաբար· որպէս այրն 'ի վերայ քարեղինի եւ լիահասակ մարդոյ: ակն 'ի վերայ մարգարտի, աչայ՚ աղբերականն: վահանն 'ի վերայ մըկունդի եւ մարդոյ համանունաբար ըստորոգին:

Եւ կամ համեմատանունաբար ստորոգի· ո՛չ ոտն համեմատանունաբար ստորոգի 'ի վերայ ոտին աթոռոյ, կենդանւոյ, ոտին Ճ՛էհրէի ·շտեմարանի եւ ոտին եկեղեցւոյ:

## Յօդուած երրորդ:

Խնդրեսցես, թէ զի՞նչ իցէ վերացուցանին յանհատական եւ 'ի նիւթական թէութեանց, եւ թէ զի՞նչ իցեն այս թէութիւնք:

Պատասխանեմ, անհատական թէութիւնք են պատահմունք ինչ. կամ իրականք, և կամ բանիւ միայն զանազանեալք, որք ոչ են յէութենէ բնութեան. սակայն առանց նոցա ոչ երբէք ՚ի գոյութիւն եղանէ բնութիւն: Գլխաւորն է թուական տարբերութիւն, որով բնութիւն միոյ անհատի զանազանի ՚ի բնութենէ միւսոյն. զի նովաւ կացուցանի բնութիւն այս եզական զոր ոմանք կոչեն՝ այսութիւն. Թէպէտ լիապէս է նոյն ընդ բնութեան, բայց ոչ է յէութենէ նորա, զի լինել իմանամք զբոլորակն. թէպէտ և չածեմք զմտաւ զայս ինչ կամ զայն ինչ բոլորակ: Զհետ թուական տարբերութեան գայ գոյութիւն. և ապա բացորոշութիւն առ եզական տեղի և ժամանակ: Հուսկ յետոյ զուգաւորութիւն պէսպէս պատահմանց. որովք անհատըն կամ նշանակեալ որոշի. որպէս այս ինչ գծագրութիւն կերպարանաց. այն ինչ հայրենի գաւառ. և կամ որականայ. որպէս մուլլի պետրոսն. հիւանդ կիրակոսն. մեր սպիտակ էշն:

Եւ այս թէութիւնք ասին նիւթականք.

կի գրեթէ պատահին տեսակի վասն լինելոյն 'ի նիւթում։ Ապա բնութիւն ասի՝ վերացուցանել յանհատացուցիչ և 'ի նիւթական թէութեց, յորժամ մտօք ըմբռնի միայն ընդհանուր բընութիւնն ըստ էական ստորոգելեաց իւրոց, ոչինչ հայելով 'ի պատահեալսըն նմա ըստ գոլոյն 'ի կողմանէ իրին։ Կամ համառօտ ասասցուք, հայիմ յառաքինութիւն վերացուցեալ 'ի սոցանէ. այժմ, աստ. գոյութիւն, գիտուն պետրոսն. ծուաքիթ ղազալին. նախիջեւանցի մատթէոսն. և այլն։

Այքա են՝ որ պատահին ընդհանուր բնութեան և առնեն զնա եզական, կամ անհատ. Եռ։

Զի եզական գործօղն, եզական գործողութիւն և նորա եզական տեղին և եզական ժամանակն կամ եզական արտադրութիւն գործոյն ոչ են յէութենէ ընդհանուր բնութեան։

## Գլուխ առաջին։

### Յաղագս Նախադասութեան։

Նախադասութիւն է յայտարարութիւն երբ իմիք զայլմէ. որգոն, մարդն է բանական։ ահա յայսմ նախադասութեան, մարդն է ենթակայ. բանականն ստորոգեալ. իսկ բայն յօդաւորիչ։
Ըստ նիւթս բնականս նախադասութիւնն է ընդհանուր որգոն՝ մարդն է կենդանի. բնական նիւթք նախադասութեան. են սեռն, տեսակն, տարբերութիւն։ Իսկ ՚ի նիւթս ներընդունականս նախադասութիւն է մասնաւոր. որպէս՝ հրեշտակք են չարք։ իբր թէ՝ ոմանք հրեշտակք են չար։
Ներընդունական նիւթք նախադասութեան են ներկայ բայք ոմանք, որպէս բաժանեմ, ժողովեմ, կամ անցեալ ժամանակք բայից. որպէս կորեան, անկան. կամ ածականք ոմանք. որպէս խաբեբայ. կախարդ. եւն։
Նախադասութիւն բաժանի ՚ի նիւթական, ՚ի տեսական, ՚ի քանակական. եւ ՚ի յորակական. Նիւթական նա-

խադասութիւն է հարկաւոր, ներըն-
դունական, կարելի, և անկարելի. զո-
րով պարբերի նախադասութիւն: Հար-
կաւորն է, որ այնպէս յարմարի են-
թակային մինչ զի անհնար է թէ ոչ
պատշաճեսցի. որպէս այս՝ Աստուած է յա-
ւիտենական: մարդն է կենդանի բա-
նական: Ներընդունականն է, որոյ ըս-
տորոգեալն այնպէս յարմարի ենթա-
կային, որ հնար իցէ չյարմարել. որ-
պէս այս՝ պետրոս խօսի, ուտէ, ննջէ.
Եւն: Կարելին է որոյ ստորոգեալն յար-
մարի ենթակային, թէ և չիցէ յար-
մարեալ որպէս այս՝ ամենայն հաւ է սպի-
տակ. զի կարէր լինել այնպէս. թէ-
պէտ չէ այնպէս: Անկարելին է այն,
որոյ ստորոգեալն հակառակի ենթա-
կային. որպէս այս՝ հիւանդութիւն է
առողջութիւն. ջերմութիւնն է ցրտու-
թիւն. Եւն:

Նախադասութիւն ըստ տեսակին բա-
ժանի 'ի ստորասական և 'ի բացասա-
կան: Ստորասականն է, որ հաստատէ
զմի ինչ զայլմէ. որպէս՝ Աստուած է ար-
դար: Իսկ բացասականն է այն, որ 'ի

բաց բառնայ զմի ինչ յայլմէ. որպէս այս՝ պետրոս ո՛չ խնդայ ընդ յաջողուած բարեկամին իւրում. բայց բացասութիւն ո՛չ միշտ կացուցանէ զնախադասութի բացասական. այլ միայն յորժամ ո՛չ մասնիկն անկանի ՚ի վերայ շաղկապին. ուստի այս նախադասութիւք չեն բացասական. ա̃ծ պատուիրեաց մարդոյն ո՛չ գողանալ. ասաց նմա ո՛չ շնալ. եւն.

Նախադասութիւն քանակական բաժանի յընդհանուր, ՚ի մասնաւոր, յեզական, եւ յանորոշ. ընդհանուր նախադասութիւն է, որոյ ենթակայն է տրամակայեալ ընդհանրական նշանաւ՝ ա̃մ. ո՛չ ոք, կամ ոչինչ. որգոն, ա̃մ մեղաւոր է ադէտ. ոչինչ հրեշտակ է մարդ: Մասնաւորն է, որոյ ենթակայն է տրամակայեալ մասնաւոր նշանաւս՝ ո̃ն. որգոն, ոմանք ձկունք ունին զոտս եւ աւութի շնչոյ. Եզականն է, որոյ ենթակայն է տրամակայեալ կամ եզական նշանաւ. որպէս, այս մարդ է չար. այն մարդ է բարի. կամ եզական անուամբ. որգոն,

պշտօնուսոյց յաթէնս· կիրակոսն նն-ջեց ՚ի տան։ Անորոշն է, որոյ ենթա-կայն ոչ է և էք նշանաւ տրամանակայի, որ-գոն՝ մելամաղձոտք են կասկածոտք։ Ցանկութիւն է անյագ։

Նախադասութիւն որակական բաժա-նի ՚ի սուտն և ՚ի ճշմարիտն։ Ճշմարիտ նախադասութիւն է, որ այնպէս բա-ցատրէ զիրս, որպէս և ենիսկ։ Սուտ նախադասութիւն է, որ այլազգ բա-ցատրէ զիրս, քան զոր ենն։

Նախադասութիւն ըստ յարակացելոց նախ՝ բաժանի ՚ի պարզ և ՚ի բաղա-դրեալ։ Երկրորդ՝ ՚ի բացատրելիս։ Երրորդ՝ ՚ի բացարձակս և յեղանա-կաւորս· զորոց ասասցուք։

Պարզ նախադասութիւն է, որ բաղ-կանայ ՚ի միոջէ ստորոգելոյ յենթա-կայէ և ՚ի շաղկապէ, որգոն, Մարդ ա-գահ է թշուառ· և ոչինչ է փոյթ, թէ բազում, կամ սակաւ եղերք իցեն ՚ի կողմանէ ստորոգելոյն, և ենթա-կային, այլ միայն թէ իբրև զմի են-թակայ և զմի ստորոգեալ՝ շաղկապա-յօդեալ իցեն. որպիսի է այս, Երանե

այնմ՝ որ հեռի (է) 'ի հոգւոյ առն և տղոյ, իբրև զառաջին ազգ մարդկան, զհայրենի անդստանս արօրադրէ խորովք եզամբք, ազատ լեալ յամենայն վաշխից: զի յօդս՝ է. իմանի զօրութ, և այլ պարբերեալ նախադասութիւքն իբրև զմի ենթակայ զուգաւորին ընդ-ստորոգելոյս՝ երանի:

Բաղադրեալ նախադասութին է, որ բաղկանայ 'ի բազում նախադասութեց մասնկաւ ինն միաւորելոց. որգոն, 'ի նմին ժամանակի աքայաբ թագաւորէր 'ի Հրէաստան, և Հռօմուլոս շինէր զՀռօմ յԻտալիա: պիւթագորաս ուսոյց թէ, հոգիք մարդկան փոխադրին 'ի մարմնոյ 'ի մարմին. և թէ չէ օրէն ուտել զմիս: այլ և այս է բաղադրել. մահ և կեանք 'ի ձեռս լեզուի. այ մահ է 'ի ձեռս լեզուի, և կեանք է 'ի ձեռս լեզուի:

Նախադասութին բաղադրեալ՝ է հընգապատիկ. թէական. պատճառական. շաղկապական. զատական, և տրոհական: Թէականն է, յորժամ պարզ նա-

խադասութիւնքն միաւորին մասնկամբքս, Թէ. եթէ. կամ Թէ. ըստ այնմ զոր ասէ ք̅ս. եթէ ոք սիրէ զիս. զբանն իմ պահեսցէ, իմ եթէ չէր եկեալ՝ մեղ ինչ ոչ գոյր նոցա: Պատճառականն է, որ բաղադրի պատճառական շաղկապօքս՝ զի. վասն զի. և այլն: Շաղկապականն է, որ զբաղում պարզ նախադասութիւնս շաղկապէ մասնկամբս՝ և. որգոն, զազգատոհմ; և զնախնիս, և զոր ոչն արարաք մեք, զայն ա̅մ ոչ համարիմք մեր: Երբեմն շաղկապն զօրութ՟ դնի. օր՟՝ սիրտ զգուշաւոր 'ի ճախողակս յուսայ, 'ի յաջողուածս կասկածի հակառակ կողմանն վիճակին: Ստականն է, որ զպարզ նախադասութիւս միաւորէ մասնկամբքս՝ կամ; և կամ Թէ. ըստ այնմ; կեանս կամ սիրէ զայր իւր: և կամ Թէ ատէ: ոչինչ է 'ի միջի երրորդ: Տրոհականն է, որ զերկու պարզ նախադասութիւս միաւորէ տրոհական մասնկամբքս՝ բայց, այլ. որգոն. ոչ է գիտուն, բայց է ա̅ծապաշտ: ոչ շուք ազնուութե՟, այլ՝ առաքինութին գործէ ազնուականս:

Բացատրելի նախադասութիւն է, որ ըստ ձայնին թուի պարզ, այլ ը̄ իւրեան է բաղադրեալ. և վասն այնորիկ բաղադրեցելովն բացատրի. և է քառապատիկ, զատական. բացառական. համեմատական, և կրկնական. Զատականն է ընդ որում խառնին մասնիկքս՝ միայն. և եթ. որպէս՝ առաքինութիւն միայն է գովելի 'ի կենցաղումս. մասնիկն զատական երբեմն դնի միայն 'ի կողմանէ ստորոգելոյն, և յայնժամ զայլ ստորոգեալս արտաքսէ յենթակայէն. որգոն, ինչք միայն 'ի պէտս են ստանալի, և երբեմն դնի միայն 'ի կողմանէ ենթակային, և յայնժամ արտաքսէ զայլ ենթակայս 'ի ստորոգելոյն. որպէս՝ միայն ա̃ծ է յաւիտենական, Բացառականն է, որ տրամակայի բացառական մասնկամբքըս՝ բայ 'ի, բայց միայն. որգոն տըխմարն զոչինչ ուղիղ համարի, բայց միայն՝ զոր ինքն առնէ: Համեմատականն է, որ բաղկանայ համեմատական մասնկամբ, կամ յայտնապէս, և կամ լռելեայն. ո̃պ՝ զբարեկամն կորուսանել

մեծէ քան զմ՟ վնասս. իբր թէ ըզ-բարեկամն կորուսանել է վնաս, և այլ կորուստ ո՛չ է այնպէս վնասակար.

Արկնականն է, որոյ ենթակայն բաղկանայ կրկնիչ մասնկամբքս՝ իբր զի. որպէս, ըստ որում. ո՛րգոն՝ խոհեմն ը՟ որում խոհեմ, զմ՟ ինչ գործէ ըստ կարգի. արհեստաւորն որպէս արհեստաւոր. ո՛չ սխալէ ՚ի գործս իւր, Լ՟ն.

Նախադասութիւն դարձեալ բաժանի ՚ի բացարձակն և յեղանակաւորն. Բացարձակն է, որ պարզապէս զստորոգեալն յայտնէ զենթակայէն. որգոն, մ՟ ագահ է թշուառ. Իսկ եղանակաւորն է, որ բացատրէ զեղանակ ինչ, որով ստորոգեալն յարակցի ը՟ ենթակայէն. ո՛րպէս՝ հարկաւոր է ագահին լինել թշուառ. ուստի յեղանակաւոր նախադասութ՟ե երկու ինչ է որոշելի, ենթակայ և եղանակ. ենթակայն է նախադասութ՟ն բացարձակ՝ պարունակեալ յեղանակաւորում. որպէս՝ (ագահն է թշուառ.) է ենթակայ. իսկ հարկաւորն է եղանակ ստորոգելոյն. Չորք են այս եղանակք.

հարկաւորապէս, ներընդունակաբար, կարելաբար և անկարելաբար։ ուստի չորք են տեսակք եղանակաւորաց․ որգոն՝ մարդն հարկաւորպէս է բանական, մարդն ներընդունակաբար է բարի։ մարդն կարելաբար է չար։ մարդն անկարելաբար է հրեշտակ։ Այս եղանակք կրկնակի բացատրին․ կամ անուամբ, որպէս՝ հարկաւորէ մարդոյ մեռանիլ։ կամ մակբայիւ․ որպէս՝ մարդն հարկաւորապէս մեռանի։ Եղանակաւորն, յորում եղանակն անուամբ բացատրի, ունի զբաղադրեալ իմացուած․ որպէս այս, կարելի է արդարոյն լինիանիրաւ։ զի ցուցանէ․ թէ հնար է, զի ոք լիցէ միանգամայն արդար և անիրաւ, որ է սուտ։ Բայց եղանակաւորն, յորում եղանակն բացատրի մակբայիւ, ունի զբաժանեալ պարզ իմացուած․ որգոն, արդարն կարելաբար է անիրաւ։ իբր թէ․ այն, որ այժմ է արդար, կարէ լինիլ անիրաւ, կորուսեալ զարդարութիւն իւր, որ է ճշմարիտ։

Յաղագս եղանակաւոր նախադասութեանց պարտ է գիտել. նախ՝ զի 'ի բաղադրեալ եղանակաւորն եղանակն միշտ է ստորոգեալ, և բացարձակն ենթակայ. զի եղանակն ստորոգի ըզնմանէ. և չէ փոյթ, թէ եղանակն յառաջագոյն իցէ կարգեալ. զի ո՛չ միշտ 'ի նախադասութիւնս յառաջ է ենթակայն, այլ և երբեմն վերջադասի, որ և բացարձակաց ևս պատահի. որպիսիք են, չարագոյն է վարիլ զհետ տոփանաց. շահավաճառ մեծ է ամպարշտութիւն: ահա վարիլ, ամպարշտութիւն՝ են ենթակայ. թէպէտ և վերջադասեն: Բաղադրեալ եղանակաւորքն երկոքին բովանդակ լինիլ եղական. որպէս՝ հարկ է ամենայն մեղաց կամ 'ի քէն, կամ յայլ ընդունիլ զպատիժս: այս նախադասութիւն է եզական, զորմէ հարկաւորն ստոր ասի: բայց սակայն մտածի 'ի նոսա մանաւոր ինչ եղանակ ընդհանրութեան, կամ մասնաւորութեան. զի հարկաւորն է հանդէպ ամենայնի. և անկարելին ոչնչի. զի որ հարկաւոր է լինել, հանապազ է. և

որ անկարելին է լինիլ, ոչ երբեք է։ իսկ կարելին և ներընդունականն համագէտ են մասնաւոր նշանիւ. զի որ ներընդունականն է և կարելի, երբեմն է, և երբեմն ոչ։

## Պրակ երկրորդ.

Որք են յատկութիւնք նախադասութեան. Հակադրութիւն. անդրադարձութիւն և համագէտութիւն։

### Յօդուած առաջին.

### Յաղագս հակադրութեան։

Հակադրութիւնն է ստորասութիւն, կամ բացասութիւն նոյնոյ զնոյնոյ։ և է երրեակ. հակասականն, ներհական, և ենթաներհական։ Հակասական հակադրութիւն, է դիմամարտութիւն ՚ի մէջ երկուց նախադասութեանց, որոց մինն է ընդհանուր, և միւսն մասնաւոր. կամ երկաքանչիւրն է եզական, մինն ստորասական և միւսն բացասական. որպոն ամ մարդ է տրամաբան. ոմն մարդ ոչ է տրամաբան։ պետրոսն արդար է, պետրոսն ոչ է արդար. և սոցա մինն է միշտ ճշմարիտ, և միւսն

սուտ։ Ներհական հակադրութիւն է դիմամարտութիւն 'ի մէջ երկուց նախադասութեանց ընդհանրից, որոց մին է ստորասական և միւսն բացասական․ որգոն, ամ մարդ է արդար․ ոչ ոք մարդ է արդար։ և սոքա երկոքեանն են սուտ։ Ենթաներհական հակադրութիւն է դիմամարտութիւն 'ի մէջ երկուց նախադասութեանց մասնաւորաց, որոց մին է ստորասական և միւսն բացասական․ որգոն, ոմն մարդ է արդար․ ոմն մարդ ոչ է արդար։ և սոքա երկոքեանն են ճշմարիտ։ Ամենք յաւելուն և զչորրորդ տեսակ հակադրրութիւն, զոր կոչեն ընդմիմեամբ․ և է 'ի մէջ երկուց ստորասականաց, կամ երկուց բացասականաց, որոց մին է ընդհանուր և միւսն մասնաւոր․ որգոն, ամ մարդ է արդար, ոմն մարդ է արդար։ ոչ ոք մարդ է արդար․ ոմն մարդ ոչ է արդար

Ա. Ձեւոյն պետոյն հակադրութեան երեւին յաղէնոսէնս.




## Յօդուած երկրորդ.

### Յաղագս հանգիտութեան.

Հանգիտութիւն, որպէս և անունն իւր ցուցանէ, է նոյն զօրութիւն, և նոյն իմացուած երկուց նախադասութեանց ՚ի հաւասարութենէ նշանաց յառաջ եկեալ. Աստի որպէս իւրաքանչիւր նախադասութիւն ունի զնախադասութիւն իւր ինքեան հակակայ, նոյնպէս ունի և ըզ- հանդէտ. զի թէ յաւելցի բացասական

մակբայս՝ ոչ. Նախադասութ՟ն լինի հանգէտ խուրում հակակայի. որպէս յայսմ՝ ամ՟ մարդ է արդար. եթէ յաւելցի բացասական մասնիկս՝ ոչ, ասելով ոչ ամ՟ մարդ է արդար, լինի հանդէտ խուրում հակասականի, ոմն մարդ ոչ է արդար։

Կանոն հանգիտութ՟ն են երեք։ Առաջին է նախադասութ՟ն հակասական. եթէ դիցի յառաջ քան զենթակայն՝ ոչ, լինի հանդէտ խուրում հակասականի. որպէս՝ ոչ ոմն մարդ է արդար. նոյն է ընդ այսմ, ոչ ոք մարդ է արդար։ Երկրորդն է նախադասութ՟ն ներհակին. եթէ դիցի յոյն ՚ի վերջոյ քան զենթակայն բացասութ՟ն, լինի հանդոյն խուրում ներհակինի. ո՟պ, յայսմ ոչ ոք մարդ է տրամաբան. եթէ դիցի յետոյ քան զենթակայն մասնիկ ինչ բացասական այսպէս, ոչ ոք մարդ ոչ է տրամաբան. հանգիտանայ այսմ, ամ՟ մարդ է տրամաբան։ Երրորդն է նախադասութ՟ն ընդ միմեամբ. եթէ դիցես յայսմ յառաջոյ և ՚ի վերջոյ բացասական մասնիկ ինչ, հանգիտանայ

միւսում ընդ միմեամբք. որպէս յայսմ, ոմն մարդ է տրամաբան. եթէ դիցես յառաջոյ և 'ի վերջոյ. ոչ, այսպէս՝ ոչ ոմն մարդ ոչ է տրամաբան. համագիտանայ այսմ, ամ մարդ է տրամաբան: Կի հակասականս զբացասութիւն դիր յառաջ. 'ի ներհականս դիր զկնի. 'Ի ընդ միմեամբս դիր նախ և զկնի.

## Յօդուած երրորդ.

### Յաղագս անդրադարձութեան նախադասութեան:

Անդրադարձութիւն է փոխադարձութի նախադասութեան. զի պահմամբ ճշմարտութեան ստորոգելոյն լիցի ենթակայ, և ենթակայն ստորոգեալ. որգոն, ոմն մարդ է սեաւ. ոմն սեաւ է մարդ: Ամ յանդրադառնալի նախադասութիս գտանին քառապատիկ տարբերութիւնք որոց են ոմանք ընդհանուր ստորասականք. որգոն, ամ մարդ է բանական: ոմանք են ընդհանուր բացասականք. որգոն. ոչ ոք քար է կենդանի: ոմանք մասնաւոր ստորասականք,

որգոն, ոմն կենդանի է մարդ։ ոմանք մասնաւոր բացասականք. ոմն իմացական ոչ է կենդանի։

Արդ՝ երրեակ է անդրադարձումն. պարզ, ըստ պատահման, և ըստ հակադրութեան։ Պարզ անդրադարձումն է փոփոխումն ստորոգելոյն յենթակայ, պահելով նոյն զքանակութիւն, և զընդհանրութիւն կամ զմասնաւորութիւն. որգոն, ոմն մարդ է արդար, ոմն արդար է մարդ։ ըստ պատահման անդրադարձումն է փոփոխումն ստորոգելոյն յենթակայ այլայլութեամբ քանակութեան. զի յընդհանրական նախադասութենէ լինի մասնաւոր. որգոն, ամ մարդ է կենդանի, ոմն կենդանի է մարդ։ Ըստ հակադրութեան անդրադարձումն է փոփոխումն ստորոգելոյն յենթակայ, փոխելով զորոշեալ եզերս յանորոշս. (անորոշ եզերք են բաղկացեալք բացասականաւս՝ ոչ, որպէս՝ ոչ քար. ոչ կենդանի. ոչ մարդ. և այլն։) որգոն, ամենայն մարդ է կենդանի. ամենայն ոչ կենդանի է ոչ մարդ։

Կանոնք անդրադարձութե՟ են երեք. Առաջինն է, զի Նախադասութի՟ն ընդհանուր բացասական և մասնաւոր ստորասական անդրադարձին պարզապէս. որգոն, ոչ ոք մարդ է հրեշտակ. ոչ ոք հրեշտակ է մարդ: ոմն մարդ է արդար. ոմն արդար է մարդ:

Երկրորդ կանոնն է, զի Նախադասութե՟ն ընդհանուր ստորասական անդրադարձի ըստ պատահման. որպէս՝ ամ՟ մարդ է կենդանի, ոմն կենդանի է մ՟րդ:

Երրորդ կանոնն է. զի մասնաւոր բացասականն անդրադարձի ըստ հակադրութե՟, որգոն, ոմն մարդ ոչ է արդար. ոմն ոչ արդար ոչ է ոչ մարդ: Ընդհանուր ստորասականին ևս հնար է ը՟ այսմ հակադարձիլ, որգոն, ամ՟ մարդ է կենդանի. ամ՟ մարդ ոչ կենդանի է ոչ մարդ:

Յաղագս եղանակաւոր Նախադասութեց գիտելի է. զի եթէ լինեն բաժանելք ըն՟ եթէ եղանակն բացատրիցի մակբայօր՛ն. որպէս յայսմ, մարդն ներընդունակաբար է սպիտակ. այնպէս պարտ

է խօսիլ զնոցանէ, որպէս զբացարձակաց. Նոյնպէս եթէ իցեն բաղադրեալք ըստ եթէ եղանակն. բացատրեսցի անուանաբար, որպէս յայսմ՝ ներընդունական է մարդոյ լինիլ սպիտակ: Նախ առաջին անդրադարձութիւն ոչ ունի յայսմ՝ զտեղի. զի զեղանակն, որ դնի 'ի կողմանէ ստորոգեցելոյն, ոչ է պարտ այլայլել: Իսկ 'ի հակադրութեանց միայն հակասականն գտանի 'ի նոսա. զի այս ամենայն նախադասութիւնք են իբրև զեղանակս. քանզի յորժամ ասեմք, հարկաւոր է ամենայն մարդոյ լինիլ բանական, նոյն էր թէ ասէաք զայս նախադասութիւն, ամենայն մարդ է բանական, է հարկաւորապէս ճշմարիտ: Արդ 'ի յեղական նախադասութիւնս՝ գտանի միայն հակադրութիւն հակասական: Բայց լինի 'ի նոսա հանդիպութիւն յառաջ եկեալ 'ի նշանաց. որպէս վերադրոյն ցուցաւ. Հարկաւորն ընդ ամենայնի. անկարելին ընդ ոչ ուքին. կարելին և ներընդունականն ընդ ումեմն. ուստի հարկաւոր է լինիլ, և անկարելի է լինիլ՝ են ներհականք, կարելի է լինիլ, և կարելի է ոչ լի-

նիլ՝ են ենթաներհականք։ Հարկաւոր է լինիլը և կարելի է լինիլ։ կամ անկարելի է լինիլ, և կարելի է ոչ լինիլ՝ են ընդ միմեամբք։ Իսկ հարկաւոր է լինիլ, և կարելի է ոչ լինիլ։ անկարելի է լինիլ, և կարելի է լինիլ՝ են հակասականք։

որպէս երևի յայս ձև։




Եթէ կամիս հանդիտացուցանել զնոսա միմեանց յաւելմամբ բացասական մասնկանս՝ ոչ, զյետադրելի բայասութիւն դիր յառաջ քան զյօդս՝ լինիլը, և զնախադրելիս յառաջ քան զյօդս՝ է, որով հան-

գիտանան միմեանց. ոչ ՚ի հակասականս է յօջադրել, ՚ի ներհականս յետադրել. ևն։

## Գլուխ առաջին։

### Յաղագս ձեռնարկութե։

Ձեռնարկութին է բան, յորում մի ինչ յայտնէ մակաբերի։ Արդ՝ երրակի է մակաբերութին. նախ՝ նմանն ՚ի նմանում մակաբերի. Երկրորդ՝ ընդհանուրն ՚ի մասնաւորաց. Երրորդ՝ մասնաւորք յընդհանրից. զի խորաքանչիւր մասնաւորք ընդ ընդհանրին պարունակին, որպէս մարդ. ձի. եզն, և այլն, պարունակին ընդ ընդհանրիւս կենդանի։ Եւ յայսմանէ յայտ է թէ՝ երեք են տեսակք ձեռնարկութե. յարացոյց, մակածութին, և հաւաքաբանութին. ընդ որով պարունակին՝ հնարք, համաբարդութին, տրամախոհութին, և երկայրաբանութիւն։

Յարացոյցն է ձեռնարկութին, յորում ՚ի նմանւոյ նման ինչ մակաբերի. որգոն, գինի և արբեցութին կորուսին զաղէքսանդր, ապա և զքեզ կորուսցեն, եթէ տեղի տացես այնց։ Սէրն ախտեղի

մոլորեցոյց զսողոմոն, և զհայրն նորին դաւիթ, և զայլ իմաստուն արս, ապա և զքեզ մոլորեցուսցեն, եթէ նովիմբ ախտասցիս։

Անկացութիւն է ձեռնարկութիւն, յորում ըստ բաւականին թուեալ զմասունս, յայնցանէ ընդհանուր ինչ հետևեցուցանի. որգոն, մեծն աղէքսանդրր յաղթեաց առ դրանիկաւ, առ եւսեաւ, առ մելիտեաւ, առ արբեղաւ, ևն, ապա ամ՟ ուրեք յաղթօղ գտաւ։

Սա լինի թիւր, եթէ մասունք ամ՟ 'ի թիւ ոչ մտանիցեն. ուստի մակածութիւնն յեղականաց առ տեսակն՝ իբր 'ի բազումն տկարանայ, զի ամ՟ եզականք ոչ են մեզ յայտնի. որպէս թէ ոք ասիցէ զամ՟ նապաստակս լինիլ շիկաթուխ. յայն սակս զի և ոչ զմի 'ի նոցանէ ետես այլաղգ. քանզի հնար է նոցա լինիլ և յայլ գոյն, զոր մեք չեմք տեսեալ։ Նա՝ 'ի սաստիկ ձմեռնային գաւառս լինին սպիտակ։ բայց 'ի տեսակաց առ սեռս ապահովագոյն է, զի զտեսակս կարեմք դիւրաւ ճանաչել. որպէս ասեմք, ձին է կենդանի, էշն է

կենդանի, Սա՟. և հետևեցուցանեմք, ուրեմն և այլ ա՟ծ որ ինչ ունի տուր և առունն չնչոյ, է կենդանի։

Հաւաքաբանութիւն է ձեռնարկութիւն, յորում ՚ի յընդհանրոյ մասնաւոր ինչ ընդ նովաւ պարունակեալ՝ մակաբերի. քանզի յայսոսիկ սկզբունս հաստատի. որ ինչ ասի զամենայնէ, ասի և զիւրաքանչիւրոց ընդ նովաւ եղելոց, և որ ինչ բացասի զամենայնէ, բացասի և զիւրաքանչիւրոց ընդ նովաւ եղելոց. ուստի ՚ի սմա ՚ի մասնաւորաց ոչինչ եզրակացուցանի։ օրինակ սորա է, Ա՟մ չար է խորշելի. այլ մեղքն է չար. ուրեմն ամ՟ մեղք է խորշելի։

Հնարքն է հաւաքաբանութե, որոց մի յառաջարկութեանց պակասի. որգոն, մեղքն է չար, ուրեմն է խորշելի։ արդ՝ ՚ի համառօտութե սակս՝ սովրաւ վարիմք յոլովակի, զայն առաջարկութի որ յայտնի է և դիւրիմաց՝ թողեալ զօրութեբ, երբեմն լինի մի միայն նախադասութե. որգոն, քրիստոնեայդ՝ ը՟ քո՟ օրինացն կեցցես. զի յայսմ պարունակի հնար այսպիսի։ քրիստոնեայ

ես, ապա կեցջիր ըստ օրինայն քո։

Համաբարդութին է հաւաքաբանութեն կուտակեալ, յորում 'ի բազում նախադասութեց կարգաւ դասաւորելոց՝ անագան ուրեմն ժամանի յեզրակացութին, որգոն, մեղքն զա̃ծ բարկացուցանէ և որ ինչ զա̃ծ բարկացուցանէ. զմեզ 'ի նմանէ որոշէ. որ ինչ զմեզ յա̃յ որոշէ, 'ի գերագոյն բարեաց զրկէ. որինչ 'ի գերագոյն բարեց զրկէ, մեծ է քան զա̃մ չարիս, ուրեմն մեղքն մեծ է քան զա̃մ չարիս։ այս ազգ ձեռնարկութե ոչ յաճախ 'ի գործ ածի. մի՝ զի զմիտս ծանրաբեռնէ բազմապատիկ նախադասութ̃բք։ և երկրորդ՝ զի պատրանաց է ենթակայ. քանզի 'ի բազումս անդ դիւրին է սպրդել անյարիր նախադասութե իրիք, որ զբաղազանութի ձեռնարկութեն խանգարէ։

Տրամախոհութին է հաւաքաբանութին, որոյ մեծագոյնն և փոքրագոյնն պարունակեն զայլ նախադասութիս 'ի յուցումն իւրեանց, որգոն, որ անձկայ և կասկածի, ոչ է երանեալ. զի ոչ անփոյթ ունի, զոր ունի. և զոր ունին

կամի, չունի. այլ մեծատունք անձկան քաղում իրաց. զոր ոչ ունին և կասկածին կորուսանել, զոր ունին. ապա մեծատունք ոչ են երանեալք. ընդարձակ է յոյժ այս ձեռնարկութիւն. զի ձգի երբեմն 'ի ճառս երկայնս, որք 'ի մի տրամախօսութիւն բովանդակին:

Երկսայրաբանութիւն է հաւաքաբանութիւն ինչ, յորում զատական առաջարկութեան երկաքանչիւր մասն միանգամայն առնի, և առընթեր դնի յեզրակացուցանել զառաջադրեալն, որ՝ եթէ ամուսնասցիս, կամ ծնցիս որդիս, և կամ ոչ. եթէ ծնցիս, տես, քանի՞ աշխատութիւն է, եթէ ոչ ծնցիս զինչ օգուտ իցէ. ապա լաւ է չամուսնանալ: և յերկու դիպի սմա պակասիլ. նախ՝ յորժամ 'ի մէջ մասանց տրոհութեան կայցէ ինչ միջական. զի յայնժամ ոչ հետևեցուցանէ. իբր այն, զոր սոկրատէս մերձ 'ի մահ գոլով՝ ասաց, կամ մահուամբ իմ զգայութիւն բառնի, որպէս 'ի քուն. և կամ հոգին 'ի լաւագոյն տեղի փոխադրի. եթէ առաջինն, քաղցրութիւն հանգեայց. և եթէ երկրորդն՝ երա-

նագոյն ես կեցից ընդ որփէոսի ընդ ոշլիսեայ, ընդ հոմերոսի և ընդ այլոց քաջաղանց. ապա լաւ է մեռանիլն. զի 'ի մէջ երկոցուն սոցա գտանի միջական ինչ սահման, այսինքն՝ փոխադրութիւն յայլ կեանս, որ թշուառ ես իցէ քան զայս։ երկրորդ՝ յուլ է երկսայրաբանութիւն, յորժամ զերկաքանչիւր մասն հնար իցէ յեղաշրջել 'ի հակառակ կողմն, որպէս յառաջնումն անդ, եթէ ամուսնասցիս, կամ ծնցիս որդիս, կամ ոչ. եթէ ոչ ծնցիս, զինչ աշխատութիւն է, եթէ ծնցիս. տես, որչափ օգուտ իցէ ապա լաւ է ամուսնանալ։

## Գլուխ երկրորդ։

### Յաղագս հաւաքաբանութեան։

Հաւաքաբանութիւն և ևս սահմանի այսպէս, է ձեւնաւորութիւն, յորում երկու եզերք, որք 'ի ծայրս նախադասութեան՝ համեմատին ընդ միում երրորդի ստորասաբար կամ բացասաբար, զի յայնմանէ եզրակացուսցի համեմատութիւն նոյն առ միմեանս ստորասական

կամ բացասական. զի բազում անգամ ՚ի մէջ եզերայն յայտնի ըմբռնելոց ոչինչ բաղաձանուե՟ կամ դիմամարտուե՟ երևի. ապա խնդրի երրորդ ինչ եզր, որ զնոցին կապակցուե՟ կամ դիմամարտութե՟ ՚ի յայտ բերցէ, և այս հաստատի յայսոսիկ սկզբունս. որք են նոյն ընդ միում երրորդի. են նոյն ը՟ միմեանս. իսկ որոց միոյն է նոյն ընդ միում երրորդի, և միւսոյն ոչ, այնք ոչ են նոյն ընդ միմեանս. փ՟՝ խնդրի թէ մարդեօք լուսինն իցէ յիւրմէ լուսաւոր. յեզերաց աստի ոչինչ բաղաձանուե՟, և ոչինչ դիմամարտուե՟ երևի ՚ի նոսա. վասն որոյ համեմատեմք զնոսա ը՟ միում երրորդի, փ՟ միշտ լուսաւոր լինելոյն, այսպէս. որ յիւրմէ է լուսաւոր, միշտ է լուսաւոր. այլ լուսինն ոչ է միշտ լուսաւոր. ապա լուսինն ոչ է յիւրմէ լուսաւոր։

՚Նախադասութե՟ն, յորում մեծ ծայրն եդեալ լինի ընդ միջնորդին, ասի մեծագոյն. որպէս այս, որ յիւրմէ է լուսաւոր, միշտ է լուսաւոր։

՚Նախադասութե՟ն, յորում փոքր ծայ-

րըն երեւալ լինի ընդ միջնորդին, ասի փոքրագոյն, որպէս այս, լուսինն ոչ է յիւրմէ լուսատու։ Իսկ յորժամ փոքըր ծայրն դնի ընդ մեծ ծայրին, ասի եզրակացութի, որպէս այս, ուրեմն լուսինն ոչ է յիւրմէ լուսատու։

Յամենայն հաւաքաբանութիս պարտին լինիլ միայն երեք եզերք, քանզի ամ արհեստ հաւաքաբանութեն յայսմ կատարի, զի երկուց ծայրից կապակցութիւնն կամ դիմամարտութին յայտ լիցի 'ի նոյին համեմատութէ ընդ միում երրորդի. բայց յասելն. թէ՝ լինիցին միայն երեք եզերք. պարտ է իմանալ զայն ըստ մտաց, և ոչ ըստ ձայնին. զի այս եզերք կարեն լինիլ պարունակ, մանաւանդ թէ և երբեմն ամբողջ նախադասութիք յայլս պարածածկեալք, որպէս յայսմ. որ անողորմն, և անհանգիստ տերանց ծառայէ, ոչ 'ի խաղաղութե, և ոչ յազատութե վայելէ, այլ որ վարի ըստ ախտից իւրոց, անողորմ և անհանգիստ տերանց ծառայէ. այս որ վարի ըստ ախտից իւրոց, ոչ 'ի խաղաղութե և ոչ յազատութե վա-

յելէ։ Ահա ձեռնարկութ՟ի պատուա-
կան՝ յերից եղերայ իրօք բաղկացե՛լ
թէ և իւրաքանչիւրն 'ի նոցանէ ըզ-
բաղում ձայնս մանաւանդ թէ զամ-
բողջ նախադասութ՟իս յինքեան պա-
րածածկէ։

## Յօդուած առաջին։

### Յաղագս բաժանման հաւաքաբանութ՟ե ընդհանրապէս։

'Ի հաւաքաբանութ՟ե երկու ինչ է զանազանելի. նիւթ և տեսակ։ Նիւթ նորա է կրկին, հեռաւոր և մերձաւոր։ Հեռաւոր նիւթ նորա են եզերք, իսկ մերձաւոր նիւթ նորա են նախադասութ՟իք, զի յեզերաց լինին նախադասութ՟իք, և ի նախադասութ՟եց հաւաքաբանութ՟ի։ Տեսակ նորա է արհեստական տրամադրութ՟ի եզերաց և նախադասութ՟եց, յորոց բաղկանայ։ Տրամադրութ՟ի եզերաց է դասաւորութ՟ի եզերաց ընդ միջնորդին։ սա կոչի Ձև հաւաքաբանութ՟ե։ Տրա-

մադրութեան նախադասութեանց է դասաւորութիւն նոցա ընդ միմեանս ըստ ընդհանրութեան և մասնաւորութեան, ըստ ստորասութեան. կամ բացասութեան. և սա կոչի եղանակ հաւաքաբանութեան։ Յայսցանէ բղխեն պէսպէս բաժանմունք հաւաքաբանութեանց։

Հաւաքաբանութիւնս ըստ նիւթոյն բաժանի յապացուցականս, ի հաւանականս, և ի խաբէականս։ Ապացուցականն է. որ բաղկանայ ՚ի նախադասութեանց, որք հարկաւորապէս են ճշմարիտ։ Հաւանականն է, որ բաղկանայ յայնպիսի նախադասութեանց, որք միայն հաւանեցուցանեն։ Խաբէական հաւաքաբանութիւն է, որ բաղկանայ յայնպիսի նախադասութեանց, որ առ երևոյթս են ճշմարիտ. բայց իրօք սուտ։

Հաւաքաբանութիւն ըստ տեսակին բաժանի նախ՝ ՚ի հաւաքաբանութիւն կերպացեալ և յանկերպ։ Անկերպ հաւաքաբանութիւն է, որ առաջադրի առանց սահմանաւոր ինչ տրամադրութեան եզերաց և նախադասութեանց. որպիսի է այս,

եթէ հեթանոսաբար կեցցես, մի՛ ակնկալցիս փրկութե, որ խոստացեալն է յոյ՝ միայն, որոց վարին քրիստոնեաբար, քանզի յայսմ նախադասութե կատարեալ հաւաքաբանութի կայ այսպիսի որ հեթանոսաբար վարի, ոչ կարէ ակնունիլ փրկութե, որ խոստացեալն է յոյ՝ միայն՝ որոց վարին քրիստոնէաբար. այլ դու հեթանոսաբար վարիս. ապա ո՛չ կարես ակնունել այնմ փրկութե։ Այսպիսի հաւաքաբանութիք յոլովակի գտանին ի գրոցս և ի վրդապետական գիրս։ Ախորժագոյնք են քան զայլս. բայց պատրանաց ենթակայ. վայ և զգուշալի են։ Կերպացեալ հաւաքաբանութին է, որոյ եզերք և նախադասութիք ըստ իւրաքանչիւր կարգի ուրոյն ուրոյն դասաւորին. զի սոքա առյայտնագոյն և որոշագոյն մեկնութե խնդրոց՝ են յոյժ պիտանի. զի զօրութի, կամ տկարութի, բաղադանութի, կմ ընհանրութի տրամաբանութե իսկ և իսկ յայտնապէս ի նոսին տեսանի։

Հաւաքաբանութին կերպացեալ բաժանի ի պարզ և ի բաղադրեալ։

Բաղադրեալն է, որ կամ 'ի բաղում նախադասութեց բաղկանայ, որպէս համաբարդութիւն, երկսայրաբանութիւն, և և տրամախոհութիւն. և կամ յերից միայն, որոց մեծագոյնն է բաղադրեալ և զեզրակացութիւն բովանդակ պարունակէ: Հաւաքաբանութիւնք այսպիսիք են երեք՝ թէական, զատական, և շաղկապական:

Օրինակ թէական հաւաքաբանութեան. եթէ ագահն է միշտ կարօտեալ, միշտ է թշուառ: այս հաւաքաբանութիւնք կրկնակի եզրակացութեան. նախ ըստորասական առաջարկութեան հետևի ստորասական մասնաւոր, Երկրորդ՝ բացասական առաջարկութեան հետևի բացասական մասնաւոր: Բայց ընդհակառակս ոչ եզրակացուցանեն. որպէս յայսմ թէականէ, եթէ ընթանայ, շարժի. հարկէ հետևեցուցանել, ընթանայ, ապա շարժի. կամ ոչ շարժի, ապա ոչ ընթանայ. բայց ոչ ընդհակառակն սորին. ոչ ընթանայ, ապա ոչ շարժի. կամ շարժի, ապա ընթանայ. զի ստորասական նախադասութեան

առաջարկութիւն միշտ կացուցանէ ըզ-հետեւութիւն, բայց հետեւութիւն ոչ կացուցանէ զառաջարկութիւն, որպէս այս, եթէ մարդ է, է կենդանի. բայց ոչ է հակառակն. եթէ է կենդանի, է մարդ, որ է սուտ: Օրինակ զատական հաւաքաբանութե. կամ արեգակն պատի զերկրաւ, կամ երկիր զարեգակամբ. այլ երկիր ոչ պատի զարեգակամբ, ապա արեգակն պատի զերկրաւ. Սխալ է, եթէ ՚ի ծայրս տրոհութեան գտցի միջնորդ ինչ. վասն զի յայնժամ ՚ի բացասելն զմին, ոչ հետեւի երկրորդն. զի ՚ի բաժնիլ երկոցունց, կարէ կալ միջինն, որպէս յայսմ, Այրն մեծատուն կամ պարտէ վատնել զարծաթն, կամ առ իւր պահել. ոչ է պարտ առ իւր պահել. ապա պարտ է վատնել. կամ ոչ է պարտ վատնել, ապա պարտ է առ իւր պահել: երկոքեանն են սուտ. զի ոչ պարտ է առ իւր պահել ժլատութեամբ, եւ ոչ վատնել անառակութեամբ, այլ ուղիղ մատակարարել, որ է միջական ինչ.

Օրինակ շաղկապական հաւաքաբանութե.

ոչ ոք կարէ ծառայել ա̃յ և մամոնայի. իսկ արդ՝ բազումք ծառայեն մամոնայի. ապա բազումք ոչ ծառայեն ա̃յ։ ՚Ի շաղկապական հաւաքաբանութե̃ն՝ ՚ի դնիլ ստորասական մասին՝ առ բացասուե̃ն միւսոյն յառաջանայ հետևուի̃ն. բայց ոչ անդրադարձեալ. ո̃ր՝ ոչ է ուղիղ հետևութի̃ս, իսկ անառակն ոչ ծառայէ մամոնայի, ապա ծառայէ ա̃յ. կամ ներհակաբար, իսկ անառակն ոչ ծառայէ ա̃յ, ապա ծառայէ մամոնայի։ Պարզ հաւաքաբանութի̃ն է, որ բաղկանայ յերից միայն ՚ի պարզ նախադասութե̃ց. որգոն, գերագոյն բարին է մեծապէս սիրելի. այլ ա̃ծ է գերագոյն բարի. ապա է մեծապէս սիրելի։

Երկրորդ՝ բաժանի հաւաքաբանութի̃ն ըստ տեսակին ՚ի պէսպէս եղանակս և ՚ի ձևս։ Յայսմ վայրի միայն ՚ի պարզից վերայ մտածեսցուք։

## Պրակ երրորդ.

### Յաղագս պէսպէս չափոց և եղանակաց հաւաքաբանութեանց.

Ամենայն ձևք հաւաքաբանութեան են երեք։ Առաջին ձևն է, յորում միջնորդ եզրն լինի ենթակայ ՚ի մեծագոյնն, և ստորոգեալ ՚ի փոքրագոյնն. որգոն, Ամենայն մոլութիւն է գարշելի, այլ փառասիրութիւն է մոլութիւն. ապա փառասիրութիւն է գարշելի։ Երկրորդ ձևն է, յորում միջնորդ եզրն յերկոսին յառաջարկութիւնսն ստորոգի. որգոն, ամենայն հրահալելի է ծաւալական իբր կռանաւ. այլ ոչինչ քար է ծաւալական ընդ կռանաւ. ապա ոչինչ քար է հրահալելի։ Երրորդ ձևն է, յորում միջնորդ եզրն երկիցս լինի ենթակայ. որգոն, Ամենայն առաքինութիւն է սիրելի. ոմն առաքինութիւն է աշխատալի. ապա ոմն աշխատալի է սիրելի։

Եղանակ հաւաքաբանութեան է տրամադրութիւն առաջարկութեանց յինքեանս իբր ընդհանրութեան և մասնաւորութեան, որա-

ստորասուն և բացասուն։ Արդ՝ չորք են սեռք նախադասութեանց. ընդհանուր ստորասական, ընդհանուր բացասական. մասնաւոր բացասական, մասնաւոր ըստորասական, որք նշանակին չորեքկին ձայնաւորօքս՝ ա. ե. ի. օ։ Այբն ընդհանուր ստորասական. Եչն ընդհանուր բացասական. Ինին մասնաւոր ստորասական. Օն մասնաւոր բացասական, Ամենայն եղանակք հաւաքաբանութե են չորեքտասան, որք են այսոքիկ.
1. Պատկարանք. 2. Ճանդիցի. 3. Ձեռնարկել. 4. Կեռիցող. 5. Ձափեսցես. 6. Պարոտօք. 7. Ձեսանեղ. 8. Կեսչինող։ 9. Ճալապի. 10. Ճարյխսի. 11. Կերապոր. 12. Կեցիսօք. 13. Ճիսափխ. 14. Պրոտարող։
Յայսոսիկ ձայնս երեք ձայնաւորքն նշանակեն զդասաւորութիւն երից նախադասութեանց հաւաքաբանութեան։ ա. նշանակէ զընդհանուր ստորասականն՝ ե. զընդհանուր բացասականն։ ի. զմասնաւոր ստորասականն։ օ. զմասնաւոր բացասականն.
Զորս առաջին ձայնքն նշանակեն

զչորս եղանակս առաջնոյ ձեւոյն։ չորք ձայնքն, որ զկնի՝ նշանակեն զեղանակս երկրորդ ձեւոյն։ Իսկ վեց յետինքն նշանակեն զեղանակս երրորդ ձեւոյն։

Առաջին ձեւն պատուական է քան զայլս զի եզրակացուցանէ զնախադասութիւնս իւրաքանչիւր տեսակի իւրովք չորս եղանակօք. բայց երկրորդ ձեւն ոչ եզրակացուցանէ զնախադասութիւն հաստատական. եւ երրորդ ձեւն ոչ կացուցանէ զընդհանուր եզրակացութիւն։

## Օրինակ առաջին ձեւոյն։

ա Ամ կենդանի է զգայուն Պատ-
ա Ամ մարդ է կենդանի. կա-
ա Ուրեմն ամ մարդ է զգայուն. րանք.

ա Ամ կենդանի է զգայուն. Հան-
ի Ոմն մարդ է կենդանի. դի-
ի Ուրեմն ոմն մարդ է զգայուն. ցի.

ե Ոչ ոք կենդանի է քար. Ձեռ-
ա Ամ մարդ է կենդանի. նար-
ե Ապա ոչ ոք մարդ է քար. կել.

ե Ոչ որ կենդանի է քար. Կե-
ի ոմն մարդ է կենդանի. ռի-
օ ուրեմն ոմն մարդ ոչ է քար։ ցող։

## Օրինակ երկրորդ ձեւոյն։

ա Ա՟մ մարդ է բանական. Զա-
ե ոչ որ ձի է բանական. փես-
ե ապա ոչ որ ձի է մարդ։ ցես-

ա Ա՟մ մարդ է կենդանի. Պա-
օ ոմն քար ոչ է կենդանի. րօ-
օ ուրեմն ոմն քար ոչ է մարդ. տօք

ե Ոչ որ ձի է բանական. Զե-
ա այլ ա՟մ մարդ է բանական. սա-
ե ապա ոչ որ մարդ է ձի։ նեղ։

ե Ոչինչ քար է կենդանի. Կես-
ի ոմն մարդ է կենդանի. չի-
օ ուրեմն ոմն մարդ ոչ է քար։ նօղ.

## Օրինակ երրորդ ձեւոյն։

ա Ա՟մ կենդանի է զգայուն. Ձա-
ա ա՟մ կենդանի է գոյացութի՟ն. լա-
ի ուրեմն ոմն գոյացութի՟ն է զգայուն. պի.

ա Ամ կենդանի է զգայուն․ Դար-
ի ոմն կենդանի է կեցօղ․ ցի-
ի ուրեմն ոմն կեցօղ է զգայուն․ սի․

ե Ոչ ոք կենդանի է քար․ Կե-
ա Ամ կենդանի է գոյացութի․ բա-
օ ուրեմն ոմն գոյացութի ոչ է քար։ պօր․

ե Ոչ ոք քար է բանական․ Կե-
ի ոմն քար է գոյացութի․ յի-
օ ուրեմն ոմն գոյացութի ոչ է բնկան։ սօք․

ի Ոմն կենդանի է բանական․ Դի-
ա Ամ կենդանի է գոյացութի․ սա-
ի ուրեմն ոմն գոյացութի է բնկան․ միս․

օ Ոմն կենդանի ոչ է քար․ Պրօ-
ա Ամ կենդանի է գոյացութի․ տա-
օ ուրեմն ոմն գոյացութի ոչ է քար։ բօղ․

## Գլուխ չորրորդ.

### Յաղագս ցուցման և վերածութեան հաւաքաբանութեանց.

Յատուկ է ամ հաւաքաբանութեց, ցուցանել զօրութիւն նոցա սկզբամբք՝ յորս հաստատին. և յատուկ է անկատար հաւաքաբանութե՝ ի կատարելագոյնն վերածիլ. և փոփոխակի՝ կատարելագունին, զայս յինքն վերածել, և ամի սոցա յանկարելին տարածիլ. յաղագս երկոցունց յատկութեց ասացուք ինչ.

Հաւաքաբանութիւն ցուցանի, յորժամ սկզբունքն, յորս ուղղուի նորա հաստատի, յառաջ բերին. Սկիզբն սորոսական հաւաքաբանութեն է կրկին. այն որք նոյն են ընդ միում երրորդի, են նոյն ընդ միմեանս. Եւ թէ որինչ ասի ընդհանրապէս զենթակայէ, ասի և զիւրաքանչիւրմէ եղելոյ ընդ նովաւ. որգոն, վասն զի ասի ընդհանրապէս զկենդանւոյ՝ լինել կենսաւոր, պարտէ ասել և զամենայնէ եղելոյ ընդ նովաւ

լինիլ կենսաւոր, որպէս՝ զթռչնոց, զչորքոտանեաց, զձկանց, և զնմանեաց։

Սկիզբն բացասական հաւաքաբանութե՟ է նոյնպէս կրկին. ի՟բր, որոց մին է նոյն ը՟ միւում երրորդի, և միւսն ոչ է նոյն, ա՟պք ոչ են նոյն ընդ միմեանս. և թէ որինչ ը՟ համրա՟պ բայսի զենթակայէ բ՟ցսի և զիւրաքանչիւրմէ եղելոյ ը՟ նովաւ։

Վերածութի՟ն է կրկին, Ցուցական, և Յանդիմանական, կամ որպէս սովորութ՟ի է կոչել, առ անկարելին։

Ցուցական վերածութի՟ն է վերադարձութի՟ անկատար հաւաքաբանութե՟ ՚ի կատարեալն։ Անկատար հաւաքաբանութի՟ կոչի, որպէս թէականն, զատականն, ևլ՟ն. և կամ տասն եղանակքն, որք վերածին ՚ի չորս կատարելագոյն եղանակս առաջնոյ ձևոյն նմանութե՟բ սկզբնատառ բաղաձայնի իւրեանց. ի՟բ՝ Զափեսցեսն և Զեսանեզն վերածին, առ Զեռնարկելն։ Կեսչիոզն, Կերապօրն, և Կեցիսօքն առ Կեռիցօզն։ Հալապին, և Հարցիսին առ Հանդիցին, Պարոտօքն, և Պրոտարօզն առ Պատկարանքն։

Այս վերածութիւն լինի սակաւ ինչ փո-
փոխութեամբ· բայց թէ զիարդ լինելոց ի-
ցէ, ցուցանեն բաղաձայնքն, յորս ան-
նշան ձայնս դրոշմեալք զկնի ձայնա-
ւորաց, որք են՝ ս. պ. փ. տ։ Օի Սէն
ցուցանէ զնախադասութիւն նշանակեալ
նախընթաց ձայնաւորաւ, լինիլ անդ-
րադառնալի պարզապէս, Պէն ցուցա-
նէ անդրադառնալի ըստ պատահման։
Փիւրն ցուցանէ թէ պարտ է փոխել
զկարգ առաջարկութեանց, դնելով զմե-
ծագոյնն ՚ի տեղի փոքրագունին։ Իսկ
Տիւնն ցուցանէ թէ այս եղանակ ոչ
վերածի ՚ի կատարեալ եղանակս, այլ
յանկարելին ածի և ապա վերածի։
որ՝ կեսչինօղն վերածի առ կեռլիյօղն·
և թէ որպէս, սէն ցուցանէ թէ զիմ
նախադասութիւն անդրադարձ պարզա-
պէս, լինի Կլեռլիցօղն· զի կեսչինօղ
եղանակն այս է, ոչ ոք քար է կեն-
դանի· անդրադարձ այսպէս, ոչ ոք
կենդանի է քար· յայնժամ լինի եղա-
նակն Կլեռլիցօղ։ Այսպէս և զայլսն վե-
րածեա ըստ ցուցման տառի իւրաքան-

չիւրոյն։ բայց Պարոտօքն, և Պրօտա-
րօղն վերածլին յանկարելին. զի պա-
րոտօքն յիւղիղ ձև իւր է այսպէս, ամ՟
մարդ է կենդանի. ոմն քար ոչ է
կենդանի. ուրեմն ոմն քար ոչ է մարդ։
և վերածի յանկարելին այսպէս, Ամ՟
մարդ է կենդանի. ամ՟ քար է մարդ.
ուրեմն ամ՟ քար է կենդանի։

Վերածութիւն առ անկարելին է, յոր-
ժամ առեալ լինի հակասականն եզ-
րակացութեան զոր ուրանայ ոք. Արդ՝ 'ի
յառաջին ձևն հակասականն եզրա-
կացութեան զոր ուրանայ ոք, առեալ լի-
նի 'ի տեղի փոքրագոյն առաջարկութեան,
և մեծագոյն հաւաքաբանութեան մնայ
նոյնպէս. օրինակ է այս, ամ՟ կենդա-
նի է զգայուն. ամ՟ մարդ է կենդանի.
ուրեմն ամ՟ մարդ է զգայուն։ Եթէ
ոք ընկալեալ զառաջարկութիւնս, և ոչ
ընդունիցի զեզրակացութիւնն, առնումք
զեզրակացութեան հակասականն, իբր ոչ ինչ
մարդ է զգայուն. պահելով մեծագու-
նին յիւրում տեղւոջ, վասն լինելոյն
հաւաքաբանութեան 'ի ձև առաջին. և
կազմեմք զայս հաւաքաբանութիւն հաւա-

նական, որով բունադատեմք զհակառակախօսն ընդունիլ զհակասականն, և պարտիլ. որպ՝ Հակառակախօսն ասէ ոչինչ մարդ է զգայուն. իսկ մեք ասեմք, ամ մարդ է կենդանի. ուրեմն ոչինչ կենդանի է զգայուն:

՚Ի յերկրորդ ձևն պահի մեծագոյնն, և հակասականն դնի փոխան փոքրագունին. որպ՝ ամ մարդ է բանական, ոմն ծիծաղական ոչ է բանական. ուրեմն ոմն ծիծաղական ոչ է մարդ.

՚Ի յերրորդ ձևն փոքրագոյնն յիւրում տեղւոջ պահի, և հակասականն լինի մեծագոյն. որպ՝ Ոչինչ կենդանի է գոյացութի. ոմն կենդանի է զգայուն. ուրեմն ոմն զգայուն ոչ է գոյացութի:

Այսոքիկ կանոնք վերածութե ոչ են ՚ի գործ ածելի, այլ՝ միայն յանկարելին տարածիլն է պիտոյ ՚ի վճաբանութե:

## Պրակ հինգերորդ։

### Յաղագս գտման միջնորդի։

Որպէս ամ եղանակք հաւաքաբանութեանց վերածին ՚ի նախկին չորս եղանակս առաջնոյ ձեւոյն. նոյնպէս և միջնորդք նոցա վերածին ՚ի միջնորդս նոցա։ վասն որոյ պարտ է միշտ միտ դնել միայն միջնորդաց չորից եղանակաց առաջնոյ։ Իսկ սեռք նախադասութեանց, զորոց լինին խնդիրք, թէպէտ են չորք, բայց գլխաւորքն են երկու. ընդհանուր ստորասականն, և ընդհանուր բացասականն. զի զնոցանէ միայն լինի խնդիր ՚ի գիտութիւնս, որք են զընդհանրականաց. և զի մասնաւորք պարունակին ընդ ընդհանրօք իւրեանց։ Ուստի ընդհանուր ստորասականաց, և ընդհանուր բացասականաց առաւելապէս պարտ է միտ դնել։

### Յօդուած առաջին։

Նու արդ՝ առ ՚ի խնդրել՝ թէ ո՞ր իցէ միջնորդ եզրն, պարտ է նկատել զստո-

րոգեալս վերադոյնս քան զենթակայն, և զենթակայս ստորադոյնս քան զստորոգեալս։ Եւ այս լինի երբեմն ելմամբ, և երբեմն իջմամբ։ Ելմամբ յորժամ 'ի միջնորդ ենթակայէ ելանեմք 'ի ստորոգեալն։ Իջմամբ, յորժամ միօք հայիմք յենթակայսն անկեալս ը̄ ստորոգուէ, մ̄ի զորոյ կարէ ասել ստորոգեալն 'ի սահման նորա, 'ի տեսակս անկեալս ը̄ նովաւ. եւն։

## Յօդուած երկրորդ։

### Յաղագս տեղեաց, յորոց ելանեն միջնորդք հաստատաբանութեանց։

Տեղին է շտեմարան, յորմէ հանի միջնորդն հաւաքաբանութե։ Հասարակօրէն են տասն. 'ի պատճառաց. 'ի գործոց. յենթակայէ. 'ի յարակցելոց. 'ի ներհականաց. 'ի նմանեաց. յանուանէ. 'ի սահմանէ. 'ի բաժանմանէ. 'ի վկայութենէ։

'Ի պատճառաց առեալ լինի միջնորդըն, յորժամ գործն ցուցանի պտճռաւ.

կամ նիւթականաւ, որգոն, մարմին մարդկային է մահկանացու․ զի բաղկանայ 'ի հակառակ տարերաց։ կամ տեսականաւ, որպէս մարդն է բանական․ զի բաղկանայ իմացական հոգւոյ։ կամ արարչականաւ, որգոն, խորշակն է հողմ տօթոգին, զի շնչէ 'ի վայրաց, յորս է սաստիկ տապ արեւուն և կամ վախճանականաւ, որգոն, չարաչար գործես, զի գչար վախճան դիտես։

Ի գործոց առեալ լինի միջնորդն, յորժամ ներհակաբար պատճառն ցուցանի 'ի գործոց, որ է բնական կարգ 'ի բնական էակս․ ապա է և նախախնամութեան։ հողմն հարաւոյ է ջերմագին 'ի ձմերայնի, ապա շնչէ 'ի ջերմագին գաւառաց։

Յաղագս տեղեաց, որ 'ի պատճառաց և 'ի գործոց, են այս առածք։ Որպիսի է պատճառն։ այնպիսի է և գործն․ և անդրադարձեալ։ կամ որ ինչ է պատճառ պատճառին․ է պատճառ և պատճառեցելոյն։ Ի բառնիլ պատճառին, բառնի և գործն։ Եթէ է

գործն, է և պատճառն: ՚Ի դնել հարկաւոր և բոլորական պատճառին, դնի և գործն:

Յենթակայէ առեալ լինի միջնորդն, յորժամ լինի զպատահմանէ՝ ցուցանել յենթակայէ նորա, որգոն, Առողջութիւն ոչ է կայուն, զի է յանկայուն ենթակայի: Խոհեմութիւն է առաքինութիւն իմացական, զի է ՚ի միտս:

՚Ի յարակցելոց յառաջ բերել միջնորդըն, յորժամ ցուցանել լինի զիրեն ՚ի պարագայիցն իւրոց, յանձանց. ՚ի տեղւոջէ. ՚ի ժամանակէ, և այլն. որգոն, Պետրոս հանապազ կենակցի ընդ չարս. ուրեմն է չար:

՚Ի ներհականաց առեալ լինի միջնորդն, յորժամ զմինն ներհականաց դնեմք, զի զմիւսն եղծցուք. և անդրադարձեալ. որգոն, է գիշեր. ուրեմն ոչ է տիւ: ջերմութիւն անօսրացուցանէ ուրեմն ցրտութիւն խտացուցանէ: առաքինութիւն է սիրելի. ուրեմն մոլութիւն է ատելի: Այսորիկ տեղւոյ առածք այս են. ներհականաց է ներհական բան, հակադրելք ոչ կարեն լինել միանգամայն:

՚Ի նմանւոյ առեալ լինի միջնորդն, յորժամ ՚ի նմանւոյ նման ինչ ցուցանի. որգոն, Ս՟Ծ զապաւինեալն իւր զշուշան գերծոյց ՚ի զրպարտութե՟. ապա և զքեզ, եթէ կարդայցես առ նա: Օրակային վասն Թագաւորին տայ զանձն ՚ի մահ. զիարդ և ոչ դու վասն ա՟յ: Ս՟ւած տեղւոյս. Նմանեց նման է բան: Յանուանէ երրակի յառաջ բերել միջնորդ: Նախ յորժամ յուցանեմք ինչ զիրէն յանուանադրութե՟ նորա գ՟ր, թէ սերովբէք ջերմագոյն սիրեն զա՟ծ, զի ՚ի կիզմանէ առնուն զանուն. քանզի (սարափին), յեբրայեցւոց լեզու՝ կիզուլ Թարգմանի, թէ հրեշտակք են պատգամաւորք ա՟յ. վասն զի (անկելօսն) ՚ի յոյն լեզու, որպէս և հրեշտակն ՚ի մեր բարբառ, Թարգմանի պատգամաւոր: Երկրորդ՝ յորժամ ՚ի ստուգաբանութե՟ ցուցանեմք անուան պատշաճիլ իրին. որպէս. սիրէ զիմաստութի՟, ապա ուրեմն է իմաստասէր: Երրորդ՝ յորժամ ձեռնարկեմք ՚ի լծորդաց. որգոն, ոչ արար իրաւամբք. ապա ոչ է իրաւասէր: մարդ եմ. ապա ոչինչ մարդկայինն օ-

տար համարիմ յինէն․ ստէպ արբե-
նայ․ ապա ուրեմն է արբշիռ։

Դ․ սահմանաց առեալ լինի միջնորդն, յորժամ սահմանին մերձեցուցանի ստորոգելոյն, կամ ենթակայէն 'ի ցուցանել զերկոցունցն զբաղադանութի՟, կմ՟ զդիմամարտութի՟։ Ո՛րգոն, կենդանի բանականն ընթանայ, այլ մարդն է կենդանի բանական․ ուրեմն մարդն ընթանայ։ Երբեմն առեալ լինի բովանդակ սահմանն․ և երբեմն միայն սեռն ենթակային․ և յայնժամ տեղին ասի 'ի սեռէ․ ո՛րգոն, մարդն է կենդանի, ուրեմն է մահկանացու․ և երբեմն միայն տարբերութիւն դնի, և յայնժամ տեղին ասի 'ի տարբերութէ․ ո՛րպ՟, մարդն է բանական․ ուրեմն է ընդունակ գիտութե։ Այսորիկ տեղւոյ առածք այս են․ որ ինչ ստորասի զսահմանէն, ստորասի և զսահմանեցելոյն․ և որ ինչ բացասի 'զսահմանէն, բացասի և զսահմանեցելոյն․ և անդրադարձեալ զորմէ ստորասի, կամ բացասի սահմանին, ստորասի, կամ բացասի և սահմանեալն, և անդրադարձեալ։

Եւ մասնաւոր վասն սեռին այս աւանդք են. որ ինչ յարմարի սեռին, յարմարի և տեսակին: 'ի բառնիլ սեռին, բառնի և տեսակն: 'ի դնիլ տեսակին, դնի և սեռն. բայց 'ի դնիլ սեռին, ո՛չ դնի տեսակն. զի ո՛չ լինի ասել, է կենդանի, ուրեմն է մարդ:

Տեղին 'ի բաժանմանէ է, յորժամ 'ի բոլորէն զմասունս ցուցանեմք, կամ յում մասանց զբոլորն. կամ 'ի բաց բարձեալ զայլս, զայն ինչ՝ որ մնայ հաստատեցուցանեմք. կամ զինչ լինիլ 'ի բոլորում, զի է յիմիք մասին նորա: Այսորիկ տեղւոյ աւանդք այս են: Եթէ է բոլորն, է և մասն նորա, Որգոն, գոյ մարդ. ուրեմն գոյ և հոգի բանական: Եթէ է 'ի մասին, է և 'ի բոլորում: Որգոն, հոգի գոյ 'ի մասին մարդոյ. ապա և 'ի յում անդամս: 'ի բառնիլ մասանցն ամենայնի, բառնի և բոլորն. Որգոն, Նեռն այժմ ո՛չ է յեւրոպիա, ո՛չ յափրիկէ, ո՛չ յասիա, և ո՛չ յամերիկա, և ո՛չ թուի լինել այլ ուրեք. ապա ո՛չ ևս գտանի ուրեք: 'ի բառնիլ այլոց մասանց, արժէ հետեւողութիւն առ այն,

որ մնայ· որգոն, խոհեմութիւն ոչ է 'ի կամս, և ոչ 'ի բաղձանս, ուրեմն է 'ի միտս:

Տեղին 'ի վկայութեան է, յորժամ վկայութիւն իմաստնոց յառաջ բերի 'ի ցուցումն խնդրոյն: զօրաւոր է այս տեղի յածա-բանութեան, որ հաստատի 'ի հաւատս և 'ի վկայութիւն· այլ ոչ նոյնպէս 'ի փիլի-սոփայութեան, թէպէտ և 'ի սմա չէ ան-գանելի:

Այս տեղիք կոչին հաւանականք և տրամաբանականք· զի ընծայեն զմիջ-նորդս տրամաբանական և հաւանական ձեռնարկութեանց: բայց սակայն և ապա-ցուցական ձեռնարկութիւնք, յորս պատ-ճառք հարկաւորք, և յայտնի բաղա-զանութիւնք, կամ դիմամարտութիւնք ծայրից խնդրոյն հեռաւորին, յամանց 'ի սոցանէ ելանեն· որպէս, 'ի պատ-ճառաց, 'ի բաժանմանէ, և ևս առա-ւել 'ի սահմանէ· որ է իսկական միջ-նորդ ապացուցութեան, եթէ բացայայտ իցէ և յատուկ:

## Գլուխ վեցերորդ։

### Յաղագս պատրանաց։

Պատրանքն է հաւաքաբանութիւն խաբէական բաղկացեալ 'ի նենգաւոր նախադասութեանց, որք զկերպարանս ունին ճշմարտութեան, այլ՝ են սուտ։ Այս խաբէական հաւաքաբանութիւն պատրէ 'ի ձայնս, և կամ յիրս. ուստի երկու է խաբէութիւն. խաբէութիւն ձայնից, և խաբէութիւն իրաց։

Խաբէութիւն ձայնից է, յորժամ ոք առ 'ի պատրել ոչ ուղիղ վարէ զձայնս, այլ առնու 'ի թիւր կողմն։ Որք են եղանակք խաբելոյ 'ի ձայնս. համանունութիւն, երկսայրաբանութիւն, այլայլութիւն բաղադրեալ և բաժանեալ իմացուածոյ, և շեշտումն։

Համանունութիւն է, յորժամ ոք վարի 'ի ձեռնարկութեան համանուն ձայնիւ. որպէս՝ եթէ ոք ձեռնարկեսցէ այսպ, Խոյն է կենդանի. այլ՝ հոյն է խոյ. ուրեմն հոյն է կենդանի. քանզի անունն՝ խոյ, համանունաբար ասի զոչ-

խաբէ նա և զչարախափանակէ. որ և ա-սի հոյ։

Երկայրաբանութիւն է, յորժամ ոք վա-րի այնպիսի ոճով, որոյ է երկայրի իմացուած. որպէս այս, Ասեմ քեզ եակիդէ՝ հռովմայեցւոց յաղթել պիւ-ռոսի, որ միապէս նշանակէ, հռովմայե-ցւոց յաղթել պիւռոսի, և պիւռոսի յաղթել հռովմայեցւոց։

Խաբէութիւն ըստ բաղադրեալ, կամ բա-ժանեալ իմացուածոյ է, յորժամ ոք ձեռնարկէ 'ի բաղադրական իմացու-ածոյ առ բաժանեալն, և կամ 'ի բա-ժանելոյ առ բաղադրեալն. որպէս, որ ունի զկարողութիւն գնալոյ, կարէ ներգործութբ գնալ. պետրոս նստեալ՝ ունի զկարողութի գնալոյ. ուրեմն պետ-րոս կարէ նստեալ գնալ։

Խաբէութի շեշտի է, յորժամ ոք վա-րի ձայնիւ, որ յայլայլութն շեշտին այ-լայլէ զիմացուածն. օրգոն, անարգելն է, որ չէ արգելեալ. այլ նախատելն է անարգել. ուրեմն նախատելն է որ չէ արգելեալ։

Յիրս բազում խաբէութիւնք հանդիպին, որոց գլխաւորքն են են եօթն։ Առաջինն է խաբէութիւն առաջարկութեան, կամ ստորոգելոյն. որ յորժամ ստորոգեալն այլայլէ զենթադրութիւնն, որպէս եթէ ոք ասիցէ, կենդանին է սեւ. այլ մարդն է կենդանի. ուրեմն մարդն է սեւ։ ծիծաղականն է յատկութիւն. մարդն է ծիծաղական. ապա մարդն է յատկութիւն։

Երկրորդ խաբէութիւն է ՚ի պարզապէսէ առ ըստ իմիքն, և անդրադարձել. որ յորժամ ոք ձեռնարկեսցէ յայնմանէ, որ պարզապէս է ճշմարիտ առ ըստ իմիքն. որգոն, Զզէնսն պարտ է հատուցանել տեառն. այլ այս ոք բարկացեալ է տէր այդց զինուց. ապա պարտ է հատուցանել այդմ բարկացելոյ։ Զի թէպէտ մեծագոյնն է ճշմարիտ պարզապէս, այլ ոչ ըստ իմիք. քանզի թէ և զզէնսն բացարձակապէս պարտ իցէ հատուցանել տեառն, այլ ոչ ՚ի դիպուածս ինչ, որ յորժամ իցէ զայրացեալ։

Երրորդ խաբէութիւն է հակասութեան. որ յորժամ մակաբերի հակասութիւն ինչ,

ուր ո՛չ է. որպէս եթէ ոք ասիցէ, Եթովպացին է սպիտակ ըստ ատամանն, և ո՛չ սպիտակ ըստ այլ անդամոց. ուրեմն եթովպացին է սպիտակ, և ո՛չ սպիտակ. ապա հակասականք ճշմարտին յեթովպացին. բայց սուտ է. զի ո՛չ է հակասութիւն նոյնոյ ըստ նոյնոյ.

Չորրորդ խաբէութիւն է զեղծումն ըսկզբան, յորժամ ոք կամի 'ի ձեռնարկելն, կամ 'ի պատասխանելն առնուլ զցուցանելի երկրակացութիւն 'ի միջնորդ կամ 'ի լուծումն. որպէս եթէ ոք յետ յերկար վիճաբանութեան ցուցանելոյ՝ թէ Աստուած իցէ 'ի ստորոգութեան, ցայն վայր հասանէր, թէ 'ի յԱստուած հնար իցէ կերպաւորել զիմացումն սեռական և տարբերական. զոր նախադասութիւն այսպէս ցուցեալ. որ ինչ է 'ի ստորոգութեան, ընդունի զիմացումն սեռական. այլ Աստուած է 'ի ստորոգութե. ապա ընդունի զիմացումն սեռական. լինէր կեղծումն սկզբան, կի ցուցանէր զվերջին նախադասութիւն՝ որոչ ընկալեալ, 'ի ձեռն այնր՝ յորմէ սկսանի վիճաբանութիւն.

Հինգերորդ խաբէութիւն առ՝ հետևութե.

յորժամ ոք ձեռնարկէ փոխադարձութեանս, որք ոչ փոխադարձին. Որգոն, եթէ ընթանայ, շարժի. ուրեմն եթէ ոչ ընթանայ, ոչ շարժի. Եթէ է մարդ, է կենդանի. ուրեմն եթէ ոչ է մարդ. ոչ է կենդանի.

Վեցերորդ խաբէութիւն է՝ ոչ պատճառի իբր պատճառի. իբր յորժամ ոք տայ զգործն այնմ, յորմէ ոչ պատճառի. Որպէս, եթէ ոք ասիցէ, արբենալն է չար. այլ գինին արբեցուցանէ. ապա ուրեմն գինին է չար. Նու եւս՝ հերձուածք են չարք. այլ վասն աւետարանին յառնեն հերձուածք. ապա աւետարանն են: Ոչ է ոչ եթէ գինին է պատճառ արբեցութեան, այլ չարաչար գործածութիւն նորա. եւ ոչ աւետարանն է պատճառ հերձուածոց. այլ չարութիւն մարդկան հալածչաց հաւատոյ, կամ որոց աւետարանին պատրուակաւ խռովեն զհասարակութիւն: Որպ եւ այս, փառասիրութիւն է չար. այլ աշխարհս տայ սիրել զփառս. ուրեմն աշխարհս է չար: ոչ եթէ աշխարհս է պատճառ փառասիրութեան, այլ թիւրել

կամք մարդկան։

Յօթներորդ խաբէութիւն ասի հարց-
ման․ յորժամ ոք զհակակայից միան-
գամայն հարցանելով․ զմի միայն վասն
երկոցուն խնդրէ զպատասխանի․ որպէս
եթէ ոք հարցանիցէ, առաքինութիւն և
անօրէնութիւն բարի՞ իցէ, եթէ չար․
գի եթէ պատասխանեսցէ ոք, թէ է
չար, ասէ 'ի վերայ, ուրեմն առաքի-
նութիւն է չար։

Այն և այլ բազում խաբէութիք, յորս
չէ այնքան ընդ երկար պատաղելի․
այլ միայն զգուշալի են, զի հետևօղք
սոցա 'ի հակառակ արկանեն զանըզ-
գոյշս։

## Յաւելուած Յաղագս ոճոյ։

Երկլին է ոճն. վերլուծական և բաղադրական. զի կրկնակի լինի յառաջանալ ՚ի ճանաչումն ճշմարտութեան, գտմամբ և ուսուցմամբ։ Գտմամբ յորժամ զճշմարտութիւն մերով զգօնութեամբ հանճարեմք. և ուսուցմամբ յորժամ զգտեալն՝ այլոց աւանդեմք։ Ոճն վերլուծական է եղանակ կարգաւ յառաջանալոյ ՚ի գիւտ ճշմարտութեան։ Ասի վերլուծական. զի լուծանէ զխնդիրս յիւրեանց սկզբունս, զգործս յիւրեանց պատճառս, զբաղադրեալս յիւրեանց մասունս, զմասնաւորս ՚ի յընդհանուրս, ընդ որովք պարունակին։ զի խնդիրն սկզբամբք ծանօթանայ, գործն պատճառաւ, բաղադրեալն մասամբք. մասնաւորն ընդհանրիւ։ Ոճն բաղադրական է եղանակ կարգաւ յառաջանալոյ յուսումն ճշմարտութեան։ Ասի բաղադրական. զի հակառակ առաջնոյն՝ յառաջանայ ՚ի սկզբանց առ եզրակացութիւնս, ՚ի պատճառաց առ գործս, ՚ի մասանց առ բոլորն, յընդհանրից

առ մեծամեծորս, այս է 'ի պարզագու-
նից առ բաղադրեալս։ Այլ երկու-
քումբք իսկ լինի նոյն ճանապարհոր-
դութն, բայց ընդ հակառակս։ Մեր-
լուծականն յիրաց առ սկզբունս իրաց
վերանայ։ Բաղադրականն 'ի սկզբանց
յառաջագոյն գտելոց 'ի բացատրութե
իւրոց իջանէ։ Այն է ելք 'ի հովտէ
'ի լեառն. և սա էջք 'ի լեռնէ 'ի
հովիտ։

Եւ այս օրինակ է երկաքանչիւր ոճոյ։
Որք զառաջինն զտրամաբանութի հնա-
րեցին, յառաջագոյն տեսին զտրամա-
բանել մեր երբեմն ուղիղ, և երբեմն
թիւր. յայնմանէ յորդորեցան 'ի հե-
տազօտութի բնութե հաւաքաբանութե, և
'ի ճանաչել զայն՝ լուծին զհաւաքա-
բանութիս 'ի նախադասութիս, և զնա-
խադասութիւնս յեզերս՝ յորոց բաղկա-
նան։ Բայց որք այժմ զտրամաբանութի
ուսուցանեն, ներհակ այնմ՝ նախ ճա-
ռեն զեզերաց. և ապա զնախադա-
սութիւ զբաղադրեալն 'ի նոցունց՝ բա-
ցատրեն և հուսկ յետոյ զհաւաքաբա-
նութիւն։

## Զօրք հանրականք ուժոյ ընդհանրականի ատաղ-ձին.

Նախ՝ 'ի դիւրագունից, 'ի յայտնագունից, և 'ի մերձաւորագունից պէտ է միշտ առնել զսկիզբն, և 'ի նոցանէ առ սակաւ սակաւ, և աստիճան քան զաստիճան յառաջանալ առ դժուարագոյնս՝ առ մթագոյնս, և առ հեռագոյնս։

Քանզի այսու օրինակաւ, առաջինքն ճանապարհորդեն, և դիմեցուցան առ յետինսն, և ծանուցանէ ճշմարտութիւն՝ ճահ առաջի կրէ՝ լուսաւոր լինիլ անծանօթ իրին՝ հուպ իւր եղելոյ. և սա ևս այլում. և նոյնպէս մի ըստ միոջէ։ Զայս կարգ պահեալ, 'ի դուզն ճշմարտութէ յայտնի ծանուցելոյ, իբր 'ի գուզնաքեայ սերմանէ. այլ անթաւք մի զմիոյ զկնի, սքանչելի իմն կարգաւորութբ բողբոջեն։ Որպէս պատմի զսոկրատայ, եթէ զմանուկ տխմար հարցեալ կարգաւ 'ի սուղ ժամանակի ժամանեցոյց 'ի դժուարին խնդրոյ ճանաչումն։ Նոյնպէս և երկրա-

չափք սակաւ սկզբունս հասարակս, և ամենեցուն ծանուցեալս ունեն առաջի. զորս ըստ կարգի ճառեալ՝ անբաւ ճշմարտութիւնս խրթնածածուկս յայտ յանդիման երևեցուցանեն։

Երկրորդ՝ Պարտ է պահել զբնական կարգ իրաց, և նմա յարմարել զարհեստականն ըստ կարի։ Քանզի այսու օրինակաւ՝ միայն ՚ի միասին խուռովի բղխմամբ՝ դիւրաւ և հեշտեաւ յառաջանայ ՚ի ճանաչումն նոցա։

Երրորդ. Պարտ է ճանաչել զիրս ըստ ամ մասանց, և զստորոգելիսն որոշել ՚ի ձեռն բաժանման, և վերացուցման, և զիւրաքանչիւրն ուրոյն յիւր տեղի դասաւորել սահմանեալ ՚ի նոսա զկարգ և զբաղադրութի, եթէ ոչ գուցէ իրօք։ Քանզի դիւրագոյն ճանաչեմք զսակաւս քան զբազումս. և զբազումս ընդ միմեանս կարգեալս, և և բաղադրեալս, քան զշփոթեալս և զցրուեալս։

Չորրորդ, զանպիտանս և զօտարոտիս պարտ է ՚ի բաց հատանել, յաւեալ միայն ՚ի նպատակն. յոր դիմեմք։

Օ՜հ ուշադրութիւն մտաց անպիտանեօք խամրանայ. և օտարոտուղ ՚ի յառաջ եղելոյն խոտորի. և դեգերեալ ընդ բազմօք, իբրև ուղևոր թափառեալ ՚ի դաշտս, կամ ոչ երբէք՝ կամ անագան ուրեմն յելս ժամանէ։

Երեք կանոնք յաղագս Վերլուծական ոճոյ,

Ըստ հետևողութեան Ճշմարտութեան, գրեթէ զերիս պարբերի. քանզի կամ առաջակայ խնդրոյն Ճշմարտութիւն, կամ ստուգութիւն խնդրի։ Կամ գործոյն ծանուցելոյ՝ արարչական պատճառն անծանօթ. և կամ բաղադրեցելոյն անորոշ ծանուցելոյ մասունքն, սկզբունքըն և ՚ի նոցունց բղխեալ յատկութիւնք։ Արդ՝ ՚ի խոյզ սոցա՝ պզօնութիւն մտաց առաւել նպաստէ, քան կանոնք։ բայց սակայն և կանոնս ինչ սահմանել ՚ի դէպ է։

Նախ պարտ է մտադրութեամբ հայիլ, թէ զինչ խնդրի. և յայն միայն պարտի դիմել ամ փոյթ քննողին։ Օ՜հ որ ոչն գիտէ, զինչ խնդրէ, և ոչ՝ թէ

գտանէ, ճանաչէ. և որ զբազմօք դե-
գերի. հազիւ երբէք 'ի նպատակն
հասանէ:

Երկրորդ՝ Պարտ է հայիլ յիրն, զոր-
մէ խնդրի ինչ. զնորա զա̅մ զգիարդն
զհանգամանս, և զպարագայս հետազօ-
տել, և զնա 'ի մասունս, և 'ի մա-
սանց մասունս. և 'ի ստորոգելիսն ո-
րոշեալ. Զի յայսմ կայանայ, և յայս-
մանէ էառ զանուն այս ոճ վերլուծա-
կան, իբրև զի զիրն մանրամասն քա-
կէ, զի զնորա պատճառսն և զսկզբ-
բունսն քննեսցէ, և իբրև թէ 'ի փո-
քոտեաց նորա 'ի դուրս հանցէ:

Եթէ խնդիր ինչ իցէ, պարտ է լու-
ծանել յեզերս իւր. և զեզերսն յիւր-
եանց սեռս և 'ի տարբերութիւնս. և ըզ-
սոսա ևս անդրագոյն. որչափ պիտոյն
իցէ. մինչև հասու լինիլ իսկութեան նորա:
Եթէ գործ ինչ իցէ. բազմադիմի
փորձիւ պարտ է հետազօտել, զա̅մ
պարագայսն նկատել. և զնովաւ առ-
նել զգուշութիւն ը̅ս̅տ կարի: Եթէ բոլոր
ինչ իցէ, պարտ է լուծանել յա̅մ մա-
սունս, և 'ի մասանց մասունս: Ն. յա

բաժանումն իբր 'ի բազումս մտօք լինի. բայց և երբեմն իրօք: Նոյնպէս անդամնաղնելիչն զդի կենդանւոյն յօշէ. և արուեստն քիմիական լուծանէ զհրահալելիս, և զայլ նիւթս սուսերաւ հըրոյ: Նա ոչ միայն մտածել պարտ է զգործն, և զբաղադրեալն ըստ որում բացարձակ և կատարեալ, այլ 'ի բուն ծագմանէ մինչև ցելս պարտ է քննել, որպէս լաւագոյն ճանաչէ զկենդանին որ զնկարիլ նորա յարգանդի, և անտի անցեալ յառաջ զելս, և զլուծանիլ նորա նկատէ:

Երրորդ. Զգուշութիւն պարտ է հայել յիւրաքանչիւր մասունս, և զի միմեանըս համեմատել: և իբրև ճշմարտութիւն ինչ յայտնի յայսմ համեմատութենէ, և 'ի հայեցուածոյ ցոլացեալ երևեսցի, զայն իբրև զկայծ ինչ խնամել, և արծարծանել, այլ ևս յայնմ ճշմարտութենէ կարգաւ յառաջ հանեալ. մինչև 'ի ժամանել յայն, զոր խնդրեմք:

Զի որպէս յառաջ յիշատակեցաք, ըսքանչելի իմն է կապակցութիւն ճշմարտութեանց, զի զմի ինչ ուղիղ՝ ածեալ ըզ-

մտաւ, այլ անբաւք 'ի նմանէ 'ի յայտ բերին։ Օրինակօք զկանոնս յայտնի ընծայեսցուք։ Առաջի արկանի խնդիր ինչ, թէ արդեօք տրամաբանութին իցէ՞ տեսական։ Նախ. հայիմ թէ զինչ խնդրի. յայտ է թէ սկիզբն ինչ բացայայտ այսց ծայրից զուգաւորիչ, կամ բաժանարար. Երկրորդ լուծանեմ զխնդիրն յեզերս իւր, և զեզերսն 'ի սահմանս իւրեանց՝ այսպ՝ տեսականն է, որ միայն դիմէ 'ի Ճանաչումն Ճշմարտութե։ Տրամաբանութին է մակացուն ինչ, որ ուղղէ զմիտս 'ի Ճանաչումն Ճշմարտութե։ Յայնմ հետէ դիմելով 'ի նպատակն, զայս ինչ յառաջ բերեմ. թէ բովանդակ տրամաբանութին դիմէ 'ի Ճանաչումն Ճըշմարտութե. ապա յայնմանէ զայն ինչ զոր խնդրեմ. թէ միայն դիմէ 'ի Ճանաչումն Ճշմարտութե։ Զի ահա այս լուծանէ զխնդիրն. եթէ տրամաբանութին իցէ տեսական, ապացուցանէ. Դարձեալ՝ խնդրի արարչական պատՃառ մարդոյ. Նախ՝ հայիմ՝ թէ զինչ

խնդրեմ. յայտ է եթէ զսկիզբն, յորմէ իցէ արտադրել բաղկացուցիչն բնութեան մարդոյ: Երկրորդ, տրոհեմ զմարդն ՚ի մասունս. այսինքն ՚ի հոգի. և ՚ի մարմին: ՚Ի հոգւոջ զբանն. և ՚ի մարմնի զսքանչելի յօրինուած մասանց նը-կատեալ: Այսմ տեղ յայտ յանդիման տեսանեմ, զի արարչական պատճառ մարդոյ հարկ է թէ իցէ իմացական ինչ, առ ՚ի կարող լինելոյ տալ զմիտս և գերիմաստ առ ՚ի կարող լինելոյ այնպէս իմաստնապէս զմասունս մարմնոյ յօրինել: Երրորդ, առաւել ևս զայս ճըշմարտութիւն յառաջ խաղացուցեալ՝ տեսանեմ, զի այսպիսի կատարելութիւնք ոչ պատշաճին մերձաւոր արարչական ըն-կզքանց մարդոյ՝ հօրն և մօրն. ապա յայնմանէ մակաբերեմ, թէ է բարձրագոյն ևս արարչական սկիզբն մարդոյ. այսինքն միտ գերիմաստ հանճարոյ ունակ: Այս ոճ՝ կարեմք դարձ առնել ՚ի պատճառէն ծանուցելոյ ՚ի գործն՝ առ լիագոյն զայն ճանաչելոյ, կամ առ ՚ի զնմանէ յայտնելոյ, որպէս թէ յայն ամենիմաստ միտաց ոչ միայն մարդիկ,

այլ և՝ այլ իրք յառաջ եկեալ են և կառավարին. որպէս երկինք, աստեղք, տարերք, տունկք ևն. և զայս ամ̃ ՚ի վերստին քննեալ, յորոց ըն̃արձակագոյն ես զայսր ա̃ծային մտաց զճանաչումն ՚ի մեզ ընդունիմք, և փոփոխակի յայնմանէ բազում ինչ զմարդկայնոց և զբնականոց.

Դարձեալ խնդրեն սկզբունք մարմնոյ կենդանւոյ. Նախ հայիմ, եթէ զինչ խնդրի, զի ոչ խնդրեմ զպատճառն արարչական և ոչ զխախճանական, այլ զնիւթական և զտեսական. Երկրորդ՝ լուծանեմ զբաղադրեալն զայն ՚ի մասունս իւր. և զնոսա ես յայլս, մինչև ժամանեսցուք առ մասունս. զոր ուրոյն ուրոյն պարտ է քննել. Եւ առ լիագոյն ճանաչումն, զնոցա զառաջին կերպաւորութ̃ի ՚ի մասնաւոր ինչ պարտ է հետազօտել. փ̃ զձագումն՝ ՚ի ձուոջ. Օ՛ այս ամ̃ եթէ անձամբ վճարել չես բաւական, ՚ի փորձս այլոց հայեսջիր, բայց կարդաւ, որպէս եթէ անձամբ զայս առնեիր.

Այս ոճ, որպէս ասացաք, պահի 'ի յաւանդելն զգիտութիւն՝ զյառաջագոյն գտեալս։ Կանոնք սորա են դիւրագոյն։

Նախ. պարտ է վարիլ մեկն, և ուղիղ բացատրեալ և սահմանեալ եղերօք։ Քանզի սոքա են սկզբունք բովանդակ գիտութեան. ուստի եթէ իցեն մթին, շփոթ, և երկդիմի. ոչինչ բացայայտ 'ի նոցանէ կազմի։

Երկրորդ. Յեղերաց յայտնի ըմբռնելոց պարտ է յօրինել զնախադասութիւնս ըստ ինքեան ծանուցեալս, զի լինիցին պայծառ սկզբունք ուսանելեաց։

Երրորդ՝ յըստ ինքեան ծանուցեալ սկզբանց ուղիղ ձևով դասաւորելոց՝ պարտ է յառաջ բերել զմերձաւորագոյն եզրակացութիւնս, և յայնց ընդ կարգի զայլս. և չէ պարտ երբէք 'ի մէջ բերել զնախադասութիւն ինչ, որ չիցէ կամ ընդ ինքեան ծանուցեալ, և կամ յայլմէ ընդ ինքեան ծանուցելոյ յառաջ եկեալ։ Քանզի այլազգ՝ ոչինչ յայտնա-

պէս եզրակացուցանի։ Եւ զի ոչ յամի ՚ի պատրաստի կան այդպիսի նախադասութիւնք, զհաւանականս հարկիմք երբեմն ՚ի մէջ բերել։ Բայց յայնժամ ոչ ապացուցանեմք, այլ միայն հաւանեցուցանեմք։

Չորրորդ. Որ ինչ ՚ի սեռն վերաբերի, գայն պարտ է ճառել յառաջ քան զիջանելն առ տեսակն, և ապա աստիճանաւ զվերաբերեալս մերձաւորագոյն տեսակաց։

Հինգերորդ, պարտ է խորշիլ ՚ի ճապաղելոյ զբանն, փոյթ մեծ ունիլ վասն համառօտութեան, այլ մեծագոյն ևս, վասն յայտ յանդիմանութեան, որպէս և վասն բաղադանութեան, յօրինեալ զամենայն ըստ կարգի, և զիւրաքանչիւրսն իւրեանց յօդիւք ընդ միմեանս աղխաղխեալ։

Այլ զայս ձոխագոյնս մեկնել ոչ ինչ է պիտոյ։ Բայց յաղագս կանոնաց տրամաբանութեան ցայս վայր։

## Յօդուած երկրորդ։

### Յաղագս թէ զինչ, չափ բաժանելապէս իցէ տրամաբանութեան։

Տրամաբանութիւն նախ ցուցանէ զառաջին մասն փիլիսոփայութեան, որ սահմանի, Տրամաբանութիւն է փիլիսոփայութիւն ուղղիչ ներգործութեանց մտաց։ Երկրորդ զմակաբերող միտս, որ մակաբերէ զմի ինչ յայլմէ, զոր ունիս տեսանել 'ի ձեռնարկութեան

## Գլուխ եօթներորդ։

### Յաղագս առարկայի տրամաբանութեան։

Առարկայք տրամաբանութեան են երկու, նիւթականն եւ տեսականն. Նիւթականն առարկայ տրամաբանութեան են իրական էակք ծանուցեալք 'ի մէնջ, իսկ տեսական առարկայ նորա է էակն բանի։
Դարձեալ բաժանի տրամաբանութիւն յուսուցանող եւ 'ի գործածող։ Քանզի

նոյն ներգործութիւն լինի միանգամայն ուսուցանող և գործածող: Լինի ուսուցանող, ըստ որում աւանդէ զկանոնս ինչ: Իսկ լինի ՚ի գործածող, ըստ որում յաւանդելն զայնս պահէ զկանոնս, զսահմանեալսն այլուր: Օ֊ի տրամաբանութիւն ուսուցանող և գործածող ոչ են երկու ունակութիւնք իրապէս զանազանեալք, այլ երկու գործողութիւնք մի և նոյն ունակութեան, որպէս թէ նոյն գիտութիւն իցէ· որ զկանոնս մեկնէ և զնոսա ՚ի գործ դնէ:

## Յաղագս գաղափարին,
## Որ է հերող զգալի իրաց։

Գաղափարք և ծանօթութիւնք ՚ի բնէ իւրեանց կարեն լինել նկարագիր կամ աննկարագիր. պարզ կամ յօդուածոյ, Թանձրացեալ և վերացեալ. և այլն։

Նկարագիրք, որ պատկերս ինչ ՚ի դէմս բերեն, և յատուկ կոչին գաղափարք. որպէս են ձևոյն և գունոյ՝ և ամի՝ որում կից է գաղափար տարածութե. յորոց սակի են ըստ մասնէ և ձայնք։

Աննկարագիրք են, որ ոչ կից ունելով զգաղափար տարածութեան ՚ի բնէ, ոչինչ պատկեր առաջի առնեն. վասն որոյ և փոխանակ գաղափարի ծանօթութիւն անուն տամք նոցա. որպէս գոն նախ՝ հոտոցն, համոց, ջերմոյ, ցրտոյ, քաղցի, ծարաւոյ՝ հեշտութեան և ցաւոց։

Երկրորդ՝ ամենայն զօրութեանց՝ կրից և ներգործութեանց հոգւոյն։

Երրորդ՝ առաքինութե և չարութե, գիտութե և ագիտութե, ճշմարտի և ստոյ,

և այլոցն ամենեցուն, որոց ո՛չ գոյ թանձրացեալ բնութ՟ հաստատուն արտաքոյ մտաց, անուանին իմանալի կմ՟ բարոյական էակ․ սոքա որոշին յայնցանէ, որոց ըստոյգ էութ՟ է ՚ի բնութ՟ իրաց․ և կոչին զգալի կամ բնական էակ։

Ծանօթութ՟ք և գաղափարք մերկ աւանձին տեսեալք, պարզ ասին․ որպէս հոտոյ՝ գունոյ կամ ձայնի։ Իսկ յօդուածոյ գաղափար է, յորժամ յանդիման առնիցեն զբովանդակութ՟ բակում գաղափարաց կամ ծանօթութ՟ց միաւորելոց․ որպիսի են գաղափարք մարմնոց յորս բովանդակին գաղափարք տարածութ՟, սերտութ՟, ձևոյ, գունոյ և այլք․ և ո՛չ ծանօթութ՟ք բարոյական էակաց, որպէս արդարութ՟ անիրաւութեան, ողորմութ՟ անողորմութ՟։

Յորժամ պատահմունք և գոյացութ՟ք խառն են, ասին թանձրացեալ․ իսկ յորժամ վերացուցանեմք զպատահմունս ՚ի գոյացութ՟է, ասի վերացեալ․ որպէս թէ անենթակայ և ինքնակաց․ որ՝ սպիտակ է թանձրացեալ և սպիտա-

կուն վերացեալ։ Հասարակօրէն թանձրացեալ գաղափարք և ծանօթութիւնք ածականօք յայտնին. որպէս գնտակ արծաթի սաւի սպիտակ և բոլորակ, յորժամ այն հանգամանք 'ի գնտակին մտածին։

Իսկ յորժամ պէտք իցեն խօսելոյ ըզյատկութէ սպիտակն գունոյ և բոլորակ, վերացուցանի յառ ենթակայէ։ Թանձրացեալ գաղափարք այնց յատկութեց կոչին գոյական անուամբք բոլորակութին և սպիտակութին։

Կան որոյ գոյականք, որք ոչ յայտնեն զբնութիւն ճշմարիտ, անենթակայ անուանք են, յայտնիչք վերացեալ ծանօթութեց և գաղափարաց. որպէս հոտ, համ, ձայն, գոյն, նոյնութին, զանազանութին, հաւասարութին, անհաւասարութին, գեղեցկութին, տգեղութին, առաքինութիւն. և այլն։

## Ցանկ այսր Տրամաբանութեանս

Առարկայք տրամաբանութեան՝ երկու՝ նիւթական և տեսական. 230։
Առարկայ գիտութեան է մի ըստ ինքեան. 112։
Առընչութիւն է պատահումն. որոյ բոլոր գոյն է. 34. և 115։
Առնելութիւն է պատահումն, որով ենթակայ դնի. 39. և 148։
Ամ եղանակք հաւաքաբանութեան են չորեքտասան. 195։
Աղիւսակ հակադրութեանց. 173։
Աղիւսակ եղանակաւոր նախադասութեանց. 179։
Անդրադարձութիւն է փոխադարձութիւն նախադասութեանց. 175։
Առընչութիւն անփոխադարձ՝ ոչ եղերի առ իմն. 126։
Ամ ձեւք հաւաքաբանութեան են երեք. 194։
Այլ ստոյգ տարբերութիւն է հնգին. 74։
Առ ի խնդրելն թէ, ո՞ր իցէ միջնորդ եզրն. 204։
Աստուած ոչ պարունակի ի ստորոգութեան գոյացութեան. 101։
Բաժանումն եղերաց. 6։

Բաժանումն է բան որ բաժա-
նէ զբոլորն 'ի մասունս. 64:

Բաժանումն հաւաքաբանութեան ը̄-
հանրապէս. 188:

Բազմութիւն է ևս կրկին՝ գերա-
զանցական և քանակական 111:

Բաղադրեալ նախադասութիւն է
որ բաղկանայ. 165:

Բանն ևս ոչ է յատուկ տեսակ
քանակութեան. 109:

Գոյացական սեռք և տեսակք ը̄
միմեամբք եղեալ. 92:

Գոյացութիւն է էակ ը̄ ինքեան
ենթակայացեալ. 96:

Գոյացութիւն բաժանի յառաջին
և յերկրորդ. 98:

Գիտութիւն հասարակութեան և յատ-
կութեան ընդհանրից. 83:

Գործել տարբերութիւն և յատուկ. 71. 75:

Գործեալ նոյն իր բաղդատել
առ այլ և այլս. 113:

Գործեալ խնդրի արարչական
պատճառ մարդոյ. 225:

Գիտողական կարողութիւն է ե-
րևակերպականն. 146:

Գտնեմք աստանօր զչորս կանոնս
ստորոգութե. 156.
Գրական եզրն է այն, որ ունի
զլինելութի էութե. 7. 87.
Եզրն է այն, յոր լուծանի նախադասութին. 2.
Եզրն է նշան իրի, պարզ ըմբռնմամբ ընկալեալ. 2.
Եզրն միաւոր է նշան տեսական՝ իրին մտօք. 4.
Եզրն ըստ եղանակի նշանակելոյն բաժանի. 10.
Ենթադրութին բաժանի նախ ՚ի
նիւթական և" 14.
Ենթադրութին տրամաբաշխական. 15.
Եղանակք ունելոյ են հինգ. 61.
Երեք են գլխաւորք կանոնք
յորջորջման. 24.
Երեք են յաւիտենականք իբր
գոյական. 26.
Երեք են սեռք հիմանց առընչութեան. 121.
Երբեմն է պատահումն իրի՝ յայնմանէ. զի է ՚ի ժամանակի. 42. և 153

Եղական գործօղն, եղական գործողութիւն. 160։
Ե՞ն և այլ բազում խաբէութիւնք. 217։
Երեք են յատկութիւնք նախդասութ. 171։
Երեք կանոնք յաղագս վերլուծական ոճոյ. 222։
Զերիս յատկութիւնս որակութեան թուէ արիստոտէլ. 143։
Զի և գլխարն եակ դնէ մին. 6։
Զորկ. ին որակ ասէր արիստոտէլ. 157։
Զքանակութին քանակ ասէր ՚ի տեղի վերացելոյ. 157։
Զգուշու՛թ պարտ է հայիլ միւ-րաքանչիւր մասունս. 224։
Էակն և մին անդրադարձին առ միմեանս. 128։
Ըմբռնումն եղերաց. 1։
Ընդհանրից չորկին յատկութիւնս տան տրամաբանք. 70։
Թուական անուանք բացարձակք. 32։
Թիւն է յատուկ տեսակ քանակութ. 109։
Թիւն բաղկանայ ՚ի բազում շա-րունակ քանակութեանց. 112։
Թէ զինչ իցէ վերացուցանելն յանհատական Թէութեանց. 158։

Ժամանակն ոչ է յատուկ տե-
սակ քանակութեան. 108։
Ի սահմանոյ առեալ լինել միջնորդն. 209։
Իրական էակ և էակ բանի. 87։
Լայնութիւն ներգործութիւն և օտարացուցութիւն. 21. 22։
Կանոնք անդրձութեան են երեք. 177։
Կայն է տրամադրութիւն մասանց
իրեն 'ի տեղւոջ. 152։
Կերպութիւն է պատահումն, որով
ենթակայն 41. և 149։
Կարողութիւն և անկարութիւն. 145։
Կիրք և կրական որակութիւն 146։
Կրկին է ոճն՝ վերլուծական
և բաղադրական. 218։
Համանգամայնութիւն եւս է հըն-
գապատիկ. 59։
Համեմատ անուանք են որք ըստ
համեմատութեան. 54։
Հակադրութիւն է չորեքկին. 57։
Հինգ եղերքս զանազանին 'ի
միմեանց. 49։
Հոմանունանք են, որք անուամբ
միայն հաղորդին. 54։
Հինգ կանոնք բաղադրական ոճոյ, 228։

Հաւաքաբանութիւն և եւս սահմանի այսպէս. 185։
Հաւաքաբանութիւն կերպացեալ և անկերպ. 189։
Հաւաքաբանութիւն. որպէս և անունն իւր ցուցանէ. 173։
Հինգ յատկութիւնս առընչութեան թուէ արիստոտէլ. 152։
Հասարակ գոյացութեան է էակն գոլ. այլում գոյա''. 83։
Հասարակ երբի է պատահումն գոլ այլում երբի''. 85։
Հակաստորոգ և անհակաստորոգ եղերաց 86։
Հինգ եղերք են պորփիւրի. 27։
Հինգերորդ կանոն ը̄ հանրագոյն. 20։
Ձայն՝ գաղափար և իր. 6. 90։
Ձայնաւոր եղրն է ձայն ը̄ հաճութեան մարդկան. 5։
Ձեռնարկութիւն է բան, յորում մի ինչ յայլմէ մակաբերի. 180։
Միայն քանակութեան յատկութիւն բաժանիլ. 111։
Մնայօղ քանակութիւն բաժանի 'ի տարորոշն և 'ի շարունակն. 106։

Միութին է կրկին, գերազանցա-
կան և քանակական· 110։
Յղգս յորկութեց առընչութե· 132։
Յաղագս յորկութեյ քանակութե· 113։
Յաղագս յորկութեյ առնելութե· 149։
Յառաջնութիք են հնգապատիկ· 58։
Յուկն է որ ասի զմիոյ միայնոյ· 75։
Յատկութիք եզերաց· 12։
Յենթկայէ առել լինի միջնորդն· 207։
Յիրս բզւմ գտնին խաբէութիք· 212։
Նախադասութին է յայտարարութի
իրի իմիք· 161։
Նախադասութթին 'ի նիւթում
բնականի· 18։
Նախադասութին բաժանի 'ի բա-
ցարձակն և յեղանակաւորն· 168։
Շարժումն ոչ է յատուկ տե-
սակ քանակութե· 107։
Շարժումն է անցումն 'ի միոյ
որպիսութէ յայլ· 60։
Որակութին է պատահումն եղա-
նակաւորիչ իրին յինքեան։ 36։
Որակութին բաժանի 'ի բնական
և յարհեստական· 39։
Ունիլն է պտհումն ծագել 'ի

շրջարկումն զգեստուց· 43։

Ուրն է պատահումն երբ՝ յայնմանէ, զի է 'ի տեղւոջ· 150։

Որ ինչ ստորոգի զստորակայից իւրոց· 157։

Զօրք զոյգ տեսակաց որակութեան· 135։

Զօրք կանոնաց ոճոյ ընդհանրապէս աւանդելոյ· 220։

Պատրանք· 212։

Պատահումն· 80։

Պարզ նախադասութիւն· 164։

Սահման· 62։

Ստորոգութիւն պարագրութեան· 151։

Ստորոգութենական առընչութիւն· 118։

Սեռ, Տեսակ, Տարբերութիւն, և Յատուկ· 47։

Սեռն է բոլոր· 45։

Սեռն կարէ լինել տեսակ· 88։

Ստորոգութիւն նախ բաժանի· 44։

Սահման և բաժանումն նշանի· 3։

Վեց յատկութիւնք գոյացութեան· 102։

Վերացուցումն 67։

Վերածումն առ անկարելին· 202։

Վեցերորդ խաբէութիւն է՝ ոչ պատճառի իբր պատճառի։ 216։

Տասն ստորոգութիւնք արիստոտելի· 30։

Տարբերութիւն բաժանի 71։
Տեսակներ մտորի առընչութեան․ 128։
Տեսակ և Ձև որակութեան․ 142։
Տեղին է շտեմարան․ 205։
Տեղին ՚ի բաժանմանէ․ 210։
Ցուցումն և վերածումն հաւա-
քարանութեանց․ 109։
Փաղանուն․ 9։
Փաղանուանք են, որք․ 53։
Փոխադարձ առընչութիւն իբր ՚ի
բաղումն․ 123։
Փոխադարձ առընչութիւն բաժնի․ 124։
Փոխադարձ առընչութիւն եզերի․ 125։
Քանակութիւն է պատահումն տարածող․ 104։
Օրինակ առաջին ձևոյն․ 196։
Օրինակ երկրորդ և երրորդ ձևոյն․ 197։

Օսխալանս տառից և բառից յանձն առնեմք բանասէր եղբարց ըստ իմաստից բանին ուղղել ինքնին, որոց գլխաւորն է՝ եր․ 6․ տող․ 21․ իբր նշանակեալ․ և վերաբե․ — որ պիտի լինել՝ իբր նշանակեալ․ եղանակ նշանակելոյ․ և վերաբե։

ՎԱԽՃԱՆ։

Անուանք բանասէր անձանց բարեհաճութեամբ իւրեանց նպաստամատոյց եղելոց ՚ի տիպ մուծանելոյ զայս Տրամաբանութիւն։

| | Օրին. |
|---|---|
| Մովսէս Վարդապետ Հասան Ջալալեանց։ | 1 |
| Յովսէփ Վարդապետ Հասան Ջալալեանց։ | 1 |
| Սիմէօն Վրդպտ Տր Յօհաննիսեանց։ | 1 |
| Երեմիայ Քահանայ Մէլիք Ալահվէրտեանն Հասան Ջալալենց։ | 1 |
| Անդամ Կանսիստորէի և Գանձապետ Աւետիք Քահանայ Տէր Սարգսեան։ | 2 |
| Անդամ Կանսիստորէի Խաչատուր Քահանայ Տր Յօհաննէնց։ | 1 |
| Գրիգոր Քահանայ Մեսրոբ Եպիսկոպոսեան։ | 1 |
| Յօհաննէս Քահանայ Մինաս Վարդապետեան։ | 1 |
| Աւագ—Սարկաւագ և Վ րժպետ Հայոց լեզուի Գրգր Տր Աւգենց։ | 2 |
| Աւագ Սարկաւագ Անդամ Բէլուբէկեանց։ | 1 |

| | |
|---|---|
| Ռ.ւագ — Սարկաւագ Գասպար Մարտիրոսեն Բարհանեանց։ | 1 |
| Տիրացու Գրիգոր Հասան Ջալալեանց։ | 1 |
| Տիրացու Հաբէլ Ղազարեան, | 1 |
| Տիրացու Հայրապետ Բռնածոյուլ։ | 1 |
| Տիրացու Գուլիթ Տէր Յօհաննիսեան։ | 1 |
| Տիրացու Եղիայ Տիրացու Բագտասարեան Եղիազարեանց։ | 1 |
| Տիրացու Սահակ Սահարեն Ղազարեանց։ | 1 |
| Տիրացու Պետրոս Յարութեան Կենջեցի։ | 1 |
| Տիրացու Գրիգոր Չմշատինեցի։ | 1 |
| Տիրացու Ոստակէս Տէր Պօղոսեան Տէր Եսայեանց։ | 1 |
| Տրց. Ռ.Ծատուր Տէր Թադէոսեան, | 1 |
| Տիրացու Դանիէլ Յակոբեան Տէր Յարութիւլ։ | 1 |
| Տիրացու Կարապետ Հախինեանց, | 1 |
| Տիրացու Յօհաննէս Տէր Գաբրիէլեան։ | 1 |
| Տիրացու Յակոբ Տէր Կարապետեան Ոսապէլեանց, | 1 |

| | |
|---|---|
| Յովանէս Ապրէսեան Հասան Ջալալեանց։ | 1 |
| Մելիք-Բէկ Աբրահամ-բէկեան Հասան Ջալալեանց։ | 1 |
| Աւետիք Բապայեն Հասան Ջալալեանց։ | 1 |
| Մուսայել Մելիք — Ղահրամանեն Մելիք-Միրզախանենց։ | 1 |
| Համբարձում Սարուխանբէկենց։ | 1 |
| Նահապետ Տէր Յօհաննէն Սամիկոնեանց։ | 1 |
| Աւետիս Յարութիւնեան Մելքումեանց Շուշուաքաղաքայի | 1 |
| Բարսեղ Թումանենց 'ի Ղզլըմ։ | 1 |
| Մահտեսի Պապաճան Թառումով։ | 1 |
| Աւշար Ջալթ-բէկեն Աւշրենց։ | 1 |
| Ղազար Պապայեան։ | 1 |

Հ.Ս.Խ.Հ. ... ԳՐԱ...
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱ...



123

1234567

789

